

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՏԱԿ ՀԱՄԼԵՏԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՄՆ-ի ԲԱՂԱԲԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԻՍՐԱՅԵԼԱ - ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ
ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ:

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՐԶ

ԱՅԾԵՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՏԱԿ ՀԱՄԼԵՏԻ ՀՈՎՀԱՆՆԻՄՅԱՆ

ԱՄՆ-ի ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԻՍՐԱՅԵԼԱ-ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ

ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ:

18598
A II

Խմբագիր՝ պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Ն. Հ. Հովհաննիսյան

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ:

Աշխատության մեջ քննարկվում է իսրայելա-պաղեստինյան երկկողմ հարաբերությունների և պաղեստինյան հակամարտության հանդեպ ԱՄՆ-ի վարած քաղաքականության պատմությունը 1947-2000թթ. միջև ընկած ժամանակահատվածում, այդ քաղաքականության ձևավորման մեխանիզմներն, ընթացքն ու հեռանկարները: Լուսարանվում են հակամարտության հանդեպ ԱՄՆ-ի որդեգրած արդի քաղաքական կուրսը, հակամարտության հանգուցային հարցերը և կնքված արաբա-իսրայելական համաձայնագրերը: Նախատեսվում է միջազգայնագետների, արևելագետների, դիվանագետների և այլ մասնագետների համար:

34-76

ԵՐԵՎԱՆ 2001

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն:	3 – 6
2. Գլուխ առաջին: ԱՄՆ-ի քաղաքականության փոփոխությունը իսրայելա-պաղեստինյան հակամարտության նկատմամբ:	7 - 27
➤ Պաղեստինյան հակամարտության առաջացումը:	7 – 10
➤ 1948-1949թթ. արաբա-իսրայելական պատերազմը և իսրայելա-պաղեստինյան հակամարտության հանդեպ ԱՄՆ-ի դիրքորոշումը (1948-1956թթ.):	10 – 14
➤ ԱՄՆ-ի քաղաքականությունը Պաղեստինյան հարցի նկատմամբ 1967 և 1973թթ. արաբա-իսրայելական պատերազմների ժամանակաշրջանում:	14 – 20
➤ Ջեմի-Դևիդի համաձայնագիրը որպես արաբա-իսրայելական հակամարտության կարգավորման առաջին քայլ:	20 – 23
➤ ԱՄՆ-ի քաղաքականությունը իսրայելա-պաղեստինյան կոնֆլիկտի նկատմամբ լիբանանյան ճգնաժամի ժամանակաշրջանում:	23 - 27
3. Գլուխ երկրորդ: Ամերիկյան քաղաքականության նոր փուլը իսրայելա-պաղեստինյան հակամարտության նկատմամբ (1990-1995թթ.):	28 – 45
Ա/ 1993թ. Օսլոյի համաձայնագիրը:	28 - 38
Բ/ Ամերիկյան դիվանագիտությունը և արաբա-իսրայելական նոր համաձայնագրերը:	38 – 45
4. Գլուխ երրորդ: 1998թ. Ութայ-Փլանբեյջնի համաձայնագիրը և պաղեստինյան հարցի լուծման հեռանկարները:	46 – 60
Ա/ Խաղաղության գործընթացը 1996-1997թթ.:	46 – 55
Բ/ ԱՄՆ-ը և իսրայելա-պաղեստինյան մերիլենդյան բանակցությունները:	55 – 60
5. Եզրափակում	61 – 63
6. Գրականության ցանկ	64 – 67
7. Ծանոթագրություններ	68 - 76

Ներածություն

Հակամարտությունների լուծումը այսօր համարվում է համաշխարհային հանրության առջև ծառայած զերխնդիրներից մեկը, որոնց լուծման ուղիների շուրջ առաջացած տարածայնությունները և քաղաքական ակտիվությունը կարելի է համարել համազօչ փաստարկ հօգուտ այն բանի, որ հակամարտությունները ոչ միայն տարաբնույթ են և բազմակողմանի, այլև շոշափում են բազմաթիվ պետությունների շահերը:

Դեռ հին աշխարհի պատմագիրները Պաղեստինը անվանել են աշխարհի ճանապարհների խաչմերուկ: Կարծում ենք այդ բնորոշումը կարելի է վերագրել ոչ միայն Պաղեստինին, այլև ամբողջ Մերձավոր Արևելքին, որը, շնորհիվ ունեցած աշխարհագրական դիրքի, իր վրա գրավել է և այսօր էլ գրավում է աշխարհի ուժեղների ուշադրությունը, որոնք մշտապես ցանկացել են, եթե ոչ անմիջականորեն իշխել, ապա զոհն իրենց ազդեցության ոլորտում պահել այս տարածաշրջանը:

Այս ֆոնի վրա է զարգանում Պաղեստինում ապրող երկու ժողովուրդների՝ հրեաների և արաբների տասնամյակներ տևած և մինչև օրս վերջնականորեն լուծում չգտած հակամարտությունը: Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի կրած պարտությունից հետո և արաբների և հրեաները հույս ունեին Պաղեստինում ստեղծել իրենց անկախ պետությունը: Հրեաները իրենց հույսը կապել էին 1917 թվականի Բալֆորի հռչակագրի հետ¹, որով խոստացվում էր Պաղեստինում հրեաների համար ստեղծել ազգային օջախ, իսկ արաբները Մեքքայի շերիֆ Ֆուսեյնի և անգլիական գործերի հրամանատար Ֆենրի Սանդհոսի միջև 1915թ. հոկտեմբերի 24-ին կնքված պայմանագրի հետ², ըստ որի Անգլիան պարտավորվում էր աջակցել արաբական ասպտամբությանը բուրջական տիրապետության դեմ և պատերազմից հետո ճանաչել արաբական անկախ թագավորությունը, իսկ Պաղեստինը մտնում էր այն տարածքների մեջ, որոնք պայմանագրի համաձայն պետք է անկախություն ստանային: Սակայն դա չհասնադարձեց, որ Անգլիայի ներկայացուցիչ Մարք Սայքսը և Ֆրանսիայի ներկայացուցիչ Ժորժ Պիկոն 1916թ. մայիսին կնքեն մեկ այլ գաղտնի համաձայնագիր: Ըստ Սայքս-Պիկո համաձայնագրի առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո Անգլիայի տիրապետության տակ էին անցնելու Իրաքը և Պաղեստինը, իսկ Ֆրանսիայի Սիրիան և Լիբանանը: Սակայն 1920թ. Պաղեստինում հաստատվեց Մեծ Բրիտանիայի մանդատը³, որը ոչ միայն չլուծեց հարցը, այլ ի վերջո հանգեցրեց Պաղեստինի բաժանմանը հրեաների և արաբների միջև ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1947թ. նոյեմբերի 29-ի որոշումով⁴ վերջիններս էլ արաբա-իսրայելական պատերազմների պատճառով զրկվեցին իրենց հատկացված տարածքներից:

Աճուշտ, պաղեստինյան պորլեմի ելույթում տարաբնույթ և բազմաճյուղ լինելով հանդերձ սերտորեն միահյուսված և միաձուլ է: 1948-49 թվականների արաբա-իսրայելական պատերազմի և արաբների վտարումից հետո, հակամարտությունը ավելի խորացավ, իսկ 1967 և 1973 թվականների արաբա-իսրայելական պատերազմներից հետո վերածվեց տարածաշրջանային հակամարտության իր վրա սեռեղծվել միջազգային կազմակերպությունների, համաշխարհային հասարակության և համաշխարհային զերտնությունների ուշադրությունը, որոնք հակամարտության լուծման ուղիները սկսվեցին կապել տարածաշրջանում իրենց մարտավարական և ռազմավարական շահերի ապահովման և այստեղ իրենց ազդեցության հաստատման հետ: Նման առանձնահատուկ ուշադրությունը հարցի նկատմամբ բացատրվում է նրանով, որ հակամարտությունը շարունակում է որոշիչ լինել ռազմավարական առումով բացառիկ նշանակություն ունեցող տարածաշրջանի քաղաքական կյանքում և լուրջ վտանգ է ներկայացնում տարածաշրջանի անվտանգությանն ու խաղաղությանը:

20-րդ դարի այս թնդկի առաջացումը և զարգացումը շատ բաներով որոշում է ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության բնույթը: Տարածաշրջանում առաջացած և առաջացող ճգնաժամերը այս կամ այն կերպ առնչվում էին պաղեստինյան պորլեմի հետ: Եվ արդեն հինգ տասնամյակից ավել Մերձավոր Արևելքը ամերիկյան քաղաքական գործիչների կողմից որակվում է որպես «ԱՄՆ-ի կենսական շահերի ու հետաքրքրությունների» ոլորտ և ժամանակ առ ժամանակ հայտնվում է ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության էպիկենտրոնում: ԱՄՆ-ի հետաքրքրությունները մերձավորարևելյան տարածաշրջանի նկատմամբ կապված են նախ և առաջ վերջինիս աշխարհագրական դիրքի և նալթային հարստությունների հետ: Առաջին համաշխարհային պատերազմից հետո ԱՄՆ-ը, որպես Անգլիայի դաշնակից, այս կամ այն կերպ առնչվում էր Մերձավոր Արևելքում տեղի ունեցող գործընթացներին և նկատվում էր արդեն միտում միջամտելու տեղի գործընթացներին: Այսպես 1918 թ. օգոստոսի 31-ին ԱՄՆ-ը միացավ Բալֆորի հռչակագրին⁵, իսկ 1922թ. ԱՄՆ-ի կոնգրեսը հայտարարեց, որ հավանություն է տալիս Պաղեստինում հրեական ազգային օջախ ստեղծելու ծրագրին⁶: Երկրորդ համաշխարհային պատերազմից սկսած ԱՄՆ-ի դրությունը Մերձավոր Արևելքում փոխվեց: ԱՄՆ-ի տնտեսական և ռազմավարական շահերը տարածաշրջանում ծնեց բերեցին արտակարգ կարևորություն: Մերձավորարևելյան քաղաքականությունը ԱՄՆ-ի համար դարձավ իրամայական անմիաժեշտություն: Դրա հետ միաժամանակ նկատվում էր Մերձավոր Արևելքի զավթումը ֆաշիստների կողմից կանխելու և ի հաշիվ Անգլիայի և ֆրանսիայի սեփական դիրքերը

տարածաշրջանում ուժեղացնելու միտում:Վերջիններիս հետ մրցակցությունը շարունակվեց մինչև 1956 թվականը, երբ Եգիպտոսի դեմ ձեռնարկած ագրեսիայից հետո ԱՄՆ-ի և Ֆրանսիան կորցրին իրենց ազդեցությունը Մերձավոր Արևելքում: Այս պահից սկսած կարելի է խոսել ԱՄՆ-ի անմիջական միջամտության մասին մերձավորարևելյան գործընթացներին:

Ընդհուպ մինչև 1990-ական թվականների սկիզբը ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության համար կարևորվում էին երկու գործոնների առկայությունը: Դրանցից առաջինը խՂՄԻ-ի հետ մրցակցությունն էր և Սառը պատերազմը: Մերձավոր Արևելքում խՂՄԻ-ի ազդեցության ուժեղացումը կանխելու համար ԱՄՆ-ը ակտիվորեն նախաձեռնում և ոգեշնչում էր ռազմական դաշինքների կազմավորում Մերձավոր Արևելքում (միջինարևելյան հրամանատարություն, Բաղդադի պակտ, ՍենՏՕ, և այլն): ՈՒՆԵՍԿ-ի հակայական ֆինանս-տնտեսական պոտենցիալ՝ ԱՄՆ-ը, այնուամենայնիվ, իրականացնելով իր մերձավորարևելյան քաղաքականությունը, մինչև 1990-ական թվականների սկիզբը հաշվի էր առնվում նաև խՂՄԻ-ի ազդեցության առկայությունը տարածաշրջանում:

Երկրորդ գործոնը արաբա-իսրայելական հակամարտությունն է: Այս հարցում, ընդհուպ մինչև 90-ական թվականները, 1988-1992թթ. ԱՄՆ-ը զբաղեցնում էր զուտ պոզիտիվիստական կողմնորոշում: ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության նոր փուլի համար, որը սկսվում է 90-ական թվականների սկզբով, բնորոշ է ուժային և քաղաքականության մեթոդները: Այս փուլում ԱՄՆ-ը իր հետաքրքրությունները տարածաշրջանում ապահովելու համար սկսում է գործադրել տեսական և պրակտիկ մեթոդների ընտրություն (րիվ ազատության պայմաններում, որի վրա ապացույցն է Պարսից ծոցի պատերազմը 1991թ.: Այս պահից սկսած ԱՄՆ-ը արժանանում է Մերձավոր Արևելքում ընթացող գործընթացներին՝ ելնելով քաջատապես սեփական շահերից: Բացի այդ, ներկայումս գնալով ամրապնդվում է ԱՄՆ-ի ռազմական ներկայությունը Մերձավոր Արևելքում, որի հիմքը դրվելով դեռևս 1980-88 թվականների իրանա-իրաքյան պատերազմի ժամանակ, աճեց 1991թ. Զուլեյխայի ճգնաժամի ընթացքում և վերջնական հաստատումը գտավ 1997թ. իրաքյան ճգնաժամի ժամանակ: Փոփոխություններ կան նաև ԱՄՆ-ի ռազմական դուկտրինայում: Եթե նախկինում ԱՄՆ-ը խուսափում էր անմիջականորեն ռազմական ուժի գործադրումից, ապա այժմ ԱՄՆ-ը իրենց թույլ է տալիս ռազմական միջամտություն, եթե Մերձավոր Արևելքում որևէ իրադարձություն կամ գործընթաց սպառնում է ԱՄՆ-ի շահերին:

Միաժամանակ ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության նոր փուլի համար բնորոշ է նաև արաբա-իսրայելական հակամարտության հանդեպ համեմատաբար հավասարակշռված քաղաքականություն վարելը:

Փաստորեն խՂՄԻ-ի փլուզումը և իսրայելա-պաղեստինյան հակամարտության հանդեպ ԱՄՆ-ի կողմից, սկսած 1990-ական թթ., հավասարակշռված քաղաքականություն վարելը, առաջ են քաշում մի շարք բուրժուական նոր հարցարարումներ, որոնք կարիք ունեն հանակողմանի ուսումնասիրության և իրենց ընտրվել խիստ արդիական են: Սասնավորապես Մերձավոր Արևելքում այսօր ընթացող զարգացումների ֆոնի վրա խիստ արդիական հնչեղություն են ստանում այնպիսի հարցեր, ինչպիսիք են Պաղեստինյան պետության ստեղծման, երուսաղեմի ապագային և պաղեստինյան փախստականների վերադարձին վերաբերվող հարցերը: Իսկ վերոհիշյալ բոլոր հարցերը ամրապնդված են 1993թ. Օսլոյի, 1995թ. Վաշինգտոնյան և 1998թ. Ռիա-Փլանթեյշնի համաձայնագրերում, որոնց ուսումնասիրությունը սույն առեմախտության գլխավոր խնդիրներից մեկն է: Այսօր ՊՎԿ-ի կանոնադրությունից հանված է Իսրայելը որպես պետություն՝ վերացնելու կետը, իսկ Իսրայելը ճանաչել է ՊՎԿ-ի քաղաքական իրավունքները: Մրանք հարցեր էին, որոնք բավականին տևական ժամանակ խանգարում էին կողմնորեն երկխոսություն սկսել հակամարտության կարգավորման շուրջ:

Բացի այդ, տասնամյակներով արաբա-իսրայելական հակամարտությանը առնչվելու հանգամանքը ԱՄՆ-ին թույլ են տալիս ծանր լինելու հակամարտության ամենաական կողմերին և փաստորեն հանդես գալու միակ արդյունավետ միջոցով՝ դրեում: Արդիական է հնչում նաև այս հարցադրումը, քանզի 1990-ական թվականներից սկսած իսրայելա-պաղեստինյան հակամարտության կարգավորումը կապվում է քաջատապես ԱՄՆ-ի միջոցորդության հետ, և քանի որ Մերձավոր Արևելքում ցանկացած գործընթաց միշտ էլ կապված է եղել իսրայելա-պաղեստինյան հակամարտության հետ, ապա այժմ, բնականաբար, մերձավորարևելյան ցանկացած գործընթաց այս կամ այն կերպ առնչվելու է ԱՄՆ-ի հետ, այնինչ նախկինում այդ գործընթացները կապված էին ոչ միայն ԱՄՆ-ի հետ: Վերջին հաշվով Սառը պատերազմի ավարտը, խՂՄԻ-ի փլուզումը հանգեցրեց նրան, որ ԱՄՆ-ը դարձել է արաբա-իսրայելական հակամարտության շահագրգիռ երրորդ կողմը: Այդ աննախադեպ շահագրգռվածության պատճառներից մեկն այն է, որ ԱՄՆ-ը ձգտում են առավելագույնս ապահովել իրենց դաշնակցի՝ Իսրայելի անվտանգությունը և հակամարտության կարգավորման շնորհիվ ամբողջապես իրենց ազդեցության տակ զցել արաբական պետությունների, ինչը իր հերթին հնարավորություն կընձեռնի ապահովել մերձավորարևելյան մեկրի վրա հակոդությունը և անխափան մատակարարումը արևմուտք: Այդ իսկ պատճառով արաբա-իսրայելական հակամարտության հանդեպ ԱՄՆ-ի քաղաքականությունը ուղղված է եղել նրան, որ ապահովվի այդ հակամարտության լուծման փուլային և սեպարատ մեթոդի գերակայությունը: Փուլային լուծման արդյունքներ են Բեժմի-Ղևիդի, Օսլո-1, իսրայելա-հորդանանյան, Ռիա Փլանթեյշնի համաձայնագրերը:

Ներկայումս ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականությունը ընթանում է մի քանի հիմնական ուղղություններով՝

- ❖ Իսրայել-պաղեստինյան հակամարտության կարգավորում;
- ❖ Իսրայելի և Սիրիայի / ճակատի / միջև խաղաղության համաձայնագրի կնքում;
- ❖ Իսրայելի անվտանգության ապահովում;
- ❖ Անկախ տնտեսական դիրքերի ստեղծում և զարգացում;
- ❖ Ավելի սերտ կապերի հաստատում արաբական վարչակարգերի հետ;
- ❖ Ուղղակի մերկայության ուժեղացում տարածաշրջանում՝ Իրաքի և Իրանի կողմից տարածաշրջանի երկրներին « սպառնացող վտանգի » կանխման հիմնավորումով;
- ❖ Իրանի ազդեցության չեզոքացում:

Սկզբնաղբյուրներն ու գրականությունը

Սկզբնաղբյուրներ ---- Համեմատական և արդյուրագիտական վերլուծության ժամանակ օգտագործվել են ՍՄԿ-ի Գլխավոր Սասնրեյայի, ԱՄՆ-ի Կոնգրեսի, Պետքարտուղարության, ԱՄՆ-ի ռազմաօդային ուժերի, Լոնդոնի Ստրատեգիական Հետազոտությունների Ինստիտուտի, Բեյրութի Պաղեստինագիտության Ինստիտուտի, ԱՄՆ-ի Հասարակական-քաղաքական նախաձեռնությունների Ինստիտուտի արհիվների տվյալները և փաստաթղթերը, որոնց օգտագործումը իրականացվել է ինքնուրույն համաշխարհային տեղեկատվական ցանցի միջոցով:

Կարևոր են հետևյալ սկզբնաղբյուրները՝ Պաղեստինի Մանդատը, Պաղեստինի բաժանման ծրագիրը, 1949թ. արաբ-իսրայելական պայմանագրերը, 1967թ. արաբ-իսրայելական պատերազմի մասնակիցներին վերցված հարցազրույցները, Քնեֆ-Ղևիդի համաձայնագիրը, ՍՄԿ-ի բանձմաները, Պաղեստինյան Ազգային Խորհրդի Կանոնադրությունը: Այս շրջանի համար կարևոր սկզբնաղբյուր է հանդիսանում նաև Խորհրդային Միության Արտաքին գործերի մինիստրության հրատարակած «ԽՍՀՄ-ը և արաբական երկրները» նյութերի և փաստաթղթերի ժողովածուն, Պաղեստինի անկախության հռչակագիրը, 1993թ. Օսլոյի համաձայնագիրը, Դազա-Երիբլի համաձայնագիրը, 1994թ. պայմանագիրը իսրայել-պաղեստինյան տնտեսական հարաբերությունների մասին, 1995թ. վաշինգտոնյան, 1997թ. Չեքոսլով. 1998թ. Ռայ Փլանքենշեյի, ՊՄԿ-ին Հորդանան գետի արևմտյան ափում և Դազայի հատվածում իշխանության փոխանցման մասին համաձայնագրերը: Ռեսուրսային փնտրելի վերաբերյալ մեծ փաստական նյութ են պարունակում այնպիսի ազդեցիկ պարբերականներ, ինչպես «Թայմս»-ը, «Ինդիպենդենթ»-ը, «Էկոնոմիստ»-ը, «Նյուզդիկ»-ը, «Նյու-Յորք Թայմս»-ը, «Գադդիս»-ը, «Իզվեստիան»: Որպես աղբյուրներ օգտագործվել են նաև ԱՄՆ-ի նախագահների հուշագրությունները, նամակները, իրադրությունների ակամատեսների օրագրերը:

Գրականությունը-----

Արդեն հինգ տասնամյակից ավելի մերձավորարևելյան հակամարտությունը զտնվում է պատմաբանների, միջազգայնագետների և համաշխարհային հասարակության ուշադրության կենտրոնում: Հարցին նվիրվել են բազմաթիվ միջազգային խորհրդածողվներ ու նստաշրջաններ ՍՄԿ-ի, Արաբական Լիգայի, Եվրոխորհրդի և այլ կազմակերպությունների շրջանակներում: Այս հակամարտության տարբեր հարցերի ու կողմերի լուսաբանմանը նվիրվել են բազմաթիվ ուսումնասիրություններ և աշխատություններ: Այդ առումով օգտագործված մասնագիտական գրականությունը կարելի է բաժանել երեք մասի՝ հայկական, ռուսական / խորհրդային / և արտասահմանյան:

Հարցի ուսումնասիրման գործում հատկապես մեծ ներդրում ունեն հայ արևելագետները, որոնց աշխատություններում ուսումնասիրության առարկա են դարձել մերձավորարևելյան գործընթացների առանցքային հարցերը:

Այս առումով մեծ կարևորություն է ներկայացնում և. Հովհաննիսյանի «Արաբական Արևելքը՝ ԱՄՆ-ի բաղաբախտության մեջ երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին» ուսումնասիրությունը, որտեղ հայկական արևելագիտության մեջ առաջին անգամ հատուկ ուսումնասիրության առարկա է դարձել ԱՄՆ-ի մերձավորարևելյան բաղաբախտություններով հազեցված համաշխարհային պատերազմի տարիներին, այսինքն բաղաբախտություններով հազեցված մի ժամանակահատվածում, որի ընթացքում արդեն նկատվում էր որոշակի վերաբերումը ԱՄՆ-ի կողմից Պաղեստինյան հարցի նկատմամբ: Լույս հեղինակի մեկ այլ մենագրությունում¹⁰ ներկայացված են ոչ միայն ԱՄՆ-ի այլև մյուս արևմտյան պետությունների մերձավորարևելյան բաղաբախտությունը վերոհիշյալ ժամանակահատվածում: Հայ արևելագետներից վերոհիշյալ հարցի ուսումնասիրման գործում մեծ ներդրում ունեն Ա. Ավանեսովը¹¹, Գ. Գրիգորյանը¹², Ն. Կարապետյանը¹³, Ե. Կարամանուկյանը¹⁴, Ե. Աբրահամյանը, Ա. Թովհայանը¹⁵:

Ներկայացվող խնդիրը եղել է մնում է նաև ռուսական պատմաբանների և արևելագետների կողմից ամենաշատ ուշադրության արժանացած հարցերից մեկը: ԱՄՆ-ի մերձավորարևելյան բաղաբախտությունը 1970-80-ական թվականներին, հատուկ ուսումնասիրության առարկա է դարձել ակադեմիկոս Ե. Պրիմակովի¹⁶, Վ. Գրոմիկոյի¹⁷, Ռ. Օլիմնիկովի¹⁸, Կ. Կրեմենյուկի¹⁹, Ի. Ջվակելսկայայի²⁰, Գ. Նիկիտինայի²¹, Ե. Ղադիրիևի²² կողմից:

Ռեսուրսային փնտրելի հարցը, ինչպես արդեն նշվեց վերևում, հետազոտության առարկա է դարձել նաև արտասահմանյան պատմաբանների և միջազգայնագետների կողմից: Պրոֆեսոր Վ. Խալիլիի խնդրագրությանը Բեյրութում 1971 թվականին լույս է տեսել հոդվածների ժողովածու²³, որտեղ

ուսումնասիրության առարկա են դարձել պաղեստինյան հակամարտության առաջացման պատճառները, 1948-49 թվականների արաբա-իսրայելական պատերազմը և ԱՄՆ-ի դիրքորոշումը պաղեստինյան հարցի նկատմամբ այս շրջանում: ԱՄՆ-ի 1960-70-ական թվականների մերձավորարևելյան քաղաքականությանը մանրամասնորեն վերլուծության է ենթարկված Վիլյամ Քուանդտի աշխատությունում²⁴: Իսրայելա-արաբական հակամարտության բավականին տևական ժամանակահատվածի (1881-1999թթ.) է անդրաձարձել Սորիս Բեննին: Իսրայելա-պաղեստինյան հակամարտության վերջին շրջանի և այդ հակամարտության վրա 1991թ. Պարսից Օղջի պատերազմի ազդեցության ուսումնասիրությանն է նվիրված Նենսի Մյուրեյի աշխատությունը²⁵: Նույն հեղինակի մեկ այլ աշխատությունում²⁶ վերլուծության է ենթարկվում 1995թ. Վաշինգտոնյան / Օսլո-2 / համաձայնագիրը կնքված Իսրայելի և ՊԱԿ-ի միջև:

Խաղաղության գործընթացի հանդեպ իսրայելական երկու կառավարությունների Ուաշինգտոնյան և Նաթանյահուի դիրքորոշումների վերլուծությանն է նվիրված Պաղեստինյան Ազգային Խորհրդի անդամ, Մասաչուսեթսի համալսարանի պրոֆեսոր Նասեր Արուրիի աշխատությունը²⁷, որտեղ ցույց է տրվում խաղաղության գործընթացի հանդեպ Ուաշինգտոնյան և Նաթանյահուի կառավարությունների դիրքորոշումների որոշ նույնություններ:

ՂՈՒՒՄ ԱՆՈՒՑԻՆ

ԱՄՆ-ի քաղաքականության փոփոխությունների իրադրությունների հակամարտության համոզման:

1. Պաղեստինյան հակամարտության առաջացումը

20-րդ դարի ավարտին դեռևս չկոծկված է մնում համաշխարհային հասարակությանը հուզող ամենաքաղաքական թեմաներից մեկը՝ արաբա-իսրայելական հակամարտությունը: Առաջանալով 1947թ. որպես իսրայելա-պաղեստինյան ինքնիշխանության հակամարտությունը հետագա տարիներին վերածեց արաբա-իսրայելական իր ոլորտը ուղղակի կամ անուղղակի կերպով ներառելով Մերձավոր Արևելքի գրեթե բոլոր երկրներին, ինչպես նաև համաշխարհային գերտերություններին, որոնք ունեն իրենց ռազմավարական շահերը այս ռեգիոնում:

Մինչև 1947թ. Պաղեստին աշխարհագրական տարածքը իր մեջ ներառում էր հետագայի Հորդանանը, Իսրայելը, Հորդանան գետի արևմտյան ափը, Դազայի հատվածը այսինքն այն տարածքները, որոնք առաջին աշխարհամարտից հետո Ազգերի Լիգայի որոշմամբ հանձնվել էին Անգլիային:²⁸ «Պաղեստինի առաջին բաժանումը եղավ 1922թ. երբ Անգլիան առանձնացրեց Անդրհորդանանը»²⁹: Ուստի զարմանալի է, որ ժամանակակից Իսրայելի շատ ազդեցիկ ուժեր՝ Բեռլտ կուսակցություն, Լիխուդ.../., Պաղեստինի 1947թ. բաժանումը անվանեցին որոշում Արևմտյան Պաղեստինի բաժանման մասին: Իսրայելի կառավարող շրջանակները ավելի ուշ արեցին անգամ արևմտյան քաղաքագետներին շշմեցնող հայատարաբարություններ. «Գրե արդեն գոյություն ունի Պաղեստինյան արաբական պետություն, որպիսին է Հորդանանը»³⁰: 1946 թ. Հորդանանի անկախությունից հետո Պաղեստինի աշխարհագրական ամվանումը սկսեց տարածվել Հորդանան գետից արևմուտք մինչև Միջերկրական ծով և Սինայի թերակղզի ընկած տարածքներին վրա:

Պաղեստինյան հակամարտության սաղմները ի հայտ եկան առաջին համաշխարհային պատերազմի ավարտին և դրան հաջորդած տասնամյակների ընթացքում: 1917թ. նոյեմբերի 2-ին Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարը հանդես եկավ հայտարարությամբ, որը պատմության մեջ մտել է Բալֆորի հռչակագրի անվամբ:³¹ Հռչակագրում ասվում էր. «Նորին մեծության կառավարությունը բարեխաճությամբ ծանոթանալով Պաղեստինում հրեական ժողովրդի համար ազգային օջախ ստեղծելու գաղափարին հայտարարում է, որ բոլոր ջանքերը կներդնի այդ ծրագրի իրականացման գործում: Միաժամանակ ոչինչ չի արվի սպիանափակելու գոյություն ունեցող ոչ հրեական համայնքի իրավասությունները Պաղեստինում»:³² Հռչակագրի ընդունման պահին Պաղեստինի բնակչության 91 տոկոսը կազմում էին արաբները, իսկ 9 տոկոսը հրեաները:³³ Հռչակագիրը որոշակի առումով հակասության մեջ էր մտնում այն պայմանավորվածության հետ, որ ծեղը էր բերվել առաջին համաշխարհային պատերազմի տարիներին անգլիական գործերի հրամանատար Դեմրի Սամանհոնի և Սեքեյայի շերիֆ Դուսեյն ալ-Ֆաշիմի միջև, համաձայն որի արաբները պատերազմի ավարտից հետո ստանալու էին անկախություն, իսկ Պաղեստինը մտնում էր այն տարածքների մեջ, որոնք պետք է ստանալու անկախություն:³⁴

Առաջին համաշխարհային պատերազմից հետո Օսմանյան կայսրության նախկին հպատակ երկրներում հաստատվեց մանդատային համակարգ: Սիրիան և Լիբանանը դարձան Ֆրանսիային պատկանող մանդատային տարածքներ, իսկ Պաղեստինը, ներառյալ հետագայի Հորդանան պետությունը և Իրաքը Անգլիայի: Ազգերի Լիգայի կողից Անգլիային տրված մանդատի որոշ հոդվածներ վերաբերում էին հրեական ազգային օջախ ստեղծելու մտադրություններին:³⁵ Մանդատի երկրորդ հոդվածում ասվում էր. «Մանդատ ստացած պետությունը պետք է պայմաններ ստեղծի հրեական ազգային օջախի ստեղծման և ինքնակառավարման ինստիտուտների զարգացման համար»:³⁶ Իսկ հոդված չորրորդում ասվում էր. «Սիոնիստական կազմակերպությունները ճանաչվում են որպես օրինական հրեական գործակալություններ»:³⁷ Սիոնիստական գաղափարախոսության հիմնական դրույթները ընդունվեցին 1897թ. օգոստոսի 30-ի Բազելի կոնգրեսում: Բազելի կոնգրեսի ծրագրային դրույթները հետևյալներն էին:³⁸

1. Սիոնիզմը պայքարելու է Պաղեստինում հրեական ազգային օջախ ստեղծելու համար:
2. Տարբեր երկրներից հրեաների հավաքագրում:
3. Ազգային ինքնագիտակցության բարձրացում:
4. Աջակցություն Պաղեստին տեղափոխված հրեա արհեստավորներին և վաճառականներին:

Անգլիային տրված մանդատի վեցերորդ հոդվածը պահանջում էր «Ապահովել հրեա զարգացման նպատակները իրազմումը Պաղեստինում միաժամանակ չտուճահարելով բնակչության մյուս հատվածների իրավունքները»:³⁹ Վերոհիշյալ հրեական գործակալությունը համագործակցելու էր բրիտանական կառավարության հետ»:⁴⁰ Վերոհիշյալ իրադարձություններից հետո սկսվում է հրեաների զանգվածային հոսքը Պաղեստին: Այդ ժամանակ Պաղեստինում ծառայող բրիտանական բանակի սպա Ստեյնիզը իր հուշերում գրում է. «Ես զարմացած եմ թե՛ Ավիվ քաղաքի արագ աճի վրա: Հրեաները մեկ Ստեյնիզը իր հուշերում գրում է. «Ես զարմացած եմ թե՛ Ավիվ քաղաքի արագ աճի վրա: Հրեաները մեկ Պաղեստինի հրեական բնակչության թիվը հասավ 156.840 մարդու, իսկ արաբական բնակչության թիվը Պաղեստինի հրեական բնակչության թիվը հասավ 156.840 մարդու, իսկ արաբական բնակչության թիվը կազմում էր 744.250 մարդ»:⁴¹ Ստեյնիզը իր խիստ լարված իրադրությունը, որը հաշվի առնելով, կազմում էր 1939թ. մայիսին հրապարակեց իր հայտնի Սպիտակ գիրքը, որում բրիտանական կառավարությունը 1939թ. մայիսին հրապարակեց իր հայտնի Սպիտակ գիրքը, որում բրիտանական կառավարությունը 1939թ. մայիսին հրապարակեց իր հայտնի Սպիտակ գիրքը, որում ասվում էր. «Նորին մեծության քաղաքականությանը հայտնում է, որ հրեական պետության ստեղծումը

Պաղեստինում չի հանդիսանում իր վարած քաղաքականության մի մասը: Իրենք հարգելու են և կատարելու են իրենց պարտավորությունները արաբների առջև»:⁴² Նույնիսկ ի հայտ եկան Պաղեստինի բաժանման ծրագրեր:⁴³ Հրեական կազմակերպությունները խիստ քննադատության ենթարկեցին «Ասիական գիրքը» և 1942թ. մայիսի 11-ին Նյու-Յորքի Բիլթոմոյ հյուրանոցում հրավիրված հրեական 667 պատվիրակներից բաղկացած կոնգրեսը պահանջեց իրականացնել Բալֆուրի հռչակագիրը և Անգլիային տրված մանդատի համապատասխան հողվածները:⁴⁴ Սիոնիստական ղեկավարների մի մասի ուշադրությունը շրջվեց դեպի Ռուսաստան, իսկ մեծամասնությունը հույսը սկսեց կապել ԱՄՆ-ի հետ: Սկսվել էր երկրորդ համաշխարհային պատերազմը, օկուպացված էր Ֆրանսիայի և ԽՍՀՄ-ի մի մասը, լուրջ վտանգ էր սպառնում Անգլիայի անվտանգությանը: Այսպիսի պայմաններում սիոնիստական կազմակերպություններին լուրջ ցանկություն կարող էր ցույց տալ միայն ԱՄՆ-ը, որի մերձավորարևելյան քաղաքականությունը զեմալով ակտիվացնում էր, իսկ ռազմավարական և տնտեսական շահերը մերձավորարևելյան տարածաշրջանում ձեռք էին բերում արտակարգ կարևորություն: Մերձավորարևելյան քաղաքականությունը ԱՄՆ-ի համար դառնում էր իրամայակա անհրաժեշտություն:⁴⁵ Դեռ 1918թ. օգոստոսի 31-ին ԱՄՆ-ը ճանաչել էր Բալֆուրի հռչակագիրը,⁴⁶ իսկ 1922թ. ԱՄՆ-ի կոնգրեսը հայտարարեց, որ հավանություն է տալիս Պաղեստինում հրեական ազգային օջախի ստեղծման ծրագրերին:⁴⁷ Երկրորդ համաշխարհային տարիներին, ինչպես իրավագիտոս Նշուռն Ե. Դովլանդիսյանը «ԱՄՆ-ը ծնունդ էր կանխել Մերձավոր Արևելքի զավթումը ֆաշիստների կողմից, ուժեղացնել սեփական դիրքերը ի հաշիվ Անգլիայի և Ֆրանսիայի, ինչպես նաև բաց դռների քաղաքականության կարգախոսի տակ ուժեղացնել սեփական տնտեսական դիրքերը՝ արաբական արևելքում ստեղծելով ուժեղ պաշտպան հետպատերազմյան շրջանում հարձակողական քաղաքականություն վարելու համար»:⁴⁸ ԱՄՆ-ի քաղաքականության ակտիվացումը պատահական երևույթ չէր և ուներ լուրջ քաղաքատնտեսական հիմքեր: «Արաբական արևելքի հարցում ԱՄՆ-ի քաղաքականությունը լավագույն արտապատրույունը 1942թ. մայիսի 8-ին ընդունված ԱՄՆ-ի պետքարտուղարության Մերձավոր Արևելքի բաժնի վարիչ Էլլինգի մեծորանդումն էր, որը ԱՄՆ-ի հետաքրքրությունները Մերձավոր Արևելքում բաժանում էր 3 էլեմենտների՝ քաղաքական, ռազմական և տնտեսական: Քրոն հետաքրքրությունները Մերձավոր Արևելքում ունեն հաջողակարգ նշանակություն»,- սաված էր հուշագրում:⁴⁹ ԱՄՆ-ի նախագահ Ռուզվելտի կարծիքին էր, որ «Մերձավոր Արևելքը պետք է պատել անառիկ, անվստյայն բաժնից ԽՍՀՄ-ը կպարտվի, քե՛ ոչ»:⁵⁰ Ռուզվելտը 1944թ. հոկտեմբերի 15-ին հայտարարեց, որ «Պետք է զանել ուղիներ և միջոցներ Պաղեստինում ղեկնորսական հրեական համագործակցություն ստեղծելու համար, հենց որ դա հնարավոր լինի»:⁵¹ 1946թ. հոկտեմբերին ԱՄՆ-ի Մորդեխայի ճախագահ Տրումենը առաջարկեց թույլատրել 100.000 հրեաների քննվել Պաղեստինում:⁵²

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո պաղեստինյան հարցը ճորից դարձավ միջազգային դիվանագիտական շրջանակներում քննարկվող առաջնահերթ խնդիրներից մեկը: 1946թ. ապրիլին ստեղծվեց անգլո-ամերիկյան կոմիտե, որը զբաղվելու էր Պաղեստինի հարցերով: Կոմիտեն հայտարարեց, որ «Ընդունում է Տրումենի առաջարկությունը՝ թույլատրել 100.000 հրեաների մուտքը Պաղեստին, բայց միաժամանակ մերժում է արաբների և հրեաների պահանջը այդ ժողովուրդների համար ստեղծելու ազգային պետություններ: Կոմիտեն մերժում է Պաղեստինի բաժանումը, որպես հարցի լուծման ուղի և առաջարկում է անգլիական մանդատի շարունակման փոխարեն իրագործել այս տարածքը ՄԱԿ-ի իովանագիտության տակ դնելը, մինչև անհանդուրժողականությունը արաբների և հրեաների միջև վերանա»:⁵³ Սակայն արդեն 1946թ. հոկտեմբերին Տրումենը հայտարարեց, որ «հրեական պետության ստեղծումը թույլատրելի է Պաղեստինի այն հատվածում, որը գտնվում է իրեական գաղութարանակների տնտեսական և քաղաքական ուրուտում: ԱՄՆ-ը առաջարկեց Պաղեստինը բաժանել արաբական և հրեական ինքնուրույն պետությունների: Անգլիական ճախագիծը ճախատեսում էր ստեղծել Պաղեստինյան ֆեդերացիա՝ բաղկացած 4 սահմանգծերից՝ արաբական, հրեական/որոն ունենալու էր մասնակի ինքնուրույնություն/Նեզեվ և Երուսաղեմ»:⁵⁴ 1946թ. դեկտեմբերի 31-ի մարդահամարի տվյալներով Պաղեստինում ապրում էր 1.972.560 մարդ, որից 1.203.780-ը արաբներ էին, 145.060-ը քրիստոնյաներ, 15.490-ը՝ դրուզներ և 608.230-ը՝ հրեաներ:⁵⁵

1947 թ. փետրվարին քրիստոնական կառավարությունը համազվեցավ, որ այլևս չի կարող կառավարել Պաղեստինը, ինչպես նաև դիմարդել ԱՄՆ-ի ճնշմանը՝ ապրիլին պաղեստինյան հարցը տեղափոխեց ՄԱԿ հուսալով այդ կերպ կանխել տարածաշրջանում ԱՄՆ-ի աճող ազդեցությունը: ՄԱԿ-ի Գլխավոր Սամբլեայի արտակարգ նստաշրջանում, որը տեղի ունեցավ 1947թ. ապրիլի 28-ից մայիսի 15-ը, ստեղծվեց հատուկ հանձնաժողով, Կանադայի, Չեխոսլովակիայի, Գվատեմալայի, Լիդեռլանդների, Պերուի, Եվելիայի, Ուրուգվայի, Գարալվալիայի, Գոլկաստանի, Իրանի, Ավստրալիայի ներկայացուցիչներից, որը պետք է ներկայացներ ծրագրեր պաղեստինյան հարցի լուծման վերաբերյալ: Հատուկ հանձնաժողովը ուղևորվեց Պաղեստին:⁵⁶

ԱՄՆ-ի քաղաքականությունը Պաղեստինի հարցում անգլո-ամերիկյան կոնվենցիայի ստորագրումից սկսած 1924թ. և ընդհուպ մինչև 2-րդ աշխարհամարտը բավականին բարդ և զգուշավոր էր: Զգուշով և հաստատվել այստեղ ՄԱԿ-ը հեկնվում էր տեղի սիոնիստական կազմակերպությունների վրա խուսափելով պաշտոնական ընդդիմությունից անգլիական կառավարության հանդեպ, բայց միաժամանակ իրահրում էր հակահանգլիական տրամադրություններ: «Որպեսզի լուրջացնի Անգլիայի և Ֆրանսիայի քաղաքական և տնտեսական դիրքերը, պետք էր զարդաբայի հարցերում նրանց հարված հասցնել: ԱՄՆ-ը փորձում էր դա անել Ասիայի և Աֆրիկայի երկրների Անգլիայից և Ֆրանսիայից

գաղութային կախվածության վերացման միջոցով: Գաղութների դուրս գալը Անգլիայի և Ֆրանսիայի ենթակայությունից ճանապարհ կհարթեր ԱՄՆ-ի քաղաքականության համար, իսկ բաց դռների քաղաքականությունը ուղի կհարթեր ամերիկյան կապիտալի համար»:

Այս այսպիսի հանգամանքներում պաղեստինյան հարցը տեղափոխվում էր ՍՄԿ: Անգլիան որդեգրեց խուսաճանկման քաղաքականություն, և դա երևում էր ինչպես Գլխավոր Ասամբլեայի հատուկ, այնպես էլ սովորական նստաշրջանների ժամանակ:

«Պաղեստինյան հարցը մտցնելով ՍՄԿ անգլիական կառավարությունը իրեն ոչ մի պարտավորությամբ կաշկանդված չէր զգում և նախօրոք զնահատում էր ՍՄԿ-ի ցանկացած հնարավոր որոշում ստև որպես խղիղդատվական»:⁵⁶

Պարզ էր, որ Անգլիան այդպիսի քայլերով հույս ուներ ժամանակ շահել և պահել իր ազդեցությունը Պաղեստինում: Մյուս կողմից արաբները առաջարկելով Անգլիայի մանդատի դադարեցում «նկատի ունենի, որ Պաղեստինում պետք է ստեղծվի միայն արաբական պետություն՝ նոռանալով այն ակնհայտ խրոդությունը, որ Պաղեստինը փաստագրորեն կար որպես երկու ինքնուրույն համայնքների (արաբական և հրեական / կոնգլոմերատ»:⁵⁷ Իսկ սիոնիստական կազմակերպություններն իրենց հերթին պահանջում էին Պաղեստինում ստեղծել միայն հրեական պետություն: Ավելին նրանք ծրագրում էին սիոնիստական զինված ուժերի օգնությամբ վտարել արաբներին Պաղեստինից:

ԱՄՆ-ի դիրքորոշումը ՍՄԿ-ի նստաշրջանում առաջին հայացքից բնում էր անորոշ և չպարզված: Այսպես, ԱՄՆ-ը սկզբում դեմ արտահայտվեց հրեական համայնքի ներկայացուցիչների հրավիրումը ՍՄԿ, բայց այնուհետև 180 ստիճակով փոխեց իր դիրքորոշումը պահանջելով հակառակը: Այս ամենը, ինչպես նաև Պաղեստինի ապագայի վերաբերյալ հետագա առաջարկությունները ուղղված էին Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ի դիրքերի ամրապնդմանը:

Այս ընթացքում Պաղեստինյան հարցերով ՍՄԿ-ի հատուկ հանձնաժողովը առաջ քաշեց երկու ծրագրեր: Առաջինը, որը կոչվում էր «մեծամասնության ծրագիր»⁵⁸ և առաջարկվել էր Կանադայի, Պերուի, Գվատեմալայի, Նիդեռլանդների, Չեխոսլովակիայի և Ուրուգվայի, ներկայացուցիչների կողմից, նախատեսում էր Պաղեստինը տնտեսական միասնության պահպանման հիմքի վրա բաժանել արաբական և հրեական ինքնուրույն պետությունների՝ երուսաղեմը թողնելով միջազգային հսկողության տակ:

Երկրորդ ծրագիրը, որ առաջարկվել էր Դնդկաստանի, Իրանի և Գարավսլավիայի ներկայացուցիչների կողմից և կոչվում էր «փոքրամասնության ծագիր»⁵⁹, նախատեսում էր ստեղծել միասնական պաղեստինյան պետություն կազմված 2 ինքնավար մասերից, երուսաղեմ մայրաքաղաքով: Այս նախագիծը պաշտպանում էին ԽՍՀՄ-ը և՛ արաբական երկրները: Այս առաջարկությունների ուսումնասիրության համար ստեղծվեցին երկու ենթակոմիտեներ:

Իր հերթին Անգլիան պարտավորվում էր ընդունել և ի կատար ածել ՍՄԿ-ի այն որոշումը, որը միաժամանակ կընդունեին և արաբները, և հրեաները: Մեկի որ արաբները մերժեցին երկու ծրագրերն էլ, իսկ հրեաները ընդունեցին առաջինը, Անգլիան ըստ ռուբյան պահպանում էր գործողությունների ազատություն: Վերջինիս ներկայացուցիչը հայտարարեց, որ Անգլիան իր գործը Պաղեստինից դուրս կբերի ամենաուշը մինչև 1948թ. օգոստոսի 1-ը:

ՍՄԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 2-րդ նստաշրջանում 1947թ. սեպտեմբերի 16-նոյեմբերի 29-ը, բախումը այս 2 ծրագրերի միջև ավելի ակնհայտ դարձավ: ԱՄՆ-ի կառավարությունը պայքարում էր ոչ այնքան 2-րդ ծրագրի դեմ, որքան Անգլիայի դիրքորոշման դեմ:⁶⁰ Միաժամանակ ԱՄՆ-ը ձգտում էր հասնել իր անմիջական մասնակցությամբ Պաղեստինում ուստիկանական ուժերի ստեղծման, «կանավորական սկզբունքների» հիման վրա, որոնք պետք է այստեղ գտնվեին մինչև Պաղեստինի անկախության հռչակումը: Այնուհետ է, որ այս ամենը ուղղված էր տարածաշրջանում ԱՄՆ-ի դիրքերի ամրապնդմանը, տարածաշրջան, որը ԱՄՆ-ը միշտ դիտել և դիտում է որպես իր տնտեսական և քաղաքական հետաքրքրությունների կենտրոններից մեկը:⁶¹

1947թ. նոյեմբերի 29-ին ՍՄԿ-ի Գլխավոր Ասամբլեան ծայրերի երկու երրորդի առավելությամբ ընդունեց 181-րդ բանաձևը՝ Պաղեստինում անգլիական մանդատը դադարեցնելու մասին: Ըստ այդ բանաձևի Պաղեստինը բաժանվեց արաբական և հրեական մասերի պահպանելով տնտեսական միասնությունը: Բանաձևին կողմ քվեարկեցին 33 երկիր, այդ թվում նաև ԱՄՆ-ը և ԽՍՀՄ-ը, դեմ քվեարկեցին 14 պետություն, իսկ 10-ը այդ թվում նաև Անգլիան, ծեռնային մասերը:⁶²

«Գլխավոր Ասամբլեայի որոշման համաձայն Անգլիայի մանդատային իրավասությունները Պաղեստինում դադարեցվելու էին 1948թ. մայիսի 15-ին, իսկ անգլիական զորքերի դուրսբերումը իրականացվելու էր մինչև 1948թ. օգոստոսի մեկը»:⁶³

Համաձայն ՍՄԿ-ի 181-րդ որոշման, արաբական պետության տերիտորիան կազմելու էր 11.1 հազ. կմ², Պաղեստինի տարածքի 42 տոկոսը, ներառյալ Արևմտյան Գալիլեան, Ավկո /Ալյա/ և Նաբաթեք քաղաքները, երկրի արևելյան մասը՝ Էդդեբյունյան բարձունքներից մինչև Բերսեբա, Դազան, ինչպես նաև Յաֆֆան, որն ունենալու էր անկախ կարգավիճակ:⁶⁴ Հրեական պետությունը ունենալու էր 14.1 հազ. կմ² տարածք, կամ Պաղեստինի տարածքի 56 տոկոսը, ներառյալ Գալիլեան, Թել-Ավիվը, Արևելյան Գալիլեան, Էդդեբյունյան բարձունքների մի մասը: Երուսաղեմին և Բերդեհեմին տրվում էր միջազգային կարգավիճակ: 1948թ. սեպտեմբերի 11-ին ՍՄԿ-ի 194-րդ բանաձևը կրկին հաստատեց Երուսաղեմի միջազգային կարգավիճակը:⁶⁵

Առաջարկվող արարական պետության մեջ արվում էին 811.000 արաբ և 10.000 հրեա, իսկ հրեական պետության մեջ 499.000 հրեաներ և 435.000 արաբներ:⁶⁸

Երուսաղեմում բնակչության թիվը կազմում էր 205.000 մարդ, որից 105.000-ը արաբ, իսկ 100.000-ը հրեա: 1947թ. վերջին Պաղեստինի բնակչությունը կազմում էր 1.845.000 մարդ, որից 1.237.000-ը արաբ, իսկ 608.000-ը / 33 տոկոս/ հրեա: Բանաձևը ընդունելու պահին Պաղեստինի հողային տարածքների 93 տոկոսը պատկանում էր արաբներին, և միայն 7 տոկոսը հրեաներին:⁶⁹ Այսպիսի պայմաններում արաբները բնականաբար չէին կարող ընդունել Պաղեստինի պայտինակ բաժանումը: Գլխավոր Ասամբլեայի ընդունած բանաձևը նախատեսում էր անգլիական զորքերի դուրս բերումից հետո մոտ 2 ամսվա ընթացքում ժամանակավոր հսդիուրդների կողմից կազմակերպել Ասիմանադի ժողովի ընտրություններ և մշակել դեմոկրատական Ասիմանադության նախագիծ: Ասկայն դեպքերի հետագա ընթացքը ցույց տվեց, որ հնարավոր չէ իրականացնել ՄԱԿ-ի բանաձևը: Արդեն 1947թ. նոյեմբերին սիոնիստական ադմինիստրացիան Պաղեստինում իր տրամադրության տակ ուներ զգալի զինված ուժեր, որոնք իրականացնելու էին պաղեստինյան արաբներին վտարելու գործընթացը:

«Չրեական ոստիկանության /խազանա/ կանոնավոր զինուժը կազմում էր 16.000 մարդ»⁷⁰, չխաչված Ազգային ռազմական կազմակերպության /Իրզուն 9 Վայ Լեուսի-5.000 մարդ/ և Պալմահան / զինված վերաբնակիչները 2.100 մարդ»⁷¹:

Սիոնիստների այս զինուժին պետք է դիմադրեր «Արաբական ազատագրական բանակը» Ֆալգի ալ-Կաուկաջի գլխավորությամբ, որն ուներ տակ 6.000 զինվոր ՄԱԿ-ի Անվտանգության հսդիուրդը 1948թ. մարտ-ապրիլ ամիսներին քննարկեց պաղեստինյան հարցը: ՄԱԿ-ի ներկայացուցիչները հայտարարեցին, որ անհնար է իրականացնել ՄԱԿ-ի 1947թ. նոյեմբերի 29-ի որոշումը: ՄԱԿ-ը առաջարկեց Պաղեստինը մտցնել ՄԱԿ-ի հովանու ներքո, որը երկրամասը կառավարելու համար պետք է նշանակեր գեներալ-նահանգապետ:

Ասկայն ՄԱԿ-ում կային նաև այլ տեսակետներ: «Ամերիկյան սեմաուր Օստինը 1948թ. ապրիլին առաջարկեց Պաղեստինում ՄԱԿ-ի դրոշմ կան նրա փոխարեն օգտագործել ՄԱԿ-ի ոստիկանական ուժերը՝ ռազմական գործողությունները կանխելու համար: ՄԱԿ-ի խնամակալությունը այս դեպքում կվերածվեր ՄԱԿ-ի խնամակալության»⁷²:

ՄԱԿ-ի նախաձեռնությամբ 1948թ. ապրիլ-մայիսին իրավիճակը Գլխավոր Ասամբլեայի հասուկ նստաշրջան, որտեղ ՄԱԿ-ը առաջ քաշեց Պաղեստինի ժամանակավոր կառավարման մի շարք ծրագրեր այդ թվում նաև գերագույն կոմիտարի նշանակում: Ընդ որում գեներալ Նահանգապետի «ժամանակավոր կառավարումը» պետք է տևեր այնքան ժամանակ, քանի դեռ վերջինս չէր հասել հրեաների և արաբների միջև խաղաղ համազորնակցության և ինքնավարության այնպիսի ձևի հաստատման, որը ընդունելի կլիներ և արաբների, և հրեաների կողմից:⁷³ Զարկ ենք համարում ընդօգնել, որ ՄԱԿ-ի վերտիշյալ քաղաքականությունը ընդհանուր գծերով Անգլիայի վարած քաղաքականության կրկնօրինակում էր, միայն գլխավոր դերակատարի փոփոխությամբ: Այսպիսի պայմաններում Անգլիան անսպասելիորեն մայիսի 14-ին հայտարարեց իր մանդատի դադարեցման և գորքերի դուրսբերման մասին:

«Չաշվարկը կայանում էր նրանում, որ սկսված արաբ-իսրայելական պատերազմի ընթացքում արաբները Անգլիայի օգնությամբ կհասնեն հաղթանակի, որից հետո այստեղ կձևավորվի անգլո-արաբական միություն»⁷⁴:

Ինչպես տեսնում ենք Անգլիան մի վերջին անգամ փորձում էր այս կամ այն կերպ Պաղեստինը պահել իր հսկողության տակ: Այս քայլով Անգլիան լուրջ հարված հասցրեց ՄԱԿ-ի ծրագրերին: Նույն օրը 1948թ. մայիսի 14-ին Չրեական Ազգային հսդիուրդը, կազմված հրեական գործակալության ներկայացուցիչներից, հռչակեց Իսրայելի անկախությունը: Այս ակտը անմիջապես ճանաչվեց ՄԱԿ-ի կողմից:

«ՄԱԿ-ի նախագահ Տրուսենը ճանաչեց Իսրայելի անկախությունը դրա հռչակումից 5 րոպե անց»: Տրուսենը միաժամանակ խոստացավ ցանկացած քաղաքական և տնտեսական բնույթի օգնություն Իսրայելին, որոնք վերջինիս կարող են պետք գալ մուտակա ամիսներին:

2. 1948-1949 թթ. արաբա-իսրայելական պատերազմը և իսրայելա-պաղեստինյան հակամարտության նկատմամբ ՄԱԿ-ի դիրքորոշումը (1948-1956թթ.):

Պաղեստինցի արաբների և հրեաների միջև զինված բախումները, ինչպես նշեցինք, սկսվել էին դեռ 1929թ., սակայն այդ բախումները արաբա-իսրայելական պատերազմի վերածվեցին 1948թ. ապրիլին: Դեռ 1945թ. փետրվարին Չագանայի իրամանադրությունը ընդունել էր «Ա» ծրագիրը, իսկ 1947թ. մայիսին «Բ» և նոյեմբերին «Գ» ծրագիրը:⁷⁵ «Ա» ծրագիրը նախատեսում էր չեզոքացնել պաղեստինցի արաբների զինված ուժերը, իսկ «Բ» և «Գ» ծրագրերը չեզոքացնել նաև հարևան արաբական երկրների զինված ուժերի աջակցությունը պաղեստինցի արաբներին:⁷⁶

1948թ. մարտին Չագանան ընդունեց «Դ» ծրագիրը կամ Դալեթի նախագիծը, որը նախատեսում էր մինչև 1948թ. մայիսի 15-ը անգլիական մանդատի դադարեցման օրը, որքան հնարավոր է շատ տարածքներ գրավել արաբներին տրամադրված տարածքներից:⁷⁷ 1948թ. ապրիլի մեկին Չագանան ձեռնարկեց «Լաչսիոն» գործողությունը, որը նախատեսում էր միջանցք պահպանել Թել-Ավիվի և Երուսաղեմի միջև և բաժանել պալագա արաբական պետության տարածքը երկու մասի:⁷⁸

Ապրիլի 10-ին խրայելական զինվորները գրավեցին Երուսաղեմի արևմտյան արվարձանների մոտ գտնվող Դեյր-Յասին արաբական գյուղը, սպանվեց 350, զերի վերցվեց 50 մարդ:⁵⁹ Երկու օր անց ապրիլի 12-ին գրավվեց Երուսաղեմից 6 մղոն արևմուտք գտնվող արաբական Կոլոնիա գյուղը:⁶⁰ Ապրիլի 21-ին լիբանակալ հրամանատարությունը հայտարարեց, որ դուրս է բերում իր զորքերը Չաֆա քաղաքից: Այդ մասին ինպես և արաբները և հրեաները: Մեկօրյա բախումը ավարտվեց հրեաների հաղթանակով և քաղաքի արաբական բնակչության արտաքսումով: Ապրիլի 27-ին Չաֆան ծնոնարկեց «Չամեթը» գործողությունը, որի արդյունքում նախ գրավվեցին Յաֆային շրջապատող արաբական գյուղերը, իսկ մայիսի 13-ին նաև Յաֆա քաղաքը:⁶¹ Մայիսի 3-14-ը արաբներից գրավվեց արևմտյան Գալիլեան Արայով հանդերձ, որի արաբական բնակչությունը տեղահանվեց: Չնայած այդ հաջողություններին, հրեական զինված ուժերին չհաջողվեց իրենց վերահսկողության տակ առնել Բեթղեմեմ-Երուսաղեմ, Ումալա-Երուսաղեմ, Երիթով-Երուսաղեմ ճանապարհները: Դա անելու դեպքում փաստորեն ամբողջ արևմտյան ափը կանցներ հրեաների վերահսկողության տակ: Ապրիլի 14-ին հրեները իրականացրին «Փիթֆորկ» գործողությունը և մտան արևմտյան Երուսաղեմ:⁶²

Իսրայելի անվտանգության պաշտոնական հռչակումից հետո ռազմական գործողությունները Մերձավոր Արևելքում բնակվածներին նոր փուլ: Անգլիայի քաղաքականությունը մի կողմից հրահրել արաբական երկրներին Իսրայելի դեմ և

ԱՄՆ-ի քաղաքականությունը մյուս կողմից՝ ամրապնդել Իսրայելի դիրքերը և օգտագործել դրանք հոգուտ սեփական շահերի իրականացման, դրան գումարած արաբական երկրների դիրքորոշումը չնմանել Իսրայելը, խորացրին հակամարտությունը: Հորդանանում արաբական լեգեոնի շտաբի պետ զենքավոր Ջոն Բագդոբը գրում է . « Արաբական լեգեոնը կամ Հաշիմյան թագավորության կանոնավոր բանակը որոշեց բրիտանական մանդատի ժամկետը լրանալու պահին մայիսի 15-ին մտնել Պաղեստին: Մայիսի 18-ին Լիզայի զորքերը մտան Արևելյան Երուսաղեմ: Հին քաղաքում զերի վերցվեց 1500 հրեա»:⁶³

Լիզայի բանակը կազմված էր սիրիական, լիբանանյան, իրաքյան և եգիպտական զորքերից: Իսրայելին պատերազմ հայտարարեցին՝ Սիրիան, Լիբանանը, Հորդանանը, Իրաքը, Եգիպտոսը, Եմենը և Ասուդյան Արաբիան:

Ներպաղեստինյան հակամարտությունը վերածեց համընդհանուր արաբա-իսրայելական պատերազմի: Ռազմական գործողությունների ընթացքում Պաղեստինի տարածքի այն մասը, որը ԱՄՆ-ի որոշման համաձայն հատկացվելու էր պաղեստինցի արաբներին, օկուպացվեց և բաժանվեց պատերազմող կողմերի միջև: «Հուլիսի 11-ին ընկավ արաբական Լուդա քաղաքը, որը լքեցին 30,000 արաբներ, հուլիսի 12-ին նույն բախտին արժանացավ Ումալա քաղաքը, իսկ ավելի ուշ Բեռլեբան»:⁶⁴ Արաբների պարտությունը քիչ չափով նպաստեց նաև Արաբական Լիզայի ներսում երկպառակությունները: Օկուպացված տարածքի մեծ մասը Արևմտյան Գալիլեան, Արևմտյան Նեգեվը և Երուսաղեմի արևմտյան մասը կամ Նոր քաղաքը գրավեց Իսրայելը: Այդ տարածքները կազմում էին 6,600 կմ²: Հորդանանին անցավ Արևելյան Պաղեստինը կամ Հորդանան գետի արևմտյան ափը և Երուսաղեմի արևելյան մասը կամ հին քաղաքը մոտ 5,500 կմ²: Եգիպտոսին անցավ Ղազայի հատվածը 258 կմ²: Այսպիսով ԱՄՆ-ի բանաձևը ամբողջությամբ չիրականացավ: Պաղեստինյան արաբական պետություն չստեղծվեց: ԵՎ այս հարցում մեզիք իրենց բաժինն ունեին ոչ միայն հրեաները Իսրայելը, այլ նաև Անգլիան և արաբական երկրները:

1949թ. փետրվար-հուլիս ամիսներին Իսրայելը համաձայնագրեր կնքեց արաբական երկրների հետ:⁶⁵ «Փետրվարի 24-ին Իսրայելը համաձայնագիր ստորագրեց Եգիպտոսի, մարտի 23-ին Լիբանանի, ապրիլի 3-ին Հորդանանի, հուլիսի 20-ին Սիրիայի հետ»:⁶⁶ Արդյունքում Իսրայելի տարածքը կազմեց 20,7 հազ կմ²: Ավելի քան 900,000 արաբներ ստիպված լքեցին Պաղեստինը, որը հետագա տարիներին ավելի խորացրեց արաբա-իսրայելական հակամարտությունը դրան տալով նոր բնույթ: Մինչ հիմա պաղեստինցի փախուստյանների հարցը կազմում է իսրայելա-պաղեստինյան բանակցությունների հիմնական կետերից մեկը:

1952թ. Իսրայելում ընդունվեց օրենք «բացակայող տերերի հողերի մասին»: Ցանկանած արաբի հող Պաղեստինում սկսած 1947թ. Մոյսեթերի 29-ից կարելի էր թունագրավել, եթե դրա տերը իր բնակավայրից բացակայում էր քելուզ մեկ օրով: Արդյունքում մինչև 70-ական թթ. կեսերը Իսրայելի արաբները կորցրին իրենց հողերի 80 տոկոսը: Եթե 1948թ. Իսրայելի տարածքում կար 9 արաբական քաղաք և 510 գյուղ, ապա 70-ական թթ. վերջին մնաց Չքաղաք և 107 գյուղ:⁶⁷

Այս ընթացքում ԱՄՆ-ը Իսրայելին ցույց տվեց զգալի օգնություն: 1948թ-ի նախընտրական քարոզարշավի ժամանակ Տրումենին էր պատկանում այն միտքը, որ ոչ ոք չի կարող ստիպել իսրայելական կառավարությանը հանձնել գրաված տարածքները:⁶⁸ ԱՄՆ-ի ռազմաստրատեգիական և քաղաքական հետաքրքրությունների մասին այս տարածաշրջանում հարկ ենք համարում անդադանալ ավելի մանրամասնորեն: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ԱՄՆ-ը տարածաշրջանը դիտում էր «ամենահավանական տարածքը նոր համաշխարհային պատերազմ սկսելու համար»:⁶⁹ Մերձավոր Արևելքը դիտվում էր պոտենցիալ ռազմական բազա խՍՀՄ-ի դեմ ռազմական գործողություններ սկսելու պարագայում: Չգտելով այստեղ տեղծել հավախտիրային դաշինք՝ ԱՄՆ-ը փորձում էր միաժամանակ հենվել արաբական ազգայնական ուժերի վրա: Այս առումով ԱՄՆ-ի ուշադրությունը գրավում էին երկու կոնֆլիկտային իրավիճակներ: Առաջինը հակամարտությունն էր Անգլիայի և Իրանում ու արաբական երկրներում ընթացող ազատագրական ուժերի միջև

Այարտիզանական կրիվները Սուեզի շրջանում, Մոսսադիվի հակամարտության գործողությունները Իրանում: Երկրորդ ժամանակավորապես կարգավորված արաբ-իսրայելական հակամարտությունը էր: Իր առջև խնդիր դնելով դուրս մեկ տարածաշրջանից Անգլիային և կասեցնել խՍՀՄ-ի ազդեցությունը ԱՄՆ-ը ձգտում էր հենվել որոշ արաբական երկրներում առկա հակամարտության տարածադրությունների վրա և հասնել արաբ-իսրայելական հակամարտության իր համար ցանկալի լուծման: Այս խնդիրները լուծումը շատ բանով կապված էր Եգիպտոսում տիրող իրավիճակի հետ: Ինչպես նշում է մերձավորարևելյան հարցերով ամերիկացի մասնագետ Քոլիվենը. «ԱՄՆ-ում տեղեկացված էին այն դավադրության մասին, որ Եգիպտոսում նախապատրաստում էին ազատ սպաները»:⁵⁰

ԱՄՆ-ը խնդիր ուներ. «պահել Եգիպտոսը որպես ամերիկյան քաղաքականության համար առանցքային երկիր, օժանդակել, որպեսզի Եգիպտոսում տեղդիվ այնպիսի քաղաքական վարչակարգ, որը ի վիճակի կլինի տարածաշրջանում կազմել ռազմական դաշինք Իսրայելի հետ»:⁵¹ Ամերիկյան այս քաղաքականությունը իր մի ծայրով ուղղված էր Անգլիայի, մյուսով խՍՀՄ-ի դեմ: Այս առումով հարկ ենք համարում ներկայացնել Ս և նվ կարծիքը 1951թ. կապված «փոխադարձ անվտանգության» ծրագրով Իսրայելին ներգրավելու հետ ԱՄՆ-ում հրապարակվեց հատուկ հայտարարագիր. «Ինչ պատճառներով Իսրայելը կարիք ունի ամերիկյան օգնության»: Այնտեղ մասնավորապես ասվում էր. «Գոյություն ունի մեծ վտանգ կապված Իրանում կամ մեկ այլ մերձավորարևելյան երկրում կոմունիստական վարչակարգ հաստատվելու հետ: Այդ առումով Իսրայելը հայնդիսանում է այն ամրոցը, որը նպաստելու է տարածաշրջանում դեմոկրատիայի հաստատմանը»:⁵²

ԱՄՆ-ի քաղաքական շրջանակները չէին քաջցնում իրենց մտադրությունները Իսրայելի ուժերը օգտագործել հնարավոր կոնֆլիկտների ժամանակ: Ըստ այդմ էլ միշտ շեշտվում էր իսրայելական բանակի մարտունակությունը բարձրացնելու հարցը:

Այս ամենին զուգահեռ 1957թ. ստեղծվեց «ամերիկա-իրեական լիգա», որը Իսրայելին ցույց էր տալու ֆինանսա-տնտեսական օգնություն, ինչպես նաև ապահովելու էր ԱՄՆ-ի և Իսրայելի միջև համագործակցությունը կրթական, մշակութային և լրատվության բնագավառներում: Սա հնարավորություն տվեց ԱՄՆ-ին անմիջականորեն ազդել Իսրայելի կրթական համակարգի ձևավորման վրա: Ինչպես տեսնում ենք ԱՄՆ-ը Իսրայելին մատակարարում էր նաև «ազալաբարական գեներ»: 1952թ. ԱՄՆ-ի և Իսրայելի միջև կնքվեց ռազմական համաձայնագիր, որին հետևեց «արտակարգ տնտեսական օգնության մասին» համաձայնագիրը: Սրանք զուգահեռ կնքվեցին համաձայնագրեր օդային և ծովային հաղորդակցության, փոխադարձ անվտանգության ապահովման բնագավառներում: Այս վերջին համաձայնագրով Իսրայելը պարտավորվում էր հարկ եղած դեպքում ԱՄՆ-ի տրամադրության տակ դնել իր նյութատեխնիկական միջոցները, ինչպես նաև ԱՄՆ-ի հետ մասնակցել տարածաշրջանի պաշտպանությանը: 1953թ. հոկտեմբերին ընդունվեց ծրագիր երկրի «ռազմականացման մասին»: Իսրայելի կանոնավոր բանակը հասավ 50.000-ի, այն ժամանակ երբ արաբական երկրների կանոնավոր բանակները միասին վերջրած կազմում էին 150.000 մարդ:⁵³

Իրավիճակը Մերձավոր Արևելքում ավելի բարդացավ 1950թ. մայիսի 25-ից հետո, երբ Անգլիան, Ֆրանսիան և ԱՄՆ-ը կնքեցին «երեքի համաձայնագիրը», որը նախատեսում էր անսահմանակա ռազմական օգնության տրամադրում ինչպես Իսրայելին, այնպես էլ արաբական երկրներին: 1951թ. հոկտեմբերին նրանց առաջարկվեց ստեղծել ռազմական դաշինք՝ «միջինարևելյան հրամանատարություն» անունով: «ԱՄՆ-ը, Անգլիան, Ֆրանսիան և Թուրքիան 2 տարի 1951-1953թթ. զբաղված էին միջինարևելյան հրամանատարություն ստեղծելու պլանով, որի հիմնական նպատակը Եգիպտոսին և մյուս արաբական երկրներին այդ բլուի մեջ ներգրավելն էր: 1951թ. նոյեմբերի 10-ին այդ երկրների կազմավորությունները դեկլարացիա հրապարակեցին միջինարևելյան հրամանատարություն ստեղծելու սկզբունքների մասին: Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում պետք է տեղակայվեին զինված ուժեր, ընդ որում այդ հրամանատարության շտաբը պետք է լիներ Եգիպտոսում: Այս ջանքերը հաջողություն չունեցան և ԱՄՆ-ը 1953թ. առաջ քաշեց նույն բլուի մեկ այլ տարբերակ՝ այս անգամ արդեն միջինարևելյան երկրների իրախոսային գոտի անվանումով: Այդ բլույը պետք է Մերձավոր և միջին Արևելքը վերածեր արևմտյան տերությունների հուսալի և հզոր հենարանի»:⁵⁴

Ամերիկացիները լավ էին ըմբռնում Եգիպտոսի՝ որևէ դաշինքի հարելու նշանակությունը և ինչպես նշում է Ե. Աբգարյանը. «Ռազմական դաշինքին Եգիպտոսի միասնացումը, որպես առավել ազդեցիկ արաբական երկիր, իր հետևից կտաներ նաև այլ արաբական երկրներին: Սա իր հերթին սերտ շաղկապված տեսք կտար Յուսիսային Ֆարուսին, որի ստեղծման համար ԱՄՆ-ը ջանք չէր խնայում: Դրանով կըջրպատվեր խՍՀՄ-ի հարավային սահմանը»:⁵⁵

1952թ. հուլիսի 23-ին Կահիրեի՝ զինվորական կայազորի զորամասերում ապստամբություն բռնկվեց: Ելույթը ղեկավարում էր «ազատ սպաներ» կազմակերպությունը Գ.Ա. Նասերի գլխավորությամբ: Ֆարուկ թագավորը հրաժարվեց գահից: 1953թ. Եգիպտոսը հռչակվեց հանրապետություն:

1956թ. հուլիսի 26-ին Նասերը հայտարարեց Սուեզի ջրանցքի ընկերության ազգայնացման մասին: Վերևում արդեն նշեցինք, որ Իսրայելը պատրաստ էր ռազմական գործողություններ սկսել դրանից առաջ:

Սուեզի ջրանցքի ազգայնացումը մեծ վնաս հասցրեց նախ և առաջ Անգլիային, որին պատկանում էր ընկերության բաժնետոմսերի 45 տոկոսը: Ջրանցքով երթևեկելու 1/3-ը բաժին էր ընկնում անգլիական

նավերին: Թեև 1954թ. անկող-եզիպատական պայմանագրով Անգլիան Եզիպտոսից դուրս էր բերել իր վերջին 80.000 զինվորներին, սակայն «Սուեզի ջրանցքի տարածքում դեռևս պահպանվում էին բրիտանական ռազմական բազաները, որոնց սարքավորումները զննահատվում էին 40-50 միլիոն ֆունտ ստեռլինգ: Ֆրանսիան և ձգտում էր խելքի բերել Նասերի կառավարությանը»⁹⁶ Ինչ վերաբերում է ԱՄՆ-ին, ապա վերջինս «Ճախող երեք տարիներին շարունակաբար Եգիպտոսի նկատմամբ, մեղմ առած, ոչ բարեկամական դիրք էր գրավում, քանի որ վերջինս հրաժարվում էր միանալ Մերձավոր Արևելքում ռազմական խնդրակցություն ստեղծելու ԱՄՆ-ի ջանքերին: Սակայն երկրորդ համաշխարհայինից հետո ձգտելով նավթով հարուստ և ստրատեգիական դիրք ունեցող Մերձավոր Արևելքում ուժեղացնել իր ազդեցությունը ԱՄՆ-ը չէր խորշում ընդհատվել այդ շրջանի հին, արդեն թուլացած և հեղինակազուրկ պետության իր դաշնակից Անգլիայի հետ և նոր հիմունքների վրա գրավել նրա տեղն այդ շրջանում: Ուսումնասիրության միասնությանը կապված, բայց տնտեսական հակադիր շահերով գործող այս տերությունների մրցակցության բեժ պահն էր»⁹⁷:

1956թ. հոկտեմբերի 29-ին Իսրայելը, իսկ 31-ին Անգլիան և Ֆրանսիան ագրեսիա սկսեցին Եգիպտոսի դեմ: Մինչ այդ Անգլիան և Ֆրանսիան հայտարարել էին, որ իրենց զորքերը կզբաղեցնեն առանցքային դիրքերը Սուեզի շրջանում, եթե 12 ժամվա ընթացքում Իսրայելը և Եգիպտոսը չդադարեցնեն ռազմական գործողությունները»⁹⁸:

ԱՄՆ-ը չէր խրախուսում եռյակին՝ հրապարակայնորեն քննադատելով նրանց գործողությունները ԱՄՆ-ում և նույնիսկ նոյեմբերի 1-ին Ղլխավոր Ասամբլեա մտցրեց բանաձևի նախադի, որով «Նախատեսվում էր կրակի դադարեցում և Խառնելական զորքերի դուրսբերում Սինայի թերակղզուց, Դազայից և Էլ-Արիշի շրջաններից, որոնք գրավվել էին ռազմական գործողությունների ընթացքում»⁹⁹ Չնայած ամերիկյան կառավարությունը կհստակ էր այն տեսակետը, որ պետք է կասեցնել ազգային-ազատագրական շարժումները տարածաշրջանում, բայց հաշվի առնելով ուժերի հարաբերակցությունը այդ պահին, ԱՄՆ-ի կառավարությունը մտալավություն ուներ, որ ուղղակի ռազմական միջամտությունը հոյի է լուրջ վտանգներով: ԱՄՆ-ը շահագրգռված էր նաև արաբական աշխարհում Անգլիայի և Ֆրանսիայի դիրքերի թուլացումով, ինչը հնարավորություն կտար առաջացած «վակուումը» (ցնեղ ամերիկյան ազդեցությանը: Բացի դրանից ԱՄՆ-ը հույս ուներ իր «չեզոքությանը» շահել Եգիպտոսի վստահությունը, նրա հետ կնքել պայմանագրեր և կասեցնել արաբական այդ հզոր երկրում ԽՍՀՄ-ի օրեցօր նկատվող ազդեցության ուժեղացումը: «ԱՄՆ-ի ղեկավարները չէին ցանկանում Մերձավոր Արևելքի ժողովուրդների ապրում վարկաբեկված գաղութարար պետությունների հետ ուղղակի միավորվածի դերում հանդես գալ»¹⁰⁰:

Սակայն ամերիկյան այս ծրագրերին ժամանակավորպես փնհանված չէր և կատար ածել: Ավելին, խորհրդ-եգիպտական նկատվող մերձեցումը ավելի ուժեղացավ, որի ամսիջևալն արդյունքը եղավ Եգիպտոսին ԽՍՀՄ-ի ցույց տված բազմաբնույթ օգնությունը: 1956թ. նոյեմբերի 5-ին ԽՍՀՄ արտգործնախարարությունը հեռագրի ուղարկեց ԱՄՆ-ի Անվտանգության խորհուրդ, որտեղ ասվում էր. «Խորհրդային ղեկավարությունը պարտավորվում է իր լուսնն ներդնել ագրեսորների սանձման գործում և խաղաղության հաստատման համար Եգիպտոս ուղարկել անհրաժեշտ ռազմա-օդային և ռազմա-մոլային ուժեր»¹⁰¹: Նույն օրը ԽՍՀՄ կառավարության ղեկավար և, Խորուշով նուսաներ ուղարկեց Անգլիայի և Ֆրանսիայի ղեկավարներին, որտեղ ասվում էր. «Մենք չի ենք վճռականության ուժ գործադրելու հարցում, որպեսզի խորտակենք ագրեսորներին... մենք հույս ունենք, որ Դուք խելվանություն կցուցաբերեք և կանք անհրաժեշ ենթադրություններ»¹⁰²:

Նմանաբնույթ նուսա խորհրդային ղեկավարությունը ուղարկեց նաև Իսրայելի վարչապետին. «Խորհրդային ղեկավարությունը այս պահին բայել է ձեռնարկում պատերազմը դադարեցնելու համար: Խորհրդային կառավարությունը հետ է կանչում իր դեսպանին Թել-Ավիվից: Դուսով ենք Իսրայելի ղեկավարությունը կզնահատի նախազուշացումը»¹⁰³:

Արդյունքում նոյեմբերի 6-ին Անգլիան և Ֆրանսիան, իսկ նոյեմբերի 8-ին Իսրայելը հայտարարեցին կրակը դադարեցնելու մասին: ԱՄՆ-ի նախաձեռնությանը ստեղծվեցին խաղաղապահ զինված ուժեր գեներալ Բերնոյի ղվախորությանը¹⁰⁴:

Իսրայելի կառավարությունը շուրջ 2 ամիս ձգձգեց և ԱՄՆ-ի որոշման համաձայն 1957թ. հունվարի 9-ին դուրս բերեց իր զորքերը Սինայի թերակղզուց և Էլ-Արիշի շրջանից, իսկ 1957թ. մարտի 7-ին ամբողջովին Եգիպտոսի տարածքից և Դազայի հատվածից: Եռյակի ագրեսիան այսպիսով ունեցավ անփառունակ վախճան:

Ամերիկյան դիվանագիտությունը ստեղծված պայմաններում իր ազդեցությունը պահպանելու և ուժեղացնելու համար ասպարեզ նետեց մի բանաձև, որը տաքավ «Էյզենհաուերի դոկտրինա» անվանումը: 1957թ. հունվարի 5-ին ԱՄՆ-ի նախագահ Էյզենհաուերը դիմեց Կոնգրեսին հատուկ ուղերձով, որտեղ խոսվում էր հետայսու Մերձավոր և Միջին Արևելքում ԱՄՆ-ի «նոր» քաղաքականության մասին: «Դրեզիդենտը քնուրազրեց իրավիճակը տարածաշրջանում որպես ճնշմամասային և պահանջեց թուշ տալ իրեն օգտագործել ԱՄՆ-ի զինված ուժերը ցանկացած պահին: Միաժամանակ նա կոչ արեց արաբական երկրներին հրաժարվել ԽՍՀՄ-ի հետ համագործակցելուց»¹⁰⁵:

Դժվար չէ ենթադրել, որ Էյզենհաուերի դոկտրինան ուղղված էր նախ և առաջ ԱՄՆ-ի դեմ: Իսրայելի կառավարությունը 1957թ. մայիսի 21-ին հայտարարեց այդ դոկտրինային իր հավանության և աջակցության մասին: Արժագանքը եղավ ԱՄՆ-ի կողմից Իսրայելին ցույց տված 75 միլիոն դոլարի օգնությունը: Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ի քաղաքականության մեջ տեղի էր ունենում փոփոխություն: Նա

հրաժարվեց մինչ այդ արաբական երկրների և Իսրայելի հանդեպ գրաված իր «չեզոք» դիրքից: 1962թ. սկսվեց հրքիռների /հոկ տիպի/ մատակարարումը և ռազմական մասնագետների պատրաստումը Իսրայելի համար: Իսրայելը ռազմական գնումներ էր կատարում նաև Անգլիայից, Ֆրանսիայից և Արևմտյան Գերմանիայից:

Այսպիսով, ընդհանրացնելով կարելի է զպ հետևյալ եզրակացության: ԱՄՆ-ի քաղաքականությունը իսրայելա-պաղեստինյան հակամարտության հանդեպ 1948-1958թթ, ձևավորվում է երկու գործոնների ազդեցության տակ: Առաջին գործոնը ամերիկյան դիվանագիտության ձգտումն էր Լոնդոնի և Փարիզի ազդեցության տարածաշրջանում փոխդիրքներ անելիկանով:

Երկրորդ գործոնը անմիջականորեն կապված էր տարածաշրջանում իսրայելի ազդեցության ուժեղացման հետ և նպաստել ուներ ռազմական դաշինքների ստեղծման միջոցով կամխել, հնարավորության դեպքում չեզոքացնել այդ ազդեցությունը: Այդ էր պատճառը, որ ԱՄՆ-ը սկզբից կերպարանակրում էր Եգիպտոսի ներկայացրած արաբական երկրների կոլեկտիվ անվտանգության պայմանագրի վավերացմանը Արաբական Լիգայի անդամ 7 երկրների կողմից: ԱՄՆ-ը որոշում տեսնում էր իր զվարավորությանը ապագայում ստեղծվելիք ռազմական խմբավորման ստույգ: Նամանակապ ծրարների մասն էր կազմում նաև «միջինասրևեյան հրամանատարություն» անվանումով կազմակերպված դաշինք ստեղծելու ամերիկյան փորձերը: ԱՄՆ-ի քաղաքագետները անցնիտա շեշտում էին Արաբական արևելքի կարևոր նշանակությունը իրենց համար և հայտարարում էին, որ ԱՄՆ-ը աճող հետաքրքրություն է ցուցաբերում մերձավորարևելյան պորթեմների նկատմամբ: Մերձավոր Արևելք քաղաքացելու համար ԱՄՆ-ը օգտագործում էր նաև այն հայեցակետը, որ. « Մերձավոր Արևելքի ժողովուրդները չեն վախենում ԱՄՆ-ից, քանի որ գիտեն ԱՄՆ-ի չխառնվելու տրադիցիան և գիտեն, որ ԱՄՆ-ը Մերձավոր Արևելքում տարածքային պահպաններ չունի»: Ընդհանուր առմամբ 1947-1967թթ կարող ենք բնորոշել Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ի քաղաքականության կայացման շրջան:

3.ԱՄՆ-ի քաղաքականությանը Պաղեստինյան հարցի նկատմամբ 1967 և 1973թթ. արաբա-իսրայելական պատերազմների ժամանակաշրջանում:

1957-1967թթ. ընկած ժամանակահատվածը կարելի է բնութագրել որպես արաբա-իսրայելական հակամարտության է ավելի խորացման շրջան: Այս փուլում քաղաքական ասպարեզ է իջնում մի նոր ուժ, կամ ավելի ճիշտ կազմակերպություն, որին վիճակված է պաղեստինցի փախստականներին իրենց հարազատ տները վերադարձնելու և ինքնուրույն արաբական պետություն ստեղծելու քարոչ ու ղեկավարի գործը: Ինչպես իրավացիորեն նշում է Դմիտրիևը. « Պաղեստինցի արաբների որպես պաղեստինյան ժողովրդի համայնքումը պատմական մի գործընթաց է...և այդ գործընթացի հետ մեկտեղ երկու տասնամյակն է, որ շարունակ հարկ է լինում հիմնավորել պաղեստինյան արաբ ժողովրդի ինքնորոշման, ընդհուպ մինչև սեփական պետականության ստեղծելու նիսավումը»:

Խոսքը վերաբերում է պաղեստինյան մի քանի միավորումների հիմքի վրա 1964թ. մայիսին Արևելյան երուսաղեմում Արաբական Լիգայի կողմից, Եգիպտոսի նախագահ Նասերի մտահարգմանը ստեղծված Պաղեստինի Ազատագրության Կազմակերպությանը (ՊԱԿ) : 1970թ. ՊԱԿ-ի մեջ կային արդեն 11 կազմակերպություններ , որոնցից ամենահայտնի, Ֆաթ-հ-ն է, հիմնադրված 1958թ. Գորդանանում Յասեր Արաբաթի կողմից: Կողմում է նաև Պաղեստինյան Ազգային Ազատագրական Շարժում: Նա հանդիսանում է ՊԱԿ-ի հիմնական բարդորատարը: ՊԱԿ-ի ռազմական թևը ներկայացնում է Պաղեստինի Ազատագրության ժողովրդական ճակատը, որը հիմնադրել է Ջորջ Գարաշը 1967թ. միավորելով պարտիզանական երեք խմբերի: Այս կազմակերպությունը մերժում է քաղաքական կոմպրոմիսը Իսրայելի հետ և կոչ է անում վերացնել այդ պետությունը: ՊԱԿ-ի մեջ մտնող մյուս ազդեցիկ կազմակերպությունը Պաղեստինի Ազատագրության Դեմոկրատական ճակատն է, որը հիմնադրվել է 1960թ. Խորհրդանցի ուղղափառ քրիստոնյա Նաիֆ Գալաբեեի կողմից: Այս կազմակերպությունը իր հիմնական թշնամի համարում էր սիոնիստ իմպերիալիստներին:¹⁰⁶

ՊԱԿ-ը իր գործունեությունը իրականացնում է երեք հիմնական օրգանների Գործադիր Կոմիտեի, Կենտրոնական Կոմիտեի և Պաղեստինյան Ազգային Խորհրդի միջոցով: Գործադիր Կոմիտեն գտնվում էր Արևելյան Երուսաղեմում և ուներ 15 անդամ, իսկ Կենտրոնական Կոմիտեն ընտրվում էր երեք տարի ժամկետով և գտնվում էր Դազնում:¹⁰⁷

Սկսած 1968թ. ՊԱԿ-ը ղեկավարում է 3. Արաբաթը: 1974թ. Ռաբաթում կայացած արաբական երկրների զգալիաթողովը ՊԱԿ-ը ճանաչեց պաղեստինյան ժողովրդի միակ օրինական ներկայացուցիչ: ՊԱԿ-ը ՄԱԿ-ում ունի դիտորդի կարգավիճակ: 1968թ. ՊԱԿ-ի Ազգային Խորհուրդը ընդունեց Ազգային Խորհրդի կանոնադրությունը, որում առավել կարևորվում է 22-րդ հոդվածը կապված Իսրայելի որպես պետության վերացման հարցի հետ: Այնտեղ մասնավորապես ասվում է. « Սիոնիզմը քաղաքական չարժան է , որը օրգանապես համահունչ է միջազգային իմպերիալիզմին և հակադիր է ազատագրական և առաջադիմական շարժումներին ամբողջ աշխարհում: Իր բնույթով ռասիստական, ֆանատիկ, ագրեսիվ և զաղուբարարական շարժում է, իսկ մերթողներով ֆաշիստական է: Իսրայելը սիոնիստական շարժման գործիքն է և աշխարհագրական առումով միջազգային իմպերիալիզմի կողմից հիմնադրվել է արաբական աշխարհի կենտրոնում, որպեսզի արգելի արաբների հույսը միավորվելու, ազատագրվելու և առաջադիմելու: Իսրայելը սպառնալիքի է հիմնական արթյուն է Մերձավոր Արևելքում խաղաղության հաստատման համար: Պաղեստինի ազատագրման ընթացքում պետք է կործանվի սիոնիզմի և

ինձերիալիզմի այդ ներկայությունը և պետք է աջակցվի խաղաղության հաստատմանը Մերձավոր Արևելքում»:¹⁰⁸

1974թ. այս կետին ավելացավ նաև ՊԱԿ-ի այսպես կոչված փուլային ծրագիրը, որը նախատեսում էր¹⁰⁹

1. Չինված պայքարի ընթացքում ստեղծել ազգային իշխանություն Իսրայելից ազատագրված ցանկացած տարածքում /հողված 2/
2. Շարունակել պայքարը Իսրայելի դեմ օգտագործելով ազատագրված տարածքները որպես հենակետ /հողված 4/
3. Սադրել վերջնական պատերազմ Իսրայելի դեմ, որի ժամանակ Իսրայելի արաբ հարևանները կկործանվեն այն և կազատագրեն ողջ Պաղեստինը:

ՊԱԿ-ի նման անհանդուրժողականությունը Իսրայելի դեմ մասամբ բացատրվում է նաև նրանով, որ այս շրջանում արաբների հավանաբանությունը ընդունեցին զանգվածային բնույթ: Արաբական բնակչությունը վերահսկվում էր իսրայելական ռազմական ադինիստրացիայի կողմից, կատարվում էր արաբական բնակչության բռնի վերաբնակեցում:

Արաբա-իսրայելական հարաբերությունների լարվածության խորացման պատճառները հանգում էին հետևյալ երեք սկզբունքային կետերին՝

1. Տարածքային հիմնախնդիրներ;
2. Պաղեստինցի արաբ փախստականների ճակատագիրը;
3. Ջրային հարցը կապված Զոդդանան գետի ջրերի օգտագործման հետ¹¹⁰

Ինչպես նշում է Գ. Լիկիտինան. « Չնայած 1949թ. մայիսի 12-ին Լոզանում Իսրայելը և արաբական երկրները համաձայնվել էին բննարկել ՄԱԿ-ի կողմից նախատեսված սահմանների հարցը, սակայն դեպքերի հետագա զարգացումը խանգարեց դրան»:¹¹¹ 1967թ. պատերազմի նախօրեին Իսրայելը վերահսկում էր Պաղեստինի տարածքի 77%-ը, ինչպես նաև 1/3-ը այն տարածքի, որը պետք է անցներ սահմանները, այլ ընդհանրապես, դրանք կարող են համարվել սուկ ժամանակավոր, պայմանական կամ ռոտտից, որ 1949թ. ընդունված «դեմարկացիոն գծերը», չեն հանդիսանում մշտական քաղաքական հիմնարկ, այլ ընդհանրապես, դրանք կարող են համարվել սուկ ժամանակավոր, պայմանական կամ ռոտտ իրենց բնույթի բացառապես ռազմական: Արաբական երկրները հրաժարվում էին որևէ քառակուսյուններ վարել Իսրայելի հետ, քանի որ վերջինս հրաժարվում էր կատարել ՄԱԿ-ի 1948թ. դեկտեմբերի 11-ի որոշումը վերադարձնել արաբ փախստականներին իրենց նախկին բնակավայրերը: 1961թ. մարտի 5-ին արաբական երկրները ՄԱԿ-ի Բաղաքական Կոմիտե մտցրին նախագիծ արաբ փախստականների վերադարձի հետ կապված: 1962թ. Իսրայելական կառավարությունը պաշտոնապես մերժեց այն: 1963թ. վերջին արաբա-իսրայելական հարաբերությունները հասան իրենց լարվածության գագաթնակետին: Իսրայելի կառավարությունը հայտարարեց Զոդդանան գետի ջրերի պատեմյան մասին, ինչը ջրային սով կարող էր առաջացնել հարևան արաբական երկրներում: 1964թ. հունվարի 13-16-ը Կահիրեում հրավիրվեց համաժողով, որին մասնակցում էին 13 արաբական երկրներ: Այստեղ առաջ քաշվեց Զոդդանանի ջրերի օգտագործման հակաձրագիր: Ծրագրի արժեքը գնահատվեց 6.25 մլն ֆունտ ստեռլինգ: Ծրագրի իրականացման համար նախատեսվում էր 18 ամիս: Նախատեսվում էր Զոդդանան գետի ակունքների հնարավոր մասնակի փակում և հունեղն շեղում: Որոշվեց ստեղծել Սիցայալ Արաբական Զրամանատարություն, որպեսզի Իսրայելի կողմից վերոհիշյալ ծրագիրը ռազմական միջամտությամբ խանգարելու դեպքում նրան հակահարված տրվի:

Ի պատասխան Կահիրեի համաժողովի որոշումների Իսրայելի վարչական Էշրոլը հայտարարեց, որ ջրային պատեմնը այնուամենայնիվ կորվի, իսկ արաբական երկրների կողմից Զոդդանանի ակունքները շեղելու դեպքում Իսրայելը կձեռնարկի համապատասխան քայլեր:

ՄԱՆ-ը, որը արդեն սկսել էր հրաժարվել նախորդ տարիների որոշման իր «արտաքննապես չեզոք» քաղաքականությունից, հայտարարեց, որ. «ՄԱՆ-ը անգործության չեն մատնվի, եթե ինչ-որ երկիր ագրեսիա սկսի Մերձավոր Արևելքում»:¹¹² Նախագահ Ջոնսոնի հրավերով 1964թ. ապրիլին ՄԱՆ ժամանեց Զոդդանանի Դուսեյբ բազավորը, որը ներկայացնում էր արաբական երկրների շահերը: Բանակցությունների բեման պաղեստինցի փախստականների վերադարձի և Զոդդանանի ջրերի օգտագործման հարցն էր: Մեկ ամիս անց ՄԱՆ ժամանեց Իսրայելի վարչապետը: ՄԱՆ-ը այդ ժամանակ գրավված էին փետեմանական պատերազմով և դեմ չէր, որպեսզի Իսրայելը հարվածներ հասցներ իր արաբ հարևաններին:

«Ամերիկյան վարչակազմը տեղեկացված էր ուժերի հարաբերակցության և կողմերի ռազմական պատրաստվածության մասին: Վաշինգտոնի հետաքրքրությունների շրջանակներում էր հարված հասցնել ԽՍՀՄ-ի հեղինակությանը: Իսկ դուր ՄԱՆ-ի կարծիքով հնարավոր էր, եթե Իսրայելը ջախջախեր ԽՍՀՄ-ի արաբ դաշնակիցներին և բարեկամներին: -Պրանից հետո ամերիկյան քաղաքագետների կարծիքով հնարավոր էր կառավարող վարչակարգերի փոփոխություն եզրվառուսում և Սիրիայում: Մերձավոր Արևելքից ԽՍՀՄ-ի դուրս մղումը չէր հանգում ամերիկյան քաղաքականության օրակարգից»:¹¹³ Եգիպտոսում Նասերի իշխանության գլուխ գալուց հետո ՄԱՆ-ը չէին կորցրել հույսը սերտ հարաբերություններ հաստատել արաբական այդ հզոր երկրի հետ: Սակայն ազգային-ազատագրական շարժումները արաբական երկրներում, 1956թ. իրադարձությունները պայտանում էին ՄԱՆ-ի ատրատեգիական և նավթային շահերին տարածաշրջանում: Սա էր հիմնական պատճառներից մեկը, որ ամերիկյան քաղաքական ծրագրերում ավելի էր աճում Իսրայելի դերը: « ՄԱՆ-ի անհաջող

փորձը ներքին հեղաշրջման միջոցով տապալել Սիրիայի բաասիստական կառավարությանը հանդիսացավ պատճառ այն քաղաքական կուրսի ամրապնդման, որը ենթադրում էր օգտագործել Իսրայելի ուժերը սեփական դիրքերի ամրապնդման համար»:¹¹⁴

Իսրայելական կառավարության կողմից սանձազերծած պատերազմը, որը սկսվեց 1967թ. հունիսի 5-ին հանդիսանում էր տրամաբանական հետևանքը ստեղծված իրադրության: Պատերազմը սկսելուց դեռ մեկ ու կես տարի առջ իսրայելական կառավարությունը պատերազմ սկսելը համարում էր արդեն որոշված գործ: Չնայած այն որոշումը խնամքով քաջցնում էին, բայց պարզ էր, որ Իսրայելը սպասում է հարված արդի: Պատերազմի նախապատրաստական շրջանում Իսրայելը անընդհատ ձեռնարկում էր սահմանային սարդիչ գործողություններ հուսալով, որ դրանք կվերածվեն խոշորախառն ուղղակի գործողությունների: Միաժամանակ Իսրայելը մշտական խորհուրդիցություններ էր անցկացնում ԱՄՆ-ի, Անգլիայի, ԳՖՅ-ի կառավարությունների հետ: Պատերազմի նախապատրաստական շրջանին է վերաբերում իսրայելական զինված ուժերի հարձակումը հորդանանյան Սամու գյուղի վրա՝ 1966թ. մեյտեբերի 13-ին: Սա այդ գյուղի դեմ ձեռնարկած երկրորդ խոշոր պատիժ օպերացիան էր, իսկ առաջինը եղել էր հուլիսին: Այս գործողությունները իսրայելական ղեկավարության կողմից մեկնաբանվում էին որպես պատասխան գործողություններ ընդդեմ համբեկության, որոնք կատարվում էին Չորդանանի սահմանից: ԱՄՆ-ի Անվանզուրյան խորհուրդը հատուկ բանաձևով, որը առաջարկել էին Մալին և Լիզերիան, դատապարտեց Չորդանանի դեմ ուղղված այդ գործողությունները: Այդ քննարկից հետո Իսրայելը, սեփական կառավարության զենահամարներ, ստիպված էր «զսպել» իր քաղաքականությունը: Այդ պատճառով 1966թ. դեկտեմբերից Իսրայելը սահմանափակեց իր այդօրինակ գործողությունները ձեռնարկելով միայն սահմանային հրաձգություններ: Այդպիսի միջադեպեր տեղի ունեցան հունվարին Սիրիայի, փետրվարին Չորդանանի և Լիբանանի հետ: Իսրայելական պաշտամենտում նկատվում էր ուժերի երկփեղկում՝ Մապան և Ալդուս կուսակցությունները հանդես էին գալիս հօգուտ դիվանդակության միջոցների կիրառման, իսկ Չեռուս և Իճիճ կուսակցությունները հանդես էին գալիս հօգուտ ռազմական ուժի կիրառման:

1967թ. ապրիլի 5-ին Իսրայելի արտգործնախարար Էրանը հայտարարեց, որ Սիրիայի գործողությունները ենթակա են պատիժ:¹¹⁵ Այս նախաձեռնությանը հետևեց ապրիլի 7-ին Իսրայելի կողմից Սիրիայի դեմ Տիվերի լճի շրջանում ձեռնարկած ռազմական գործողությունը: 1948-49թթ. ռազմական գործողություններից հետո այս գործողությունը իր ծավալով ամենախոշորն էր: Յոթժամյան մարտին մասնակցում էին ռեակտիվ ինքնաթիռներ, տանկեր, հրետանի: Իսրայելական օդուժը մոտ 70կմ ներխուժեց սիրիական տարածք, ռմբակոծեց ճուլնիսկ Դամասկոսը: Այս գործողությունը, որը նաև հետախուզական բնույթ էր կրում, ամրապնդեց Իսրայելի ղեկավարող շրջանակների մեջ տարածված այն կարծիքը, որ կարելի է հասնել արագ և հեշտ հաղթանակի: «Իսրայելում ստացել էր նաև հավաստիացումներ, որ անհրաժեշտության դեպքում ԱՄՆ-ը և Անգլիան կօգնեն նրան»:¹¹⁶ Դրա լավագույն վկայությունն էր ԱՄՆ-ի պաշտպանության նախարար Սակմանայի հայտարարությունը, որտեղ խստված էր կոմունիստական ներթափանցումը կամիսելու համար որոշ միջոցների օգտագործման մասին: Մայիսի 15-ին Իսրայելը նախադրելով ԱՄՆ-ի ուշույն և Չորդանանի հետ կնքված համաձայնագիրը Երուսաղեմում անցկացրեց ռազմական շքերթ: Դեռ մայիսի 9-ին իսրայելական կառավարությունը պաշտամենտը պաշտոնական լիազորություններ էր ստացել Սիրիայի դեմ ռազմական գործողություններ սկսելու համար: Այդ գործողությունների սկսման օր նշանակված էր մայիսի 17-ը: Սակման եզակուստը, որը Սիրիայի հետ ուներ համատեղ պաշտպանության պայմանագիր կնքված 1966թ., հայտարարեց, որ չեզոք դիրք չի գրավի, եթե Իսրայելը Սիրիայի դեմ սկսի ռազմական գործողություններ: Եզիպտոսը սկսեց ձեռնարկել համապատասխան քայլեր: Նրա պահանջով Սինայից, Դազայից և Շարան և Շեյխից դուրս բերվեցին ԱՄՆ-ի ռազմական ուժերը և այնտեղ տեղակայվեցին եզիպտական զորքեր: Մայիսի 28-ին եզիպտոսը հայտարարեց ինչպես իսրայելական, այնպես էլ օտարերկրյան նավերի առաջ քաշայի ծովածոցը փակելու մասին: Իրավացի լինելու համար նշեց, որ այս վերջին որոշումը կարելի է ընդունել միայն ԱՄՆ-ի շրջանակներում: Սակայն ստեղծված իրավիճակը ստիպում էր եզիպտոսին դիմելու այդ քայլին: Արաբայի ծովածոցի փակումը, ինչպես նաև եզիպտական զորքերի տեղակայումը ինչպև տարածքներում փրկեց Սիրիային ջախջախումից: Իսրայելական կառավարությունը հաշվի առնելով ստեղծված իրավիճակը որոշեց հարվածի ուղղությունը փոխել դեպի եզիպտոս: Սա իրարկե չէր նշանակում, քե Իսրայելը հրաժարվում էր հարված հասցնել Սիրիային և Չորդանանին: Իրավիճակի զնախառնը բարդանում էր այնքանով, որ առաջին հայացքից բնում էր, քե Իսրայելը գրավել է պաշտպանողական դիրք: Մայիսի 18-ին ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի ղեկավարները տեղեկացվեցին այն մասին, որ եզիպտական զորքերի տեղակայումը Սինայում ստիպում է Իսրայելին ուժեղացնել իր պաշտպանունակությունը: Այդ մասին հայտարարեց արտգործնախարար Էրանը: Մայիսի 21-ին Իսրայելում սկսվեց մասնակի գորահալմաբ: Ուզմական գործողությունների նախաշննին վաշինգտոնում կայացած եռակողմ հանդիպման ժամանակ /ԱՄՆ, Իսրայել, Անգլիա/ «կազմվեց գործողությունների միասնական ծրագիր ընդդեմ եզիպտոսի»:¹¹⁷ Մայիսի 29-ին Իսրայելը վերջացրեց հանընդհանուր գորահալմաբը: ԱՄՆ-ը Իսրայելին հատկացրեց 27մլն դոլարի ռազմական օգնություն և նրաօդայն զինտեխնիկա: Դուլիսի 5-ին Իսրայելի պաշտպանության նախարար Դայանը իրաժան տվեց սկսել ռազմական գործողությունները: Իսրայելական հրամանատարությունը նպատակ ուներ գործել հանընդհանուր հարձակման և կայծակային հարվածի սվզուցով: Չաշվի առնելով այն հանգամանքը, որ Թել-Ավիվը գտնվում է Կահիրեից 400, իսկ Դամասկոսից 200կմ հեռավորության վրա (ժամանակակից

ռազմական ինքնաբիշոկ այդ տարածությունը անցնում է համապատասխանաբար 20և 10 րոպեներում), կարելի է հասկանալ, որ այստեղ հարձակվող կողմը ստանում է բացահայտ ռազմական առավելություն: Լույսն էր նաև Չորդանանի պարագան, որի արևմտյան սահմանները գտնվում էին Թեյ-Ավիլից ընդամենը 17կմ հեռավորության վրա:

Ռազմական գործողությունները սկսվեցին 1967թ. հունիսի 5-ին, առավոտյան ժամը 8-ին: Երեքամյան օդային զորհի ընթացքում ոչնչացվեց եզիպտական օդուժի կեսը, մոտ 400 ինքնաբիշ, շարքից հանվեցին եզիպտական օդանավակայանները: Դրան հետևեց սիրիական և հորդանանյան օդուժի մեծ մասի ոչնչացում: «Այդ ընթացքում իսրայելական հետախուզությունը օգտվում էր ևՄՏՕ-ի հետախուզական բաժնի տվյալներից»:¹¹⁸

Ոչնչացնելով հակառակորդի ավիացիան Իսրայելը անցավ գործողությունների երկրորդ փուլին՝ ցամաքային հարձակմանը: Սիրիայի թեթևկզուսները իրականացնում էր 4 ուղղությամբ՝ Դազա-էլ Արիշ, Սուեզի ջրանցք-Արև Ազեյա, էլ Կունտիլ և Շարաբ էլ Շեյխ-Տիրանյան նեղուց: Սինչ ընթանում էին մարտերը եզիպտական ղեմ, Իսրայելը Սիրիայի և Չորդանանի հարցում իրականացնում էր «նուրբ պաշապանության» տակտիկա՝ բաժանելով այս երկու երկրները միմյանցից և ռազմական ուժի տեղակայման միջոցով խանգարում էր նրանց միջև հաղորդակցության իրականացմանը:

Եզիպտոսի ցամաքային հարվածը հասցնելուց հետո Իսրայելը իր զինված ուժերը ուղղեց նախ Չորդանանի, ապա՝ Սիրիայի ղեմ: Իսրայելական բանակը կազմում էր 250.000 մարդ, մինչդեռ եզիպտոսինը 210.000 , իսկ Սիրիայինը և Չորդանանինը համապատասխանաբար 65.000 և 50.000: Վեցօրյա պատերազմի ընթացքում Իսրայելը գրավեց ավելի քան 60.000 կմ քառ. տարածք 1.5մլն ընկալություն: Եզիպտոսից գրավվեց Սինայի թերակղզին և Դազալի հատվածը: Չորդանանից նույնանուն գետի արևմտյան ափը, արևելյան երուսաղեմ, Բեռլեհեմ և Լաբլուս քաղաքներով: Բացի երեք ապաստանականացված գոտիներից Սիրիայից գրավվեց Գոլանյան Բարձունքները: Իսրայելական զորքերը գտնվում էին Դամասկոսից 40կմ հեռավորության վրա: Ինչպես նշում է Չ. Գրիգորյանը՝ «Եզիպտոսի, Սիրիայի և Չորդանանի ղեմ Իսրայելի 1967թ. հունիսյան ագրեսիայի հետևանքով մերձավորարևելյան կոնֆլիկտը վերածեց միջազգային ճգնաժամի»:¹¹⁹

Պատերազմական գործողություններին զուգահեռ և դրանցից հետո ՄԱԿ-ում քննարկվում էին նախ ռազմական գործողությունների դադարեցման, ապա հարցի լուծման նախագծեր: ՄԱԿ-ի ԳՄ արտակարգ նստաշրջանում քննարկվում էին 5 բանաձևերի նախագծեր: Սուաջին երեք նախագծերը, այդ թվում նաև խորհրդային և այբանական, պահանջում էին իսրայելական զորքերի անվերապահ դուրսբերում և գրավված տարածքներից: ՄԱՍ-ի և 18 լատինամերիկյան երկրների նախագծերը այդ հարցը շաղկապում էին բոլոր հարցերի քննարկման հետ,¹²⁰ որը փաստորեն նշանակում էր Սերժանտի Արևելքում իրավիճակը բողոքել նույնը: Չնայած ոչ մի տարբերակ չիավաքեց ծայրերի 2/3-ը հուլիսի 14-ի միտի ժամանակ ՄԱԿ-ը 99 ծայրով դատապարտեց Իսրայելի կողմից երուսաղեմի կարգավիճակը փոխելու հանգամանքը: ՄԱՍ-ի դիրքորոշման պատճառով գլխավոր հարցի, իսրայելական զորքերի դուրսբերման շուրջ որոշում չընդունվեց: «Հունիսի 19-ին ՄԱՍ-ի նախագահ Ջոնսոնը հայտարարել էր, որ ՄԱՍ-ը չի պահանջելու Իսրայելից դուրս գալ գրավված տարածքներից խաղաղության բացակայության պայմաններում: Իսրայելական զորքերի դուրս գալը պետք է կապվի Իսրայելի գոյության համար անվտանգության երաշխիքներ տալու հետ»:¹²¹

ՄԱՍը դիտավորյալ ձգձգում էր Սեմաանգոյան խորհրդի կողմից կրակի դադարեցման բանաձևի ընդունումը՝ հնարավորություն տալով Իսրայելին գրավել ավելի շատ տարածքներ:¹²²


1967թ. նոյեմբերին ՄԱԿ-ի Սեմաանգոյան խոսնակը քննարկեց 4 բանաձևերի նախագծեր, որոնք մտցրել էին խՄԳՍ-ը, ՄԱՍ-ը, Անգլիան, Չեղկատանը, Մալին և Լիգերիան:¹²³

1967թ. նոյեմբերի 22-ին ՄԱԿ-ի Ան-ը ընդունեց 242-րդ բանաձևը, որը հիմնված էր անգլիական տարբերակի վրա:¹²⁴ Այն նախատեսում էր՝

1. Իսրայելական զորքերի դուրսբերում 1967թ. հունիսյան պատերազմի ժամանակ գրավված տարածքներից:
2. Թշնամական տրամադրվածության վերացում և տարածաշրջանի ցանկացած պետության տարածքային ամբողջականության և քաղաքական անկախության, գոյություն ունենալու իրավունքի ծանաչում: Այդ պետությունների, ճանաչված սահմաններում, ապահովության երաշխավորում:
3. Ազատ ժողովին երթևեկության ապահովում:
4. Ապաստանականացված գոտիների ստեղծման ճանապարհով երաշխավորել տարածաշրջանի բոլոր պետությունների տարածքային անձեռնմխելիությունը:

«Սեմաանգոյան խորհրդում բացարձակ մեծամասնություն ուներ իսրայելական զորքերի լրիվ դուրսբերման տեսակետը և միայն ամերիկյան դիվանագիտության ջանքերի շնորհիվ դուրսբերման շուրջ ընդունվեց անորոշ կետով բանաձև»:^{*} Այս հարցին հանգամանորեն անդադարեղ էր և հայ արաբագետներից Չ. Գրիգորյանը:

Երբ կարծիքով «242-րդ բանաձևը կրում էր փոխզիջումային բնույթ, ինչի հետևանքով նրա մեջ դրական երևույթների հետ մեկտեղ առկա էր նաև մի ևական թերություն՝ կապված գլխավորապես այն բանի հետ, որ մերձավորարևելյան ճգնաժամի հիմնական բովանդակություն կազմող պարեստիսյան հարցը հանցեցվելով միայն պաղեստինցի փախստականների խնդրին, բանաձևում պատշաճ լուծում չէր ստացել: Երկրաշրջանի բոլոր պետություններին կոչ անելով ճանաչել 1948-49թթ. պատերազմի



A II 8698

հետևանքով ձևավորված սահմանները, բանաձևը առաջ չէր քաշում անկախ պաղեստինյան արաբական պետության ստեղծման հարցը: Այսպիսով 242-րդ բանաձևը որոշակիորեն հակասում էր 1947թ. նոյեմբերի 29-ի բանաձևին, որը նախատեսում էր արաբական պետության ստեղծում Պաղեստինում»:¹²⁵

Գրել ենք համարում մշել, որ 242-րդ բանաձևի անգլիական տեքստում կան մի քանի all հոդի բացակայությունը տեղի տվեց վիճաբանությունների: Բանաձևի անգլերեն տեքստում ասվում էր...«Withdrawal of Israeli armed forces from territories occupied in recent conflict...»:¹²⁶ Վերոհիշյալ հոդերի բացակայությունը Իսրայելին բոլոր տակախ խուսանավել՝ պնդելով, որ չեն մշակված կոնկրետ տարածքներ: Իսրայելական կողմը գտնում էր, որ բանաձևը պահանջում է որոշ հետքաշում, ոչ թե ամբողջությամբ:

Այս բանաձևը իրականացնելու համար 1967թ. դեկտեմբերին ՄԱԿ-ի ներկայացուցիչ Գ. Յարինը ճշանակվեց տարածաշրջանում ՄԱԿ-ի լիազոր ներկայացուցիչ: Այսպիսով Իսրայելը ամեն կերպ խոչընդոտում էր բանաձևի իրականացմանը: Նա կոչ էր անում արաբական երկրների գնալ «ուղղակի» բանակցություններին: Իսրայելի բոլոր գործողությունները արժանանում էին ՄԱԿ-ի լուր համաձայնությանը, «որի նպատակն էր ամեն կերպ բարձրացնել Իսրայելի պաշտպանությանը»: Այս առիթով ՄԱԿ-ի Կոնգրեսը որոշում քննարկեց Իսրայելին ցույց տալ ռազմական օգնություն: Իրավացի լինելու համար մշեք, որ այդպիսի օգնություն նախատեսվում էր նաև Գորդանանում:

1969թ. Մերձավորարևելյան հակամարտության քաղաքական կարգավորման համար ՄԱԿ-ը համաձայնվեց Նյու-Յորքում սկսել Անվտանգության հորիզոնի 5 մշտական անդամներից 4-ի (Անգլիա, Ֆրանսիա, ՄԱԿ, ՄՄՄ) մասնակցությամբ խորհրդատվական նիստեր: Բայց հենց սկզբից, 1969թ. փետրվար, ՄԱԿ-ի պետքարտուղարությանը տրվել էին զարույթի հրահանգներ. «Վարչակազմը չի ուզում արագ հաջողություններ քառակողմ նիստերի ժամանակ»¹²⁷: Արտաքինից ՄԱԿ-ը ցուցաբերում էր արտակարգ ակտիվություն զանազան փաստաթղթերի նախագծեր կազմելու հետ կապված: Այսպիսով 1969թ. դեկտեմբերին ՄԱԿ-ի պետքարտուղար Ռոջերսը հանդես եկավ հայտարարությամբ, որտեղ ասվում էր «Վաշինգտոնը ճիշտ չի համարում, որ հակամարտության կարգավորումը արտացոլի կամ ազդի բոլոր նվաճումների վրա»:¹²⁸

Այս հայտարարությունը փաստորեն ճշանակում էր Իսրայելի կողմից տարածքային ձեռքբերումների ճանաչում: ՄԱԿ-ի պրեզիդենտ Նիքսոնը գտնում էր, որ խորհրդային աներկական մրցակցությունը ստիպում է ՄԱԿ-ին կոնկրետ մոտեցումներ ցույց տալ: Այդ կարծիքը արտահայտվեց քիչ առաջ հիշատակված Ռոջերսի ծրագրում, որտեղ քաջի կրակի դադարեցումից ասվում էր. «Մեր քաղաքականությունը ուղղված է նրան, որ արաբներին սիրաշահելու միջոցով նրանց պարտադրվի մշտական խաղաղություն...»¹²⁹: Միաժամանակ նախատեսվում էր ապահովել Իսրայելի ռազմական առավելությունը արաբական երկրների նկատմամբ:

Մինչ Նյու-Յորքում ընթանում էին քննարկումները Իսրայելը խիստ մեծացրեց իր սարդիչ գործողությունների մաշտարեքը Մուզեի ջրանցքի շրջանում, որոնք սկսել էր դեռ 1969թ. զարմանից: Իսրայելի այս գործողությունները սկիզբ դրեցին զինված հակամարտության մի նոր շրջանի, որը հետագայում ստացավ «պատերազմ միջևեց հյուժում» անվանումը: Իսրայելը ձգտում էր այդ կերպ վիճեցնել խաղաղ կարգավորումը այնքան ժամանակ, քանի դեռ արաբական երկրները մշտական վտանգի տակ լինելով չեն համաձայնվել իր պայմաններին, որոնք հանգում էին յուրաքանչյուր կողմի հետ առանձին-առանձին պայմանագրեր կնքելու զաղափարին: Կապված Եգիպտոսին տրված խորհրդային ռազմական օգնության հանգամանքի հետ Նիքսոնի վարչակազմը նոր հարձակողական տեխնիկա տրամադրեց Իսրայելին:

1970թ. դրամատիկական եղավ Մերձավոր Արևելքի համար հետևյալ առումներով: Գորդանանի տարածքում հաստատված պաղեստինյան զինվորական խմբավորումների և հորդանանյան բանակի միջև 1970թ. սեպտեմբերին սկսվեց զինված բախում:

1970թ. սկզբին Գորդանանում ստղծվել էր բարդ իրադրություն, երբ պետական պաշտոնական ապարատի հետ զուգահեռ Պաղեստինյան Դիմադրության Շարժումը փաստորեն սկսեց ներկայանալ իրական իշխանություն: Սակայն Գորդանանի քաղաքական ու հասարակական կյանքում բարձր դիրքի ու ազդեցության տեր ՊԴԿ-ի մեջ որոշ հարցերի նկատմամբ չկար միասնական կարծիք: ՊԴԿ-ի մի մասը համոզվել էր զալլիս պաղեստինցիների շահերի հաշվին Իսրայելի հետ անջատողական հաշտություն կնքող Դուսեյն թագավորի տապալման օգտին: Իսկ ՊԱԿ-ի պաշտոնական ղեկավարությունը Արաֆատի գլխավորությամբ երբեք մեան հարց չէր դնում:¹³⁰

Սեպտեմբերի 3-ին Գորդանանում սկսվեց քաղաքացիական պատերազմ: Սիրիան մարտական պատրաստակամության բերեց զորքերը ՊԴԿ-ին աջակցելու համար: Սիրիայի գործողությունները անհանգստություն առաջ բերեցին ՄԱԿ-ում: Նախագահ Նիքսոնի տեսակետով «Գորդանանում ՊԴԿ-ի քաղաքական ավելի քան զանկալի էր: Սակայն ՄԱԿ-ը ձգտում էր այն բանին, որ պաղեստինցիների սպանող դուրս չկար Գորդանանի շրջանակներից: Իսկ Սիրիայի գործողությունները ոչ միայն բարդացնում էին այդ ծրագրի կատարումը, այլև, հրադարձությունների որոշակի զարգացման դեպքում կարող էին հանգեցնել Գորդանանում աներկապես վարչակարգի անկմանը: Սիրիայի վրա ճնշում գործադրելու նպատակով ՄԱԿ-ը որոշեց ուժ ցուցաբերել»¹³¹:

Պրեզիդենտ Նիքսոնը հայտարարեց, որ «Կամ ՄԱԿ-ը կամ Իսրայելը պետք է զինված միջամտություն կատարեն Գորդանանում, եթե Սիրիան կամ Իրաքը օգնության զան պաղեստինյան պարտիզաններին»: ՄԱԿ-ը հույս ուներ, որ կոնֆլիկտը Գորդանանի բանակի և Պաղեստինյան Դիմադրության Շարժման

ջոկատների միջև կրուպցնի հակամանրիկյան շարժումները և կլիվիդիացնի ՊԱԿ-ը: Իսրայելի վարչապետ Գ. Մեիրը խոստացավ ներխուժել Գորգանան և միժամանակ հարվածելով Սիրիային տապալել սիրիական կառավարությունը, ինչպես նաև մեծացնել «Գոլանյան Պաշտպանություն» տարածքները: Նիքոնի ցուցումով սեպտեմբերի 19-ին արևմտյան Գերմանիայում տեղակայված ԱՄՆ-ի զորքերը բերվեցին մարտական պատրաստակաճության, իսկ 6-րդ նավատորմը սկսեց շարժվել Միջերկրականի արևելյան ափերը: Ոռջերսը մեղադրեց Սիրիային Գորգանան ներխուժելու համար, իսկ Դուսենը քաղաքը ամերիկյան դեսպան Բրաունհին կոչ արեց սիրիացիների դեմ անհապաղ միջոցներ ձեռք առնել:¹³² Սեպտեմբերի 20-ին սիրիական տանկերը Պաղեստինի Ազատագրության Բանակի տարբերաշաններով մայն Գորգանան:¹³³ Ռազմական գործողությունների ընդլայնումը զուգահեռ էր ընթանում ԱՄՆ-ի այն ջանքերի ուժեղացման հետ, որոնք նպատակ ունեին քաղաքական, դիվանագիտական խուսաճվածան և միջարարական հակասություններից օգտվելու միջոցով պաշտպանում մտցնել արաբների շարքերում: Եվ միայն Եգիպտոսի նախագահ Նասերի միջամտության շնորհիվ կոնֆլիկտը նվազեց և սեպտեմբերի 28-ին Կահիրեում ուժի մեջ մտավ կրակը դադարեցնելու մասին համաձայնագիրը, սիրիական տանկերը հեռացան: Այս կոնֆլիկտի արդյունքը եղավ այն, որ պաղեստինյան փախստականները և զինված ջոկատները հաստատվեցին հարավային Լիբանանում այն դարձնելով ևս մեկ պայթյունակետային տարածք: Վաշինգտոնի արձագանքները հորդանայան իրադարձությունների նկատմամբ ցույց տվեց ամերիկա-իսրայելական համագործակցության բարձր աստիճանը: Բացի համատեղ ռազմական ցույցերից՝ «1971թ. ԱՄՆ-ը Իսրայելին ցույց տվեց 600 մլն դոլարի ռազմական օգնություն, ներառյալ «Ֆանտոմ» տիպի կործանիչ-ոմբակոծիչներ, "M-60" տիպի տանկեր և այլն...»:¹³⁴ Ռազմական օգնությունը Իսրայելին ավելի շատացավ 1972թ-ի նախագահական ընտրությունների նախօրեին:

1970թ մյուս կարևոր իրադարձությունը Եգիպտոսի պրեզիդենտ Գ. Նասերի մահն էր , որին փոխարինած Ա. Սադատը որոշակիորեն փոխեց Եգիպտոսի քաղաքականությունը: Պատճառներից մեկը է Աբգարյանի կարծիքով այն էր, որ «1967թ հունիսից հետո արտաքին և ներքին քաղաքականության վարման մեջ դրանց համապատասխանեցման և հավասարակշռության սկզբունքը խախտվեց և Նասերի կողմից առաջնակարգությունը տրվեց մերձավորարևելյան կոնֆլիկտի լուծմանը, իսկ տնտեսական կառավարման խնդիրները հիմնականում թողնվեցին պետական բյուրոկրատիայի վրա: Այդ բանում էներգորդական դեր չուցեցավ նաև Նասերի վատացող առողջությունը»:¹³⁵ Նրա հռչակած «բաց դռների» քաղաքականությունը և արևմտամետ կողմնորոշումը հարվածում էր տարածաշրջանում խճճԱ-ի և նրա արաբ ընդհանակիցների շահերին ուժեղացնելով ԱՄՆ-ի դիրքերը:

ԱՄՆ-ը լրջորեն վախեցնում էր, որ համապարփակ կարգավորումը, որի կողմնակիցն էր նաև Նասերը, կարող է վնասել Իսրայելին: Այդ նպատակով 1971թ. սեպտեմբերին ԱՄՆ-ը հրաժարվեց մասնակցել ԱՄՆ-վտանգության հարիդրի մշտական անդամների նիստերին: Նույն քվեակնի դեկտեմբերին Իսրայելի վարչապետ Մեիրի հետ պայմանավորվածություն ձեռք բերվեց (Վաշինգտոնում), որ համապարփակ կարգավորման ուղիների փնտրումը կողարդեցվի և փորձվի կարգի հասնել Եգիպտա-իսրայելական սեպարատ հաշտության կնքման: Այդ ուղղությամբ ԱՄՆ-ի առաջին քայլը եղավ 1972թ. սեպտեմբերին ՄԱԿ-ի ԱՄՎտանգության հարիդրի որոշման նախագծի վրա վերադիցնել: Այդ նախագիծը դատապարտում էր Իսրայելի նոր ռազմական գործողությունները Լիբանանի դեմ:

«1973թ. հուլիսին ԱՄՎտանգության հարիդրում ԱՄՆ-ի վնասում վկայում էր հօգուտ այն բանի, որ ԱՄՆ-ը վճռականապես դեմ է համապարփակ քաղաքական կարգավորմանը»:¹³⁶ Մեր կարծիքով ման դիրքորոշումը մշանակում էր , որ ԱՄՆ-ը իր վրա էր վերցնում Իսրայելի հետագա գործողությունների պատասխանատվությունը:

1973թ. սկսվեց ռազմական մեծ քանակի տեխնիկայի տեղափոխումը ԱՄՆ-ից Իսրայել: Այն նպատակ ունեռ օգնել Իսրայելին պահպանել զրավված տարածքները: Երբ պատերազմի անխուսափելիության մեջ ոչ ոք չէր կասկածում: Սակայն այս անգամ ԱՄՆ-ը դեմ էր, որ Իսրայելը առաջինը սկսի կանխիչ գործողությունները: ԱՄՆ-ի պետարտուղարը Քիսինջերը կա պարզաբանում էր նրանով, որ «կանխիչ գործողությունները միջազգային հասարակությանը դարձնադրեն Իսրայելի ուժ և դրանով իսկ կրճավարացնեն վերջինիս աջակցելու ԱՄՆ-ի միջոցառումները»:¹³⁷

1973թ. հոկտեմբերի 6-ին, ժամը 15⁰⁰ Եգիպտոսը սկսեց պատերազմը: Այս անգամ Իսրայելի 1967թ. հաջողությունները չկրկնվեցին: «Իսրայելական բանակը 1973թ. հոկտեմբերին կորցրեց մոտ 250 ինքնաթիռ (ՌՕՄ-ի գրեթե կեսը և) և 900 տանկ»:¹³⁸

Այսպիսի պայմաններում հոկտեմբերի 14-ին ԱՄՆ-ը սկսեց զենքի զանգվածային տեղափոխում Իսրայել: Արաբական երկրները դիմեցին նավթային էմբարգոյի կարգի նվազեցնելով մերձավորարևելյան նավթի առաքումը ԱՄՆ և արևմտյան եվրոպա: Չնայած որոշ հաջողություններին արաբական երկրները չհասան հաղթանակի: Հոկտեմբերի 9-12-ը ՄԱԿ-ի ԱՄՎտանգության հարիդրը մեծարկեց ստեղծված իրադրությունը: ԱՄՆ-ը պահանջում էր կրակի դադարեցում և զորքերի հետքաշումը մինչև 1973թ. հոկտեմբերի 5-ի սահմանները: Հոկտեմբերի 20-ին ԱՄՆ-ի նախագահը դիմեց Կոնգրեսին խնդրելով շտապ կարգով 2.2 մլրդ դոլարի օգնություն հատկացնել Իսրայելին: Աստված ժամանեց ԱՄՆ-ի պետարտուղար Քիսինջերը: Այստեղ մշակվեց համատեղ բանձն կրակի դադարեցման մասին, որը 1973թ. հոկտեմբերի 22-ին ընդունվեց ՄԱԿ-ի ԱՄՎտանգության հարիդրի կողմից: Ըստ 338-րդ բանձնի¹³⁹ նախատեսվում էր

1.Կրակի անհապաղ դադարեցում:

2. ՍԱԿ-ի Անվտանգության հորիզոնի 1967թ. #242-րդ բանաձևի անհավաք կատարում;

3. Բանակցությունների սկսում շահագրգիռ կողմերի միջև:

Սակայն Իսրայելը, խախտելով որոշումը, շարունակում էր հարձակումը: Սաղաթը դիմեց ԽՍՀՄ-ին և ԱՄՆ-ին խնդրելով ուղարկել դիտորդներ, բայց ԱՄՆ-ը մերժեց: Այդ ընթացքում ՍԱԿ-ի Անվտանգության հորիզոնը ընդունեց նաև 339, 340-րդ բանաձևերը¹⁴⁰, որից հետո միայն կրակը դադարեցվեց:

Միջազգային լարվածության թուլացումը նպաստեց, որ ՍԱԿ-ի բանաձևը հակամարտության ճգնաժամային փուլից դուրս գալը կապի նրա քաղաքական կարգավորման հետ: Սկսվում է բանակցությունների և կարգավորման մի բարդ շրջա, որը ձգվում էր ժնկի կոնֆերանսից մինչև Էբեմի-Ղևկիի համաձայնագիր: ԱՄՆ-ը ստիպված էր հաշվի առնել նավթային էներգիայի կրկնվելու վտանգը, ինչպես նաև այն հանգամանքը, որ արաբական երկրները կարող էին ազդել համաշխարհային նավթային գների վրա: Այդ առումով ԱՄՆ-ը կարիք ուներ խաղաղության հաստատման տարածաշրջանում և ավելի սերտ հարբերությունների հաստատման նավթ արդյունահանող երկրների հետ: Միաժամանակ ցամաքային կարգը զրկելու ԽՍՀՄ-ին տարածաշրջանում իր ազդեցությունը ամրապնդելու փորձերից:

4. Զենի-Ղևկիի համաձայնագիրը որպես արաբա-իսրայելական հակամարտության կարգավորման առաջին քայլ:

1973թ. հոկտեմբերյան պատերազմի ավարտից հետո հստակորեն երևում էին այն գործոնները, որոնք խոսում էին արաբա-իսրայելական հակամարտության խաղաղ կարգավորման օգտին: 1973թ. պատերազմի ժամանակ երեսալակ արաբական երկրների աճած ուժն ու հզորությունը: Օսերանկազ գործոն էր 1973թ. հոկտեմբերին արաբական երկրների հայտարարած նավթային էներգիան: Այն նախատեսում էր ինչպես նավթի արդյունահանման, այնպես էլ արտահանման ծավալի կրճատում: Իսկ գաղտնիք չէ այն հանգամանքը, որ ԱՄՆ-ը Մերձավոր Արևելքը դիտում էր ոչ միայն ստրատեգիական կարևոր հենակետ, այլ նաև հատկի էր առնում մրա Սոնայական նավթային հարստությունները: ԱՄՆ-ը ստիպված էր հաշվի գառնել ստեղծված իրադրության հետ: Արաբական երկրները սպառնում էին նման գործողություններ կիրառել արևմտյան այն երկրների դեմ, որոնք այս կամ այն կերպ օժանդակում էին Իսրայելին: Բացի դրանից պարտությունը պիտեմանում ստիպում էր ԱՄՆ-ին ավելի ու ավելի ասեղ միջազգային լարվածության թուլացման դիրքեր:

«ԱՄՆ-ի դիրքերը Ասիայում 70-ական թթ. շատ գծերով նման էր Անգլիայի և Ֆրանսիայի իրավիճակին 50-ական թթ. Մերձավոր և Միջին Արևելքում: Շատ երկրներում իշխանության եկան ուժեր, որոնք հակաարևմտամետ էին»¹⁴¹:

ԱՄՆ-ը սկսում է քայլեր ձեռնարկել Իսրայելի, Եգիպտոսի և Սիրիայի միջև զորքերի տարաբաժանման ուղղությամբ: Այդ նպատակով ժնկում գումարովեց կոնֆերանս, որը բացվեց 1973թ. դեկտեմբերի 21-ին: ԱՄՆ-ի պետքարտուրար Քիսինջերի խոսքերով. «Ամերիկյան դիվանագիտության վերջնական նպատակը Իսրայելի կողմից գրավված տարածքների պահպանությունը ապահովելու հնարավորության ստեղծումն էր»¹⁴²:

Այս շրջանում ԱՄՆ-ի կողմից ավելի ու ավելի էր նկատվում մտումներ դուրս մղելու ՍՄԾ-ին մերձավորարևելյան հարցի կարգավորման շրջանակներից: Եգիպտոսը ավելի ու ավելի էր հակվում միայն ԱՄՆ-ի հետ համագործակցության: Բանակցությունները այդ պահին ավելի շուտ կրում էին երկկողմանի բնույթ, քանի որ Սիրիան չէր մասնակցում ժնկի կոնֆերանսին: Կողմերը չէին գզում նաև ԽՍՀՄ-ի ներկայության կարիքը: Ինչպես իրավացիորեն նշում է Ե.Մ. Պրիմակովը. «Արդարացնելով իրենց կուրսը ժնկի կոնֆերանսում ամերիկյան պաշտոնատար անձինք այսու էլ նրանք սկսում համապարփակ պայմաններ չկային և ընդհանրապես պայմաններ չկան Մերձավոր Արևելքում այսպարփակ կարգավորման համար: Այդ պատճառով էլ հարկ եղավ ընթանալ մասնակի լուծումների ուղիով: Այդ ուղու կողմնակիցները մեղադրում էին ԽՍՀՄ-ին, որ նա զանց է առնում ըստ էության ստեղծման միջոցառումները»¹⁴³:

ԵՎ, իրոք, պատմությունը ցույց տվեց, որ եթե նույնիսկ հնարավոր էլ է կարգավորում, ապա դա կարող է լինել միայն հարցի մասնակի և փուլային լուծումների ճանապարհով: Ասվածի վկայությունն են հետագա պայմանագրերը և համաձայնագրերը, որոնք մասին կխոսվի ավելի ուշ:

1973թ. դեկտեմբերի 21-ին համաձայնություն ձեռք բերվեց իսրայելական և եգիպտական զորքերի բաժանման և երկու կողմերի միջև բանակցությունները շարունակելու վերաբերյալ: 1974թ. հունվարի 11-18-ը, Կասիրե-Մուեզ խնդրու 101-րդ կմ-ի վրա ստորագրվեց զորքերի տարաբաժանման վերաբերյալ իսրայելա-եգիպտական համաձայնագիրը: Իսրայելը հետ քաշեց իր զորքերը Մուեզի ջրանցքից 32 կմ արևելք: Եգիպտոսը համաձայնվեց զգալիորեն նվազեցնել իր զինված ուժերը այդ շրջանում: Եգիպտական և իսրայելական զորքերի միջև ստեղծվում էր բուֆերային գոտի ՍԱԿ-ի ուժերի վերահսկողության տակ:

Սիրիայի հետ կապերի ընդարձակումը հնարավորություն տվեց ԽՍՀՄ-ին համաձայնագրահե ԱՄՆ-ի հետ ժնկի կոնֆերանսում: Այստեղ ստորագրվեց նմանատիպ համաձայնագիր սիրիական և իսրայելական զորքերի տարաբաժանման վերաբերյալ: Սիրիային վերադարձվեց Պոլանյան բարձունքների մի մասը Կունեյտրան, այն պայմանով որ այստեղ ստեղծվի ապառազակաճանցված գոտի և տեղակայվեն ՍԱԿ-ի զինված ուժեր:

1975թ. սեպտեմբերի 1-ին ժնկում սկսվեց նոր կոնֆերանս, իսկ սեպտեմբերի 4-ին եզրափակուց և Իսրայելը ստորագրեցին Սիճայի համաձայնագիրը: Այն նախատեսում էր իսրայելական զորքերի հետքաշում, Սիլթա և Գիդի լեռնանցքերի անցում եզրափակում: Եզրափակուց իրեն վերադարձրեց Սիճայի 10%-ը: Իսրայելի ռազմական նավերը ստանում էին Մուեզի ջրանցքով ազատ երթևեկության իրավունք: Երկրորդ փաստաթղթով ՄԱԸ-ը պարտավորվում էր հասնել եզրափակուց կողմին համաձայնագրի ամրախտ կատարմանը և արգելել նրա մասնակցությունը Իսրայելի դեմ ուղղված գործընթացներին:

ՄԱԸ-ի կողմից «Կարույն մեծացվեց Իսրայելին տրվող օգնությունը: 1.8 միլիարդ դոլար հատկացվեց ռազմական գնումների համար, և 1 միլիարդ դոլար տնտեսական օգնություն»¹⁴², քնն պետք է նշել, որ «Իսրայելի հետ համաձայնագրի կնքումը ՄԱԸ-ի որոշ շրջանակներում զեհատվեց խիստ վտանգավոր, նոր փետնամալի տարրերով»¹⁴³ Իրականում դա չափազանցեցված կարծիք էր:

Սիճայի համաձայնագրի ստորագրումից հետո ՄԱԸ-ի մերձավորարևելյան քաղաքականության մեջ նկատվում են որոշակի փոփոխություններ: Քարտերի վարչակազմը հակվում էր այն զաղափարին, որ սեպարատ ապամանագրերը ապրել են իրենց ժամանակը և ժամանակն է վերադառնալ համապարփակ կարգավորման:

«Քարտերը և պետքարտուղար Ս. Վենը եկել էին այն համոզման, որ քայլ առ քայլ լուծումը սպառել է իրեն և ժամանակն է փնտրել համապարփակ կարգավորման ուղիներ»¹⁴⁶ ՄԱԸ-ի մտտեցման այս միտումները պայմանավորված էին հետևյալ գործոններով.

1. Նախ հարկավոր էր պահպանել սերտ հարաբերությունները արաբական պահպանողական վարչակարգերի հետ:
2. Հաշվի առնելով «ճաբային ենթարկողի» դառը փորձը խուսափել դրա կրկնումից:
3. Հանկ էր հաշվի նստել այն փաստի հետ, որ պաղեստինյան հիմնախնդիրը ևս կարիք ուներ որոշակի առաջնադասում:
4. ՄԱԸ-ը հասկանում էր, որ առանց ԽՍՀՄ-ի մասնակցության հնարավոր չէր Մերձավոր Արևելքում հասնել լուրջ կարգավորման:

Սիսա քն ինչ գործոններ էին ստիպում Քարտերի վարչակազմին փոխել իր դիրքորոշումը պաղեստինյան հարցի նկատմամբ: Նշենք, որ այդ դիրքորոշումը շատ կարճ կյանք ունեցավ: 1977թ. փետրվարի 14-ին Վենը այցելեց Իսրայել և արաբական երկրներ: Սինչ նրա այցը որոշվել էր, որ ՄԱԸ-ը կվերծի նոր կոնֆերանս իրավիճել ժնկում: Վենի այցը ստրատեգիական նպատակ ուներ նուսումնասիրելու այն ռեալ երաշխիքները, որոնք կային այդպիսի կոնֆերանս իրավիճելու համար: Փետրվարի 23-ին Վենը ՄԱԸ-ի Ազգային Անվտանգության կոմիտեի նիստում զեկուցեց իրավիճակի մասին, որից հետո որոշվեց, որ կոնֆերանսի իրավիճում հավանական ժամկետը կլինի 1977թ. սեպտեմբերը: Հոկտեմբերի 1-ին հրատարակվեց Մերձավոր Արևելքի վերաբերյալ խորհրդա-ամերիկյան համատեղ հայտարարություն: Այդ հայտարարությունը արդյունքն էր Նյու-Յորքում ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի հեղբական նիստի ժամանակ ԽՍՀՄ արտգործնախարար Գործիկոյի և ՄԱԸ-ի պետքարտուղար Վենի միջև եղած քննարկումների: Հայտարարությունն նշվում էր, որ պետք է ամրապաղ և համապարփակ լուծումով կարգավորել արաբա-իսրայելական հակամարտությունը: Պետք է լուծվելին այնպիսի առանցքային հարցեր, ինչպիսիք էին իսրայելական զորքերի դուքսերումը 1967թ. ն գրավված տարածքներից և պաղեստինյան արաբական բնակչության օրինական իրավունքների պահովում:

Պայմանավորվածություն ձեռք բերվեց այն մասին, որ ժնկյան կոնֆերանսին պետք է մասնակցեն բոլոր շահագրգիռ կողմերը այդ քվում, նաև պաղեստինյան կողմը: Թվում էր, քն ՄԱԸ-ը վերադառնում է ԽՍՀՄ-ի հետ համագործակցության դիրքեր, սակայն Մերձավոր Արևելքում տեղի ունեցած իրադարձություններ, որոնք «բաղեցին» խորհրդա-ամերիկյան համատեղ հայտարարությունը:

Իսրայելում 1977թ. պառնաժնկական ընտրությունների ժամանակ հաղթանակած «Լիկուդ» դաշինքը Մ.Քեզինի գլխավորությամբ հանդես էր գալիս պաղեստինյան հարցի կապակցությամբ չափադանց կոչու դիրքորոշումով: Այդ առիթով Քարտերը իր օրագրում նշել է. «Սխիստ վախեցնող է նրա /Քեզինի/ դիրքորոշումը, այն չափազանց անհաշտ է»¹⁴⁷:

1977թ. հուլիսին վարչապետ Քեզինը առաջին անգամ հանդիպեց Քարտերի հետ և վերջինիցս երաշխիքներ ստացավ, որ Քարտերը այլևս մասսայական կերպով չի խոսի իսրայելական զորքերի դուքսերման և ինչ-որ պաղեստինյան հայրենիքի մասին»¹⁴⁸: Միաժամանակ Քեզինը իրաժարվեց գրավված տարածքներում հիսկյան նոր բնակավայրերի կառուցումը ստեղծելու առաջարկից: Քեզինը և նրա առջնորդած «Չեդուս» կուսակցությունը առաջնորդում էին «Մեծ Իսրայել» ստեղծելու գաղափարով: Երանք ՄԱԸ-ի ԳԱ 181-րդ բանաձևը անվանում էին որոշում արևմտյան Պաղեստինի բաժանման մասին: Երանք ծծուում էին էքսպանսիայի բոլոր ուղղություններով, որին հետևելու էր գրավված տարածքների անբեքման, իսկ որոշ տեղերում ժողովրդագրական իրավիճակի փոփոխում: Արդեն սեպտեմբերի 25-ին իսրայելական զորքերը ներխուժել էին հարավային Լիբանան, սակայն Քարտերի կտրուկ պահանջից հետո, հետ էին քաշվել այդտեղից: Քեզինի և նրա նախորդների միջև տարբերությունը հստակորեն ցույց են տալիս ամերիկյան աղբյուրները. «Այն ժամանակ, երբ Այխատանքի կուսակցությունը, որը կազմում էր կառավարություն 1967-77թթ. միջև ընկած ժամանակահատվածում, սկզբունքորեն համաձայնում էր, որ 242-րդ բանաձևը պահանջում է որոշ հետքաշում ճակատներում, սկզբունքորեն անվտանգության շարժառիթներով սահմանները

վերանկարելու Իսրայելի մտադրությունը: Բեզինի ժամանակ պարզ դարձավ, որ նրա կառավարությունը մտադիր է արևմտյան ափի և Դազայի վրա իր սուվերենությունը տարածելու հավանություններ կայացնել և չի համաձայնվել իր գործերը դուրս բերել այդ տերիտորիաներից»:¹⁴⁸

Խորհրդա-ամերիկյան հայտարարությունը խիստ վառ ընդունվեց Իսրայելի կողմից: Վերջինիս արտգործնախարար Դալանը հայտարարությունից մի քանի օր հետո, հոկտեմբերի 4-ին, հանդիպելով Քարտերի և Վենսի հետ, հայտարարեց, որ Իսրայելը համաձայն չէ հայտարարությունում օգտագործված «պարեմտիցի ժողովրդի օրինական իրավունքներ» արտահայտության հետ: Նա միաժամանակ նշեց, որ Իսրայելը չի մասնակցի ժնյան կոնֆերանսին: Դալանը պահանջում էր շրջանառությունից հանել «պարեմտիցի հայրենիք» արտահայտությունը և քացատել որևէ կերպ ՊԱԿ-ի ներկայացուցչի մասնակցությունը ժնյա կոնֆերանսին: Դալանը Քարտերից երաշխեցրեց, որ պահանջում էր վերջինս դեմ կարտահայտվի արևմտյան ափում արաբներին ինքնավարություն տալու ծրագրին: Նա պահանջում էր նաև նոր ռազմա-տնտեսական օգնություն: Ի վերջո Դալանը հասավ նրան, որ հրապարակվեց նաև իսրայելա-ամերիկյան համատեղ հայտարարություն: Ըստ ԱՄՆ-ի ազգային անվտանգության հարցերով նախագահի խորհրդական Բեզինսկու. այդ հայտարարությունն էլ իր հերթին վրդովեցրեց արաբներին:

Հաջորդ գործունը, որ ԱՄՆ-ին ստիպեց նահանջել համապարփակ կարգավորումից դեպի սեպարատ մտեղծում, դա Եգիպտոսի նախագահ Սադատի նամակն էր Քարտերին . «որտեղ սավուն էր, որ ոչինչ չպետք է խանգարի Եգիպտոսի և Իսրայելի միջև ուղղակի բանակցություններին»:¹⁴⁹

Ել վերջնական ամենակարևոր գործունը, որը ստիպեց ԱՄՆ-ին սահել հարցի կարգավորման սեպարատ դիրքեր 70-ական թթ. վերջերի ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության մեջ միջազգային լարվածության թուլացման կուրսից ԱՄՆ-ի հեռանալու միտումն էր: Դա պետք է արտացոլվեր նաև մերձավորարևելյան քաղաքականության մեջ:

Վերը նշված գործունեները նպաստում էին, որպեսզի ԱՄՆ-ը ամեն կերպ աջակցեր պաղեստինյան խնդրի սեպարատ կարգավորմանը իր «գորշի ներքո» և նվազագույնից հասցնեք իսրայելի մասնակցությունը այդ գործընթացին: ԱՄՆ-ի պետքարտուղար Վենսը Եգիպտոսին ներկայացրել էր պաղեստինյան հարցի վերաբերյալ իր սեփական ծրագրերը, որի մասն էին կազմում ԱՄԿ-ի վերահսկողության ներքո անցումային միջոցառումները, այդ թվում և հանրաքվեի անցկացումը արևմտյան ափի և Դազայի վերջնական ապագան որոշելու համար: Անցման շրջանում արևմտյան ափում պետք է հաստատվեր համատեղ իսրայելա-հորդանանյան կառավարում: Նշենք, որ Իսրայելի որոշ ազդեցիկ քաղաքական գործիչներ Ի.Ալունը, Շ.Պերեսը և այլն, կողմ էին Հորդանանի հետ հարաբերություններ հաստատելու միջոցով մշտական խաղաղություն սահմանել արևմտյան ափի վրա, քայց ոչ դրանք ուղղակի անընթացի մոտ: Սակայն վարչապետ Բեզինի համար զվաճվորը Եգիպտոսն էր: Վենսի ծրագրում ընդհանրապես որևէ խոսք չկար ՊԱԿ-ի և զրավված տարածքներից Իսրայելական գործերի դուրսբերման մասին:

1977թ. հոկտեմբերի 21-ին Քարտերը խոսակցություն ունեցավ Սադատի հետ, իսկ նոյեմբերի 14-ին CBC հեռուստածրագրով տեղի ունեցավ անուղակի երկխոսություն Բեզինի և Սադատի միջև: Ճիշտ է ԱՄՆ-ը պաշտպանում էր սեպարատ բանակցությունները, քայց տվյալ պահին խուսափում էր այն քացահայտորեն ցույց տալ: ԱՄՆ-ը ուզում էր ցույց տալ, որ սեպարատ բանակցությունները ոչ թե իր, այլ Իսրայելի և Եգիպտոսի նպատակն է: Նոյեմբերի 19-ին Սադատը ուղևորվեց Երուսաղեմ և ելույթ ունեցավ Քնեսետում: Դախպանելով ձևական կողմը ԱՄՆ-ը դեռ խոսում էր ժնյա կոնֆերանսի մասին, քայց միաժամանակ առաջ էր քաշում «համակենտրոն շրջանագծերի» տեսությունը, որը նախատեսում էր կարգավորել Իսրայելի հարաբերությունները նախ Եգիպտոսի, սպա Հորդանանի և պաղեստինցիների, իսկ վերջում՝ Սիրիայի հետ:¹⁵⁰

1978թ. հունվարին ԱՄՆ-ը վերջնականապես կանգնեց Եգիպտա-իսրայելական սեպարատ հաշտության կնքելու դիրքերի վրա պաշտոնապես հրաժարվելով համապարփակ կարգավորումից: 1978թ. մարտին վաշինգտոնում տեղի ունեցած Բեզին-Քարտեր հանդիպման ժամանակ ԱՄՆ-ի նախագահը հայտարարեց, որ Իսրայելի պահանջները հանգում են « 6 ոչեթի».

1. Իսրայելը չի ցանկանում հեռանալ արևմտյան ափից:
2. Նա չի դադարեցնի հրեական նոր բնակավայրերի կառուցումը զրավված տարածքներում:
3. Նա չի ցանկանում հեռանալ Սինայից կամ
4. Այն թողնել ԱՄԿ-ի ու Եգիպտոսի իրավանդ տակ:
5. Իսրայելի չի ընդունում, որ 242-րդ քանաձևը վերաբերում է արևմտյան ափին ու Դազային:
6. Դաղեստինիցի ապրանքներին հնարավորություն չի տրվի որոշելու իրենց ապագան: Եգիպտոսին սիրաշահելու համար որոշվեց Կահիրեի Սենե-Հաուզ հյուրանոցում հրավիրել կոնֆերանս: Եգիպտոսը կոնֆերանսին մասնակցելու հրավերներ ուղարկեց Սիրիային, Լիբանանին, ՊԱԿ-ին, իսրայելին. Սակայն կոնֆերանսին մասնակցելու եկան միայն ամերիկացիները և հրեաները: Այժմ արդեն պարզ էր, որ սեպարատ հաշտության կնքումը օրերի հարց էր:

1978թ. սեպտեմբերի 5-ին ԱՄՆ-ում, Քնձի-Դևիդում Իսրայելի և Եգիպտոսի միջև սկսվեցին բանակցություններ, որոնք տևեցին 13 օր: Հենց սկզբից Բեզինը հայտարարեց, որ բանակցությունները չեն կարող հենվել 242-րդ քանաձևի վրա: Ավելին, նա հայտարարեց, որ 1967թ. պատերազմը Իսրայելի համար պաշտպանական էր և հետևաբար Իսրայելը իրավունքներ ունի այդ տարածքների վրա: Բեզինը հասկացնել տվեց, որ արևմտյան ափը / Հուդա և Սամարիա իր խոսքերով / հետ չի տրվի, քանզի այդ տարածքները հրեաներին խոստացվել է Աստուծո կողից: Բեզինի նպատակն այն էր, որ հաշտության

միջոցով արարական երկրների միացյալ ճակատից դուրս բերել ամենահզոր արարական երկրին: Սաղաթը իր հերթին հույս ուներ ստանալ Սինայի քերականից և պատրաստ էր այք փակել արևմտյան ափի և Ղազայի հարցում Իսրայելի հավակնությունների վրա:

Բայց Սաղաթին պետք էր որևէ կերպ թողարկել այդ ամենը: ԵՎ այստեղ գործը արդեն ամերիկացիներինն էր: Քարտերը խաղում էր ամենաակտիվ դեր: Սի կողմից նա համոզում էր Սաղաթին, որ հաշտությունը հետ կբերի նրան Սինան, իսկ մյուս կողմից համոզում էր Բեզինին, որ հաշտությունը կենսաճից Իսրայելի ապահովությունը, քանզի առանց Եգիպտոսի արարական երկրների չի փճակի չեն լինի լուրջ հարված հասցնել Իսրայելին: Գլխավոր խոչընդոտը բանակցությունների ժամանակ արևմտյան ափի և Ղազայի ապագայի հարցն էր: Սեպտեմբերի 13-ին Քարտերի առաջարկով 242-րդ բանաձևից որոշվեց հանել «պատերազմի միջոցով տարածքներ գրավելու անդուլտությունները»: արտահայտությունը: 242-րդ բանաձևի տեսքով պարզապես կցվեց «Մերձավոր Արևելյան հաշտության պայմանագիր կնքելու շրջանակներ» փաստաթղթին: Սա ճանապարհի հարցեց երկրորդ փաստաթղթի համար, որը կոչվեց «Եգիպտոսի և Իսրայելի միջև հաշտության պայմանագիր կնքելու շրջանակներ»: Երեք երկրների ղեկավարների նամակները, որպես պաշտոնական փաստաթուղթ կցվեցին այդ շրջանակներին: Քարտերի նամակում ասվում էր «Ամեն մի պարբերությունում, որտեղ հղովվում է արևմտյան ափ արտահայտությունը, այն Իսրայելի կատարության կողմից պետք է և կարող է մեկնաբանվել որպես Դուրա և Սամարիա»: Սակայն ԱՄՆ-ի նախագահը քիչ տհաս պահեր չապրեց: Բեզինը հրաժարվում էր դադարեցնել իր կատուցումները նաև Սինայում, Սաղաթը սպառնում էր մեկնել: Քարտերին հարկ եղավ զգուսգործել իր ամբողջ հեղինակությունը և պերճախոսությունը: Նա ասեց, որ եթե հաշտություն չկնքվի, ապա իՄՄՄ-ի դիրքերը տարածաշրջանում խիտ կուժեղանան: Ամերիկյան վարչակազմը անհանգստացած Իսրայելի գործողություններից, գործողությունները դուրս կարող էին խախտել Զեմի-Ղևիդը, և ղեկտնաբերի 10-ին Կահիրե ուղարկվեց պետքարտուղար Ս.Վենեսը, որը այստեղ էր բերել «փոխգլխավոր մային» ինչ-որ առաջարկություններ: Ըստ հարկվելով Իրանում տեղի ունեցող դեպքերը, հակաշահական շարժումը անհանգստացնում էր նաև Սաղաթին, 3 օրվա ընթացքում Վենեսը հասավ նրան, որ Սաղաթը հրաժարվեց արևմտյան ափում ընտրությունների կոնկրետ ժամկետ նշանակելու իր պահանջից, բայց առաջ քաշեց մոր պահանջը. «ինքնավարություն մտցնել նախ Գազայում»: Բեզինի կողմից այս առաջարկությունը և մերժվելուց հետո իրավիճակը փրկելու համար Մերձավոր Արևելք ուղարկվեց ԱՄՆ-ի պաշտպանության նախարար Բրաունը: Այս անգամ իրանական խաղաղարտի գործարկումը տվեց իր արդյունքները: 1979թ. մարտի 26-ին Վաշինգտոնում տորազրվեց խաղաղության պայմանագիր Եգիպտոսի և Իսրայելի միջև: Այն ստորագրեցին Սաղաթը, Բեզինը և Քարտերը, որից քիչ անց Վենեսը և Ղազայնը ստորագրեցին ամերիկա-իսրայելական համաձայնության հուշագիրը: Պայմանագիրը ուժի մեջ մտավ 1979թ-ի դեկտեմբերի 25-ին:¹⁵ Ըստ պայմանագրի

1. Իսրայելի և Եգիպտոսի միջև հաստատվում է խաղաղություն:
 2. Իսրայելի և Եգիպտոսի միջև հաստատվում են դիվանագիտական հարաբերություններ:
 3. Իսրայելական զորքերը դուրս են բերվում Սինայից:
 4. ճանաչվում է Եգիպտոսի սուվերենությունը այն սահմաններում, որը եղել է Եգիպտոսի և Պաղեստինի մանդատային տարածքի սահման:
 5. Իսրայելական նավերը ազատ երթևեկելու են Սուեզի ջրանցքի շրջանում: Աքաբայի ծավածոցը համարվում է ազատ նավագնացության գոտի:
 6. Եգիպտական կառավարությունը իրավունք ունի մեկ դիվիզիա ունենալ Սուեզից 50կմ արևելք:
 7. Աքաբայի ծոցից արևմուտք գտնվող 20-40 կմ տարածք գտնվելու է ԱՄԿ-ի ուժերի հսկողության տակ:
 8. Իսրայելական զորքերը չեն հեռանա արևմտյան ափից և Ղազայից, այլ կտեղաբաշխվեն անվտանգության գոտիներում:
 9. Այդ տարածքներում պետք է ապահովվի ոչ թե տարածքային, այլ բնակչության ինքնավարություն:
- Նշենք, որ այս վերջին կետը նշված էր ոչ թե պայմանագրի տեսքում, այլ Սաղաթի և Բեզինի Քարտերին ուղղված համատեղ նամակում: Ինչ խոսք պայմանագիրը ամերիկյան դիվանագիտության խոշոր հաղթանակն էր, բայց ոչ հարցի վերջնական լուծումը:

5.ԱՄՆ-ի քաղաքականությունը իսրայելա-պաղեստինյան կոնֆլիկտի հանդեպ Լիբանանյան ճգնաժամի ժամանակաշրջանում:

Եգիպտոսի գործողությունները և Զեմի-Ղևիդի համաձայնագիրը փորձելեցին արարական աշխարհը: Դեռ 1977թ. դեկտեմբերին Սիրիան, Լիբանանը, Ալժիրը, Իրաքը, Եմենը և ՊՂԿ-ը ստեղծել էին «հակազինացության և դիմադրության ճակատ», իսկ ղեկտնաբերի 5-ին Եգիպտոսը խզել էր այս երկրների հետ դիվանագիտական հարաբերությունները: Վերոհիշյալ երկրները հանդիսանում էին հայտարարել ինչ, որ Զեմի-Ղևիդի համաձայնագիրը անօրինական է:

Զեմի-Ղևիդի համաձայնագիրը ամերիկյան դիվանագիտության հաղթանակը, շուտով հավասարակշռվեց: Նախ արարական երկրների կողմից դրա քննադատությունը սպառնում էր դժվարություններ հարուցել ԱՄՆ-ի քաղաքականության առջև, երկրորդը տարածաշրջանի հյուսիս-արևելքում առաջացած նոր քաղաքական իրադրությունն էր: 1978թ. ապրիլի 27-ին Ալժանտանում հեղափոխությունը իշխանության գլուխ բերեց պրոսիրիդային ուժերին, ապա Իրանում տապալվեց ամերիկամետ շահական վարչակազմը: Այս ամենին ավելացած անգլոսական և երվկական

հեղափոխությունների հաղթանակը: Դա ստիպում էին ԱՄՆ-ին ավելի ռազմակազմակերպել իր քաղաքականությունը Սերժավոր Արևելքում: Տեսականորեն առաջ քաշվեցին «անկախություն պահող» կոնցեպցիան և պաշտպանության միմիտոր Բրաունի ռազմական գոկտրինան, որի համաձայն ԱՄՆ-ը պետք է պատրաստ լիներ ցանկացած պահի մղելու լրիվ պատերազմ եվրոպայում և կես պատերազմ երրորդ աշխարհում: Վերանայելով իր քաղաքականության մեթոդները կապված Իրանը կորցնելու համաճարմանի հետ, ԱՄՆ-ը 1979թ. առաջ քաշեց Քարտերի գոկտրինան, որը մասնավորապես ասում էր. «Դրսի ուժերի կողմից ցանկացած փորձ հասնելու վերահսկողության Պարսից ծոցի վրա, կզճահատվի որպես հարձակում ԱՄՆ-ի կենսական շահերի վրա և կհակադարձվի ցանկացած միջոցներով»:¹⁵²

Արաբ-իսրայելական բանակցությունների 4-րդ փուլը ընթացավ 1992թ. փետրվարի 24-ից- մարտի 4-ը ընկած ժամանակահատվածում 4-շինգտոնում: Այս փուլում արաբական երկրները առաջարկեցին ընտրություններ անցկացնել արևմտյան ափում և Ղազայում: Իսրայելը մերժեց դա և բանակցությունները նորից մտան փակուղի: Սիայն ԱՄՆ-ի Սիրիայի, Լիբանանի կողմից Իսրայելի դեմ կազմակերպված դիվանդակական դեմարշերից հետո բանակցությունները վերսկսվեցին: Համաձայնություն կայացվեց, որ բանակցող աշխատանքային խմբերի հետագա հանդիպումները տեղի են ունենալու Բեյզիայում՝ (տնտեսական զարգացման հարցերի շուրջ), Ճապոնիայում՝ (շրջակա միջավայրի պահպանման հարցերի շուրջ), 4-շինգտոնում՝ (տարածաշրջանային անվտանգության և ռազմական վերահսկողության հարցերի շուրջ), Կանադայում՝ (փախստականների հարցի շուրջ), և Թուրքիայում կամ Մեկտիայում՝ (ջրային ռեսուրսների օգտագործման հարցերի շուրջ):¹⁹⁴

Առանձնակի հետաքրքրության է արժանի բանակցությունների 5-րդ փուլը, որը տեղի ունեցավ դարձյալ 4-շինգտոնում 1992թ. մարտի վերջին: Սիրիական պատվիրակությունը առաջին անգամ հնարավոր համարեց ընդունել Իսրայելի դիրքորոշումը: Կողմերը բողոքեցին 242-րդ բանակցի շուրջ անվերջ քննարկումները և սկսեցին քննարկել տարածաշրջանային անվտանգության հարցեր:¹⁹⁵

Այս բանակցի յուրաքանչյուր բառ տարիներով քննարկվել է Իսրայելի և Սիրիայի կողմից, բայց այս անգամ կողմերը զտան «համընկած շրջանակներ», որի շուրջ կարող էին համաձայնության գալ փոխադարձ անվտանգության ապահովման շուրջ: Իսրայելական պատվիրակությունը ներկայացրեց իր առաջարկությունները պաղեստինյան կողմին արևմտյան ափում և Ղազայում պաղեստինցիների համար ընտրություններ անցկացնելու շուրջ: Չնայած պաղեստինցիները հրապարակապես ընձադատեցին իսրայելական առաջարկությունը, բայց ԱՄՆ-ի պետքարտուղարության խորհրդով ամեն կերպ իսրայելական էին դրանք լրիվ մերժելուց: Հորդանանյան պատվիրակությանը, սակայն ամենից շատ այս խուսափում էին դրանք լրիվ մերժելուց: Հորդանանյան պատվիրակությանը, սակայն ամենից շատ այս փուլում հուզում էր ջրային հարցը: Չնայած առանցքային հարցերի շուրջ կողմերի տեսակետերի բևեռացմանը բանակցությունները ցույց էին տալիս, որ կողմերը հավանա էին համագործակցության: «Կարծես թե վերջացել է այն ժամանակները, երբ որևէ կողմ մտածում էր միայն իր կարծիքի շուրջ: Այժմ

զմվարությունը նոր հանդիպման պայմանավորվածություն ձեռք բերելու մեջ է: Իսրայելի կառավարությունը ուզում է նոր ընտրությունների նախօրեին ցույց տալ, որ հասել է առաջընթացի, իսկ արաբները ուզում են Լիկուդի հեռացումը:

ԱՄՆ-ի համար, որ այս երկու տարին մեծ ջանքեր է բախել բանակցությունները կենդանի պահելու համար, դրանց շարունակումը առավել քան կարևոր է:¹⁹⁵

Բանակցությունների 6-րդ փուլում, որը տեղի ունեցավ 1992թ. օգոստոսի 24-ից մինչև սեպտեմբերի 14-ը ընկած ժամանակահատվածում, Սիբիան և Իսրայելը հասան նշարելի առաջընթացի: Առաջին անգամ Իսրայելը խոսեց զոլազան Բարձունցներից իր զորքերի մասնակի դուրսբերման հնարավորության շուրջ: Իսրայելական կողմի դիրքորոշման մեղմացումը ինչ-որ չափով կապված էր նաև այն հանգամանքի հետ, որ 1992թ. հունիսյան ընտրությունների ժամանակ Լիկուդը կուսակցությունը կորցրեց պառլամենտական մեծամասնությունը և Աշխատանքի կուսակցության ղեկավար Ռաբինը, որը հայտնի էր համեմատաբար մեղմ դիրքորոշմամբ, կազմավորեց նոր կառավարություն:

Բանակցությունների 7-րդ փուլում, 1992թ. հոկտեմբերին Իսրայելը կրկնեց իր պատրաստակամությունը Գոլաններից իսրայելական զորքերի դուրսբերման շուրջ, բայց միաժամանակ հասկացրեց, որ չի նախապատրաստվում հանձնել սրառեզիակա կարևոր հենակետերը: Իր հերթին պաղեստինյան պատվիրակությունը կոչ արեց համանման դուրսբերման արևմտյան ափից, Ղազայից և Երուսաղեմից: Բանակցությունների ընթացքում նկատվում էր, որ պաղեստինյան պատվիրակությունը ձգտում է ազատվել Գորդանանի հովանավորությունից և հանդես գալ որպես ինքնուրույն կողմ:

1992թ. դեկտեմբերին, բանակցությունների 8-րդ փուլում, պաղեստինցիները ուղարկեցին ավելի փոքր կազմով պատվիրակություն, այդ կերպ բողոքելով, որ Իսրայելի առաջարկությունները ինքնավարության վերաբերյալ: Բանակցությունները ընդհատվեցին այն բանից հետո, երբ 6 իսրայելցի զինվորներ սպանվեցին պաղեստինցի ծայրահեղականի կողմից: Պրան հետևեց 415 պաղեստինցիների արտուրմը հարավային Լիբանան ղեկավարների 17-ին: Այն ժամանակվոր դադար առաջերեք բանակցային գործընթացում: Ըստ իսրայելական պաշտոնյաների, արտվածները Գամաաի անդամներ էին: Գոլանյան Իսրայելի Գերագույն դատարանը հայտարարեց, որ արտուրմը եղել է տեղին: Այնուամենայնիվ, Իսրայելի ղեկավարությունը հայտարարեց, որ արտուրմների կրույատրվի վերադառնալ իրենց տեղերը մեկ տարվա ընթացքում:

Բանակցությունների 9-րդ փուլը սկսվեց հուսալի նոտայով: Այն տևեց ապրիլի 27-ից- մայիսի 13-ը: Իսրայելը համաձայնվեց 30 պաղեստինցիների հայրենադարձմանը, ինչպես նաև 1992թ. դեկտեմբերին հարավային Լիբանան արտուրմը որոշ պաղեստինցիների վերադարձին:

ԱՄՆ-ը բանակցությունների 10-րդ փուլում, 1993թ. մայիս 15-հունիս-1, առաջարկեց¹⁹⁶ պաղեստինյան պատվիրակությանը առանձնապես հորդակա փորձանայան պատվիրակությունից և հանդես գալ առանձին: Այս առանձնացումը ձեռնարկ էր նաև Իսրայելին և վերջինս համաձայնեց, որ առանձնացված պաղեստինյան պատվիրակության ղեկավար դառնա արևելյան Երուսաղեմում ՊՄԿ-ի կարևոր ակտիվիստ Ֆայալ Գուսեյնը: ԱՄՆ-ը գտնում էր, որ բաժանելով հորդանան-պաղեստինյան պատվիրակությունը հնարավոր կլինի ավելի շուտ հասնել համաձայնության: Իր հերթին ՊՄԿ-ը զնալով փոխադարձ զիջման օգոստոսի 26-ին հայտարարեց, որ ինքը կզան գաղտնի բանակցությունների Իսրայելի հետ մասնակի ինքնավարության շուրջ: Իսկ Իսրայելի արտգործնախարար Պերեսը հայտարարեց իր կառավարությանը, որ կհասնի համաձայնագրի կըքման ՊՄԿ-ի հետ, Ղազայում և Երիթրվում ինքնավարություն հաստատելու շուրջ:

Փաստորեն Սադրիդի գործընթացը ավարտվեց: Ճիշտ է, որևէ պայմանագրի չկնքվեց, բայց առաջին անգամ հակամարտող կողմերը նստեցին բանակցությունների սեղանի շուրջ, առաջին անգամ միջազգային համաժողովին մասնակցեցին պաղեստինցիները և ամենակարևորը առաջին անգամ կողմերը համաձայնվեցին շարունակել բանակցությունները երկու զուգահեռ ուղղություններով՝ իսրայելա-պաղեստինյան և իսրայելա-արաբական:

Սադրիդի գործընթացի տրամադրանական շարունակությունը հանդիսացավ Օսլոյն: Այստեղ, 1993թ. սեպտեմբերի 9-ին, Իսրայելը և ՊՄԿ-ը հայտարարեցին փոխադրոնաբար միմյանց ճանաչելու մասին: Գաբորդ օրը Լոսվեգիայի արտգործնախարար Յոհան Յորգեն Գուսթի միջոցով Արաֆաթը համապատասխան նամակ ուղարկեց Ռաբինին, որից հետո Ռաբինը ստորագրեց ՊՄԿ-ի ճանաչման վերաբերյալ փաստաթուղթը:¹⁹⁷

Գուսթի միջոցով պատրաստվեց գաղտնի համաձայնագրի տեքստը: Քլինթոնը Օսլոյի համաձայնությունները որակեց, որպես ճակատային հանդուգն ներդրում: Ես հայտարարեց.

«Այսօր նշարվում է հույսի շողացող պահ Մերձավոր Արևելքի ժողովուրդների համար: ԱՄՆ-ը կշարունակի երաշխավորել խաղաղության գործընթացի ուղղակի կատարումը»:¹⁹⁸

Ֆրանսիայի նախագահ Ֆրանս Միտերանը և Մեծ Բրիտանիայի վարչապետ Ջոն Մեյջորը հավանություն տվեցին Իսրայել-ՊՄԿ փոխադարձ ճանաչմանը, բայց նշեցին, որ շատ բան է մնում անելու: Բելգիայի արտգործնախարար Վիլլի Բլանսը, Եվրոմիության նախագահության ներկայացուցիչը, հայտարարեց, որ անդիպալան կխորհրդակցի Եվրոմիության հետ ակտիվացնելու Եվրոմիության ներդրումները մերևավորելու նախադրյալ խաղաղության գործընթացի համար:

1993թ. սեպտեմբերի 13-ին Մերձավոր Արևելքի պատմության մեջ մոր էջ բացվեց: Իսրայելի արտգործնախարար Շիմոն Պերեսը և ՊՄԿ-ի գործկոմի անդամ Աբու Աբսալը վաշիզգտնում պաշտոնապես վավերացրին Օսլոյում ձեռք բերված համաձայնությունները: Գամաաիանցիները

ստորագրվեց Քիլթոնի, Բուլչի, Քարտերի և 3.000 հյուրերի ներկայությամբ: Ուրհիմը և Արաֆարը միմյանց ձեռք սեղմեցին: Համաձայնագիր կնքվեց նույն սեղանի վրա, որտեղ 15 տարի առաջ ստորագրվել էր Քենփ-Դևիդի համաձայնագիրը:¹⁹⁹ Համաձայնագիրը կրում էր հետևյալ վերնագիրը՝ «Հռչակագիր ժամանակավոր ինքնավարության սկզբունքների մասին»:²⁰⁰

Համաձայնագրի նախաբանում ասվում էր.« Իսրայելի կառավարությունը և ՊԱԿ-ը համաձայն են, որ ժամանակն է վերջ դնել հակամարտության և առճակատման տանամայակներին, ճանաչել միմյանց բարդաբանական իրավունքները և ջանալ ապրել խաղաղ համագոյակցության մեջ հասնելու համար վերջնական և համապատասխան խաղաղության պայմանագրի և պատմական ելաշտության համաձայնեցված բաղաբանական գործընթացի միջոցով»:²⁰¹

Համաձայնագիրը բաղկացած էր 12 հոդվածներից, որոնցից առավել կարևորները ներկայացնում ենք ստորև

Հոդված 1. Բանակցությունների նպատակը

Իսրայել-պաղեստինյան բանակցությունների նպատակն է ի թիվս այլ հարցերի ազդարարել անցյունային փուլի վերաբերյալ, որը չպետք է տևի 5 տարուց ավելի, ժամանակավոր պաղեստինյան ինքնակառավարվող իշխանության ստեղծման մասին ի դեմս ընտրովի Ազգային Խորհրդի, առաջնորդվելով ՄԱԿ-ի Մխ-ի 242 և 338 -րդ բանաձևերի վրա: Սա նշանակում էր, որ ժամանակավոր կարգավորումը պետք է դառնա մաքուր խաղաղության գործընթացի անբաժան մասը և բանակցությունները վերջնական կարգավիճակի շուրջ պետք է առաջնորդվեն 242 և 338-րդ բանաձևերի ի կատար ածումով:

Հոդված 3-րդ. Ընտրություններ

Որպեսզի պաղեստինյան ժողովուրդը արևմտյան ափում կարողանա կառավարել, դեմոկրատական սկզբունքներին համաձայն, ջաղաբանական ազատ ընտրությունները պետք է իրագործի Ազգային Խորհուրդը միջազգային վերահսկողության և դիտորդերի առկայության պայմաններում, իսկ պաղեստինյան ռոստիկանությունը պետք է երաշխավորի հասարակական կարգուկանոնը: Ընտրությունները պետք է նախատեսվեն ոչ ուշ քան տույն հռչակագրի ուժի մեջ մտնելուց 9 ամիս հետո: Ընտրությունները հանդիսանալու են նախապատրաստական աստիճան իրագործելու պաղեստինյան ժողովրդի օրինական պահանջներն ու իրավունքները: Այն պաղեստինցիները, որոնք սպորում են երուսաղեմում իրավունք ունեն մասնակցելու ընտրություններին: Ընտրությունների վերաբերյալ համաձայնությունները պետք է պարունակեն տեղեկություններ դրանց կարգի, նախընտրական քարտչության և օտարերկրյա դիտորդների մասին :

Հոդված 4-րդ. Իրավասություններ

Ընտրված Խորհրդի իրավասությունները տարածվելու են արմտյան ափի և Դազայի վրա՝ բացառությամբ այն տարածքների, որոնց կարգավիճակը որոշվելու է վերջնական կարգավիճակի շուրջ բանակցությունների ժամանակ: Սա նշանակում է, որ Խորհրդի իրավասությունները չեն տարածվում երուսաղեմի, ռազմական շրջանների, իրեական բնակիչների և նորակառույցների վրա: Երկու կողմերը հաստատում են, որ արևմտյան ափը և Դազան տարածքային մեկ միություն են, որոնց ինտեգրացիան պետք է պահպանվի ժամանակավոր փուլի ընթացքում:

Հոդված 5-րդ. Անցումային փուլը և բանակցությունները վերջնական կարգավիճակի շուրջ

5-ամյա անցումային փուլը սկսվում է Դազայի հատվածից և երիթովի շրջանից իսրայելական զորքերի դուրսբերումով: Բանակցությունները վերջնական կարգավիճակի շուրջ պետք է սկսվեն հենց, որ հնարավոր լինի, բայց ոչ ուշ քան անցումային փուլի 3-րդ տարում: Բանակցությունները պետք է լուծեն հետևյալ հարցերը՝ երուսաղեմի կարգավիճակը, պաղեստինցի փախստականների ապազան. ապահովության հարցերը, սահմանները, հարաբերությունները հարևան երկրների հետ և մանաբերության այլ հարցեր, որոնք ներկայացնում են երկկողմանի հատաքրքրություն: Վերջնական կարգավիճակի վերաբերյալ բանակցությունները չպետք է վնասեն այն համաձայնագրերին, որոնք կկնքվեն ժամանակավոր փուլում:

Հոդված 6-րդ. Իշխանության և պատասխանատվության փոխանցման նախապատրաստություններ

Սկզբունքների վերաբերյալ հռչակագրի ուժի մեջ մտնելուց և Դազայի ու երիթովի շրջաններից իսրայելական զորքերի դուրսբերումից անմիջապես հետո, պաղեստինյան Խորհրդին, Դազայի և երիթովի միջև տնտեսական շարժում և զարգացում ապահովելու համար, հետևյալ ոլորտներում կտրվի իշխանություն 1. կրթություն և մշակույթ. 2. առողջապահություն և սոցիալական ապահովություն, 3. տրանզիի հարկաբանություն և տուրիզմ: Միաժամանակ պաղեստինյան կողմը պետք է սկսի պաղեստինյան ոստիկանական ուժերի ստեղծման գործընթացը: Խորհրդի ձևավորումից և գործունեություն սկսելուց հետո կողմերը կարող են բանակցել լրացուցիչ իրավասությունների և պատասխանատվությունների փոխանցման շուրջ: Պաղեստինյան կողմը պետք է Իսրայելին հանդրդի բոլոր այն պաղեստինցիների անունները, որոնք, համաձայն սկզբունքների հռչակագրի, պետք է ստանձնեն իշխանություն: Վերոիշյալ բնագավառներից յուրաքանչյուրը շարունակելու է ստանալ գոյություն ունեցող բյուջետային հատկացումները համաձայն փոխադարձ պայմանավորվածության: Սկզբունքների հռչակագրի ի կատար ածման հիմքի վրա իսրայելական և պաղեստինյան պատվիրակները անհապաղ սկսելու են բանակցություններ իշխանության փոխանցման մանրամասն ծրագրի շուրջ:

Հոդված 7-րդ. Ժամանակավոր համաձայնագիր

Իսրայելական և պաղեստինյան պատվիրակությունները պետք է շարունակեն բանակցությունները և կնքեն համաձայնագրեր ժամանակավոր փուլում: Ժամանակավոր համաձայնագրերը ի քիվա այլոց պետք է արտահայտեն պաղեստինյան խորհրդի կառուցվածքը և կարգադրա անդամների թվաքանակը: Իսրայելի կողմից որոշ իրավասությունների փոխանցման կարգը: Այն պետք է ցույց տա խորհրդի գործադիր օրենսդրության և դատական իշխանության գործունեության կարգը: Որպեսզի հնարավորություն տրվի խորհրդին նպատակ տնտեսական աճին խորհրդի պաշտոնական բազման ժամանակ կիսյադարարվի որոշ վարչությունների գործունեության մասին այդ թվում էներգետիկայի վարչության Դազայի նախահանգստի, Պաղեստինի զարգացման բանկի, արտահանման վարչության, բացառաբար միջավայրի պաշտպանության, հողային վարչության գործունեության մասին: Խորհրդի շրջումից հետո իսրայելական ռազմական վարչությունը պետք է հետամաքայց դա չի նշանակում, որ այն դադարեցնելու է իրականացնել իշխանության այն ֆունկցիաները, որոնք չեն փոխանցվել խորհրդին:

Չողված 8-րդ. Հասարակական կարգուկանոն և ապահովություն
Արևմտյան ափի և Դազայի հասարակական կարգուկանոնը և ներքին անվտանգությունը երաշխավորելու համար, խորհուրդը պետք է ստեղծի ուժեղ ոստիկանություն, իսկ Իսրայելը շարունակելու է պատասխանատվություն կրել արտաքին անվտանգության համար: Իսրայելը շարունակելու է պատասխանատվություն կրել նաև իսրայելցիների անվտանգության և ներքին կարգուկանոնի ապահովության համար:

Չողված 9-րդ. Օրենքների և ռազմական հրամաններ
Խորհուրդը իրավունք ունի օրենքներ սահմանել ժամանակավոր պայմանագրերին համաձայն: Կողմերը իրավունք ունեն վերանայել այն օրենքները և հրամանները, որոնք գոյություն ունեն ներկայումս:

Չողված 10-րդ. Իսրայելի պաղեստինյան կապերի միացյալ կոմիտե
Որպեսզի սկզբունքների հռչակագրի և ժամանակավոր փուլում կնքված համաձայնագրերի իրականացումը հարթ անցնի, մինչև սկզբունքների հռչակագրի իրագործման ժամկետի լրանալը պետք է ստեղծվի իսրայելա-պաղեստինյան կապերի միացյալ կոմիտե համակարգելու համար ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցերը: Յուրաքանչյուր կողմ ունենալու է հավասար անդամներ միացյալ կոմիտեում: Սկզբունքների հռչակագրի ուժի մեջ մտնելուց հետո պետք է ստեղծվի նաև տնտեսական համագործակցության կոմիտե:

Չողված 12-րդ. Կապ և համագործակցություն Չորդանանի և Եգիպտոսի հետ
Կողմերը այցելելու են Չորդանան և Եգիպտոս համագործակցելու վերջիններիս հետ: Ստեղծվելու է նաև կոմիտե, որը որոշելու է 1967թ. արևմտյան ափից և Դազայից տեղահանված բնակիչների վերադարձի պայմանները և չափը:

Չողված 13-րդ. Իսրայելական զորքերի դուրսբերում
Սկզբունքների հռչակագրի ուժի մեջ մտնելուց հետո, և ոչ ուշ, քան խորհրդի ընտրությունների նախաշեմին պետք է տեղի ունենա իսրայելական զորքերի դուրսբերում արևմտյան ափի և Դազայի նախատեսված շրջաններից: Հռչակագրի ուժի մեջ մտնելուց 2 ամիս հետո կողմերը պետք է պայմանագիր կնքեն Դազայից և Երիթովից իսրայելական զորքերի դուրսբերման մասին: Հետագա դուրսբերումները պետք է ի կատար ածվեն աստիճանաբար և պաղեստինյան աստիճանության կողմից այդ տարածքների պատասխանատվության ստանձման և ներքին կարգուկանոնի ապահովման հետ համատեղ: Իսրայելը իրագործելու է կարգավորված և արագացված դուրսբերում Դազայից և Երիթովից, որը սկսվելու է անմիջապես Դազա-Երիթովի համաձայնագրի ստորագրումից հետո և պետք է իրագործվի դրա ստորագրումից ոչ ուշ, քան 4 ամիս հետո: Կնքվելից այդ համաձայնագիրը ներառելու է նաև Իսրայելի ռազմական և քաղաքացիական վարչության կողմից իշխանության փոխանցման պայմանները, պաղեստինյան իշխանության կառուցվածքը, իրավունքները և պարտավորությունները, պաղեստինյան ստիկանության կառուցվածքը և ֆունկցիաները, կոմիտեների և ենթակոմիտեների ստեղծումը, ապահովության հարցերը: Այդ համաձայնագրով նախատեսվելու է, որ պաղեստինյան հիմնական գրասենյակները տեղաբաշխվելու են Դազայում, քաղաքային մասեր հարցերով զբաղվողների, որոնք կարող են տեղաբաշխվել նաև Երիթովում: Կնքվելից համաձայնագիրը պետք է պահպանի Դազայի և Երիթովի արևմտյան ափի և Դազայի անբաժան մասը լինելու պարագան և Իսրայելի իրավունքները շարունակելու զբաղվել արտաքին անվտանգության հարցերով:

Չողված 15 Բանակիների քննարկումներ
Այն վեճերը, որոնք կառուցման սկզբունքների հռչակագրի և հետագա համաձայնագրերի շրջանակներից դուրս, պետք է լուծվեն միացյալ կոմիտեի կողմից: Այն վեճերը, որոնք չեն կարող լուծվել բանակցությունների միջոցով, պետք է լուծվեն հաշտեցման այնպիսի մեխանիզմով, որը ընդունելի կլինի 2 կողմերին: Եթե այս դեպքում էլ հարցերը լուծում չգտնեն կողմերը կարող են ստեղծել արբիտրաժային կոմիտե:

Չողված 16-րդ. Համագործակցություն տարածաշրջանային ծրագրերի շուրջ
Կողմերը համագործակցելու են տարածաշրջանային զարգացման ծրագրերի շուրջ, որոնք ունենալու են 2 ենթաբաժիններ՝ արևմտաֆյան զարգացման ծրագրեր արևմտյան ափի և Դազայի համար և Բ/տարածաշրջանային զարգացման ծրագրեր: Սրանք ներառելու են՝ ա/ սոցիալական զարգացման ծրագրեր, մասեր և միջին բիզնեսի զարգացման ծրագրեր, մարդկային ռեսուրսների արդյունավետ օգտագործման ծրագրեր:

բ/ Մերձավորարևելյան զարգացման ֆոնդի և մերձավորարևելյան զարգացման բանկի ստեղծում:
գ/ Իսրայել-հորդանանա-պաղեստինյան կոմիտեի ստեղծում, որը կորիզակազմելու է Մեռյալ ծովի շրջանի շահագործումը, ինչպես նաև Միջերկրական ծով/Ղազա/Մեռյալ ծով ջրանցքի կառուցման հարցերը:
դ/ Տարածաշրջանային ջրային, գյուղատնտեսական, էներգոտեսուրսների օգտագործման, տուրիզմի, կապի և հաղորդակցության զարգացման ծրագրեր:

Օսլոյի համաձայնագիրը նոր հեռանկարներ բացեց իսրայելա-պաղեստինյան հետազա համագործակցության և խորացման համար:

1994թ. ապրիլի 29-ին Փարիզում ՊԱԿ-ի և Իսրայելի միջև կնքվեց տնտեսական հարաբերությունների վերաբերյալ համաձայնագիր, որի առանցքը հանդիսացավ Մերձավոր Արևելքում չափազանց մեծ կարևորություն ունեցող ջրային ռեսուրսների /արևմտյան ափ և Ղազա/ օգտագործման հարցը:²⁰² Էներգետիկայի բնագավառում համագործակցությունը ապահովելու էր զգալի և նավթի արդյունահանումը Ղազայում և Նեգեվում և դրանց երկուստեք շահագործումը: Համաձայնագիրը նախատեսում էր նաև ազատ առևտրական գոտիների ստեղծում:

1994թ. մայիսի 4-ին Կահիրեում կնքվեց համաձայնագիր ՊԱԿ-ի և Իսրայելի միջև, որը նախատեսում էր իսրայելական զորքերի դուրսբերում Ղազայի և Երիթովի շրջաններից:²⁰³ Իսկ մինչև 1999թ. մայիսի 4-ը որոշվելու էր Պաղեստինի վերջնական կարգավիճակի և անկախության հարցը: Օսլոյի համաձայնագիրը հնարավորություն տվեց նաև 1994թ. հուլիսին Իսրայելի և Հորդանանի միջև կնքել խաղաղության համաձայնագիր և վերջ տալ երկու երկրների միջև պատերազմական վիճակին:²⁰⁴ Երկար տարիների բացակայությունից հետո Առաջաքը վերադարձավ Պաղեստին, ինչը անշուշտ հնարավորություն տվեց նրան անմիջականորեն ղեկավարել պաղեստինցիների պայքարը:

1994թ. օգոստոսի 24-ին էրեք վայրում Իսրայելի և ՊԱԿ-ի միջև կնքվեց իշխանության փոխանցման վերաբերյալ համաձայնագիր, որը հնարավորություն տվեց ՊԱԿ-ին ստանձնելու իրական իշխանություն:²⁰⁵

ԵՎ վերջապես 1995թ. սեպտեմբերի 24-ին Վաշինգտոնում կնքվեց այսպես կոչված Օսլոյի 2-րդ համաձայնագիրը, ըստ որի իսրայելական զորքերը դուրս բերվեցին արևմտյան ափի 6 բաղաբերից և 400 գյուղերից:²⁰⁶ Պաղեստինյան ազգային խորհրդի ընտրությունները ճշանակվեցին 1996թ. հունվարին և նշված ժամկետում էլ տեղի ունեցան:

Ինչպես տեսնում ենք այս ամերը կատարվում էր 1993թ. Օսլոյի համաձայնագրի հիման վրա: Ցայսօր չի իրականացված համաձայնագրի միայն մեկ կետը, այն է՝ 1999թ. մայիսի 4-ին պաղեստինյան անկախ պետություն հռչակելու հարցը:

2. Ամերիկյան դիվանագիտությունը և արաբա-իսրայելական նոր համաձայնագրերը:

Օսլոյի համաձայնագիրը կարևոր դեր ունեցավ արաբա-իսրայելական հակամարտության հատազա կարգավորման գործում : Գիշտ է, դրա իրականացումը դաշար սահմանափակվում էր միայն Ղազայում և Երիթովի շրջանով, բայց 45-ամյա հակամարտության կարգավորման գործում նրա դերը եղավ լայն: Սեր կարծիքով Օսլոյի համաձայնագիրը հնարավորություն տվեց հետագայում կնքել նոր համաձայնագրեր, որոնք փոքր, բայց իրական բայելի դարձան հակամարտության կարգավորումը շարունակելու գործում: Անշուշտ, խաղաղության գործընթացը հարթ չէր ընթանում և եղան բազմաթիվ ուրջ խոչընդոտներ արդեն իսկ ձեռք բերված համաձայնությունների ճանապարհին: Խաղաղության գործընթացը բազում անգամներ կանգնեց փակուղու առջև: Մտաքին այդպիսի վտանգը ներկայացավ 1994թ. սկզբին: Ամերիկայում ծնված հրեա վերաբնակիչ Բարուչ Գոլդսթեյնը Չեքոսլովակիայում կրակ բացեց մզկիթում և նրա շուրջ հավաքված ամբոխի վրա սպանելով 29 և վիրավորելով 150 մարդ: Սզկիք էին եկել 400 հավատացյալներ մասնակցելու սրբազան Ռամադան ամսի առավոտյան աղոթքին: Չեքոսլովակիայում մասն է ամբողջական մի կառույցի, որի մյուս մասը ծառայում է հրեաներին և համարվում է, որ ունի 4.000 տարավ պատմություն: Ըստ ավանդության այստեղ են Արախանի և Ստալայի գերեզմանները: Ազկիք երկար ժամանակ կրոնական կռիվների վրա է այժմ այս իրադարձությունները խառնաշփոթություն առաջացրին Չեքոսլովակիայում և նորից ուղքի հանեցին արաբական բնակչությանը: Թվում էր, թե նորից սկսվելու է ինքնիշխանի ժամանակները: Պաղեստինցիները առաջ բաշեցին Իսրայելի և արաբական երկրների միջև բանակցությունների շարունակված հնարավորության հարցը:

Սակայն, բարեխախտաբար, Չեքոսլովակիայի մզկիթի կոտորածը, ինչպես սպսում էին շատերը, չկանգնեցրեց խաղաղության գործընթացը: Այդ գործընթացը պարզապես տեղափոխություն ապրեց կարճ ժամանակով, որպեսզի հետագայում ավելի մեծ թափով առաջ ընթանա: Հարցը կայանում էր նրանում, որ ամերիկյան դիվանագիտությունը խաղաղարարի վրա էր դրել իր հեղինակությունը և այժմ պատրաստ էր ցանկացած գնով շահել: Ենշուժը բանակցող կողմերի վրա ավելի էր ուժեղացել: Սակայն խաղաղության գործընթացի շարունակվումը բացատրելի միայն ամերիկյան դիվանագիտության ցանկությանը և ճնշմամբ, որ այժմ կարծիքով այնքան էլ ճիշտ չէ լինի: Եվ Իսրայելի և ՊԱԿ-ի ղեկավարները հասկանում էին, որ մեր արդեն շատ դժվար է կանգնեցնել գործընթացը: Ինչ-որ տեղ նրանք չէին ուզում նաև զրկվել այն արդյունքներից, որոնք ձեռք էին բերել տարիներ տևած դժվարին բանակցությունների ընթացքում: Արտաքնապես կողմերը ընդարարում էին միմյանց դեմ ուղղված րոնությունները սպառնալով բանակցային գործընթացի դադարեցումով, սակայն դա արդեն ավելի շուտ դարձել էր ավանդական և «ծխական» երևույթ: Արախաքը, ինչքան էլ արաբափելի լիներ մզկիթի կոտորածը, չէր պատրաստվում դրա համար հրաժարվել խաղաղության բանակցություններից: Հարցին նույն կերպ էր մոտենում նաև

Ութբիհի կառավարությունը: Դրա լավագույն օրինակն է 1995թ. հունվարի 23-ի դեպքերը, երբ 2 պաղեստինյան զինվածներ սպանեցին 19 և վիրավորեցին 60 իսրայելցու: Այնուամենայնիվ Ռաբինը հայտարարեց, որ չի դադարեցնելու բանակցությունները պաղեստինցիների հետ:²⁰⁷ Կողմերի այս դիրքորոշումները բնականաբար խիստ բանադատվում էին երկու կողմերի ծայրահեղականների կողմից: Վերջիններս քիչ անախորժություն չպատճառեցին իրենց սեփական կառավարությունների:

Ամերիկյան դիվանագիտությունը դիմեց խորամանկ, բայց արդարացված քայլի: Ամանաբնույթ քայլեր ԱՄՆ-ի կառավարությունը կիրառեց հաս հետագա բանակցությունների ընթացքում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ստեղծված իրադրությունը ստիպում էր ՊԱԿ-ի ղեկավարներին ժամանակ առ ժամանակ հայտարարել բանակցություններից հրաժարվելու մասին, ամերիկյան դիվանագիտությունը որոշեց կողմնորոշ բանակցելու բեղել տնտեսական հարցերի ընթացքում հողի վրա, այդպիսով խուսափելով ավելորդ լարվածություն առաջ բերելուց, բայց միաժամանակ հուսալով, որ տնտեսական հարցերի բննարկումներից հետո կողմերը կվերադառնան հիմնական խնդրին: Մենք կտեսնենք, որ հենց այդպես է եղավ: Խիստ մեծ էր Օսլոյի արդյունքներից զրկվելու վախը:

1994թ. ապրիլի 29-ին, Փարիզի կարախի կառավարությունը և ՊԱԿ-ը ստորագրեցին «Տնտեսական հարաբերությունների մասին» համաձայնագիրը:²⁰⁸ Արժանագրությունում ասվում էր, որ համաձայնագիրը կոչված է ուժեղացնելու պաղեստինցիների տնտեսական բազան և սեփական զորագանջման ծրագիրը: Կողմերը պաշտոնապես ճանաչեցին միմյանց իրավունքները տնտեսական կապեր ունենալու այլ շուկաների հետ: Պաղեստինյան կողմին իրավունք տրվեց հարկեր գանձել 1 տարի՝ չի չափով տեղական արտադրություն և ունեցող մթերքներից, ընդ որում արտադրված երկու կողմերի ներկայացուցիչների կողմից իրենց կողմից վերահսկվող տարածքներում:²⁰⁹ Պաղեստինյան կողմը իրավունք ստացավ պաղեստինցիների կողմից արտահանվող ապրանքների վրա դնել հարկեր՝ առավելագույնը այդ ապրանքի 15-16 տոկոսի չափով և Պաղեստինյան կողմը իրավունք ստացավ հավասար իրավունքներով օգտվել Իսրայելին պատկանող առևտրի տարածքի կետերից: Այս ամենը դիմաց իսրայելական կողմը պահանջեց, որ իսրայելական նոր շենկետը լինի պաղեստինյան շրջանում շրջանառության մեջ դրված դրամական միջոցներից մեկը և օրինականորեն ծառայի ցանկացած վճարումների համար: Համաձայնագիրը բավականին արտոնություններ էր տալիս պաղեստինցիներին, գոօրինակ «Իսրայելը և պաղեստինյան իշխանությունները կարող են ամկախ մնել մյուսից որոշել և կարգավորել հարկային քաղաքականությունը ուղղակի հարկադրման միջոցով ներառյալ հարկերի գանձումը անհատների և կազմակերպություններից: Յուրաքանչյուր կողմի հարկային տեսչությունը իրավունք է ունենալու գանձել ուղղակի հարկեր: Կողմերը փորձեր են ձեռնարկելու պահպանելու համար աշխատուժի բնակարան տեղաշարժը: Յուրաքանչյուր կողմ իրավունք ուի ժամանակ առ ժամանակ որոշելու աշխատուժի տեղաշարժի մասին: Կողմերը և պայմանները: Եթե բնակարան տեղաշարժը ժամանակավորապես դադարեցվի որևէ կողմից, ապա այդ կողմը մյուսին պետք է անհապաղ ծանուցագիր ուղարկի այդ մասին, իսկ հակառակ կողմը իրավունք ունի պահանջելու, որ հարցը բննարկվի միացյալ տնտեսական կոմիտեի կողմից: Մի կողմի աշխատուժի օգտագործումը մյուս կողմի ծառայողական ընկերությունների միջոցով, պետք է լինի համապատասխան աշխատանքային օրենսդրության»:

Ինչպես տեսնում ենք, համաձայնագիրը բավականին ծեռնուտ էր պաղեստինյան կողմին: Խայծը զգված էր: Այժմ պաղեստինյան կողմը չէր էլ մտածում Գերբոհի մզկիթի կոտորածի և բանակցությունների դադարեցման մասին: Մեկ ամիս անց 1994թ. մայիսի 4-ին, ԱՄՆ-ը կողմերին իրավիճակը Կախիբե բանակցությունները շարունակելու համար: Այստեղ նախատեսվում էր կնքել 1993թ. սեպտեմբերին վաշինգտոնում ստորագրված «Սկզբունքների հռչակագիր» վերջնական տարբերակը: Նոր համաձայնագիրը, որը կոչվում էր «Դազա-Երիթովի ինքնավարության մասին», ընդունված է անվանել ՄԱԿ-ի 242 և 338-րդ բանաձևերի իրագործումից: Համաձայնագրի կնքմանը ներկա էին 2.500 հյուրեր, ինչպես նաև ԱՄՆ-ի, Ռուսաստանի և ճապոնիայի ներկայացուցիչները: Չնայած մասնագետները գտնում էին, որ համաձայնագրի կարևոր կետերը դեռ կարիք ունեին մշակման, կապված էրիթովի դատական իրավասությունների հետ, այնուամենայնիվ կողմերը ստորագրեցին այն: Իսրայելի կողմից համաձայնագիրը ստորագրեց վարչապետ Ռաբինը, իսկ ՊԱԿ-ի կողմից Արաբաթը: Համաձայնագրի նախարանը հաստատում էր այն փաստը, որ երբևիցե ինչ էլ որ համաձայնագրից, ապա այն պետք է լինեցին ՄԱԿ-ի 242 և 338-րդ բանաձևերի իրագործումից: Համաձայնագիրը պարունակում էր 23 հոդվածներ: Համաձայնագիրը նախատեսում էր Ղազայի հատվածը և Երիթովի շրջանը ուրվագծել քարտեզների վրա: Իսրայելը պարտավորվում էր իրականացնել իր գործերի արագ և կարգավորված դուրսբերում համաձայնագրի կնքումից երեք շաբաթ հետո: Դազա-Երիթովին արտաքին անվտանգությունը և հրեական բնակավայրերի ներքին կարգապահումը ապահովելու համար Իսրայելը կարող էր պահել որոշակի քանակությամբ զինված ուժեր: Պաղեստինյան իշխանությունը, որը բաղկացած էր լինելու 24 անդամներից, պատասխանատվություն էր կրելու գործադիր և օրենսդիր իշխանության համար և նրա կարասնյակները տեղաբաշխվելու էին միայն Ղազայում և Երիթովում: Պաղեստինյան իշխանությունը կարգավորելու էր այն հարցերը, որոնք ենթակա են նրա տարածքային, ֆինանսական և իրավաբանական իրավասությունների: Տարածքային իրավասությունները տարածվում են Ղազայի և Երիթովի վրա իրավասություններից: Տարածքային իրավասությունները տարածվում են Ղազայի և Երիթովի վրա բացառությամբ ռազմական շրջանների և հրեական բնակավայրերի: Պաղեստինյան իշխանությունը կարող էր կարգավորել արդարադատությունը անկախ դատական օրգանների միջոցով, ընդունել և հրապարակել օրենքներ, ստեղծել ոստիկանություն և հսկել դրա գործունեությունը:

Համաձայն Սկզբունքների Յոչակագրի, պաղեստինյան իշխանությունը իրավասություններ չունեի արտաքին քաղաքականության բնագավառում և ըստ այդմ իրավունք չունի ստեղծելու դեսպանատներ և հյուպատոսություններ, ինչպես նաև իրավունք չունի դրանց ստեղծումը թույլ տալու Ղազայում և Երիթրվում: Եւ կարող էր տարբ պետությունների հետ պայմանագրեր կնքել միայն տնտեսական և տարածաշրջանային զարգացման, կրթական, գիտական և մշակութային ծրագրերի վերաբերյալ: Համաձայնագիրը ստորագրելու պես Իսրայելը պարտավորվում էր ազատ արձակել 5.000 պաղեստինցի քանտարակյանների և այդ ամենը անելու է 5 շաբաթա ընթացքում, որոնք կարող էին վերադառնալ իրենց տները Արևմտյան ափի և Ղազայի ցամաքացած վայրում: Համաձայնագրի իրականացումը ապահովելու համար, ամերիկյան կողմի պահանջով, համաձայնագրի 21-րդ հոդվածում ավելացվեցին ժամանակավոր միջազգային ներկայությունն ապահովելու ենթակետերը:²¹⁰

400 ներկայացուցիչներ 6 ամիս ժամանակով գործելու էր հետևյալ քաղաքներում և գյուղերում Ղազա, Խան Յունիս, Ռաֆահ, Դեր էլ Բալահ, Ջարախա, Աբսան, Բեյթ Հանուն, Երիթով: Ամերիկյան դիվանագիտությունը միաժամանակ շեշտում էր այն հանգամանքը, որ արևմտյան ափը և Ղազան ինտեգրված միասնական տարածք են:

Կահիրեի համաձայնագիրը, ինչպես ասվեց, կարիք ուներ որոշ մշակման և ճշգրտումների: Պաղեստինցիներին իշխանության և իրավասությունների փոխանցման մասին վերջնական համաձայնագիրը կնքվեց նույն թվականի օգոստոսին: Սակայն մինչ այդ տեղի ունեցան այլ կարևոր իրադարձություններ:

Ամերիկյան դիվանագիտությունը իր պատմությունը հարստացրեց Իսրայելի և մեկ այլ արաբական երկրի միջև կնքած հեթոթական սեպարատ պայմանագրով: Այս անգամ Իսրայելի հետ խաղաղության պայմանագիր կնքեց Գորդանանը: 1994թ. հուլիսին Իսրայելի վարչապետ Ռաբինը և Գորդանանի քազավոր Հուսեյնը կնքեցին խաղաղության պայմանագիր պաշտոնապես վերջ տալով 46-ամյա հակամարտությանը:²¹¹ Համաձայնագիրը կնքվեց ԱՄՆ-ում, Սպիտակ տանը ԱՄՆ-ի նախագահ Բիլքլնթոնի ներկայությամբ: Գորդանանի կողմից համաձայնագրի ստորագրումը պատահական չէր: Գազանից չէր, որ Գորդանանը միշտ եղել է ԱՄՆ-ի հավատարիմ դաշնակից տարածաշրջանում: Նրա ղեկավարների վարած պահպանողական քաղաքականությունը զնահատվել էր ԱՄՆ-ի կողմից, որը ժամանակին Գորդանանին զույգ էր տվել որոշակի ռազմական օգնություն: Սակայն Ճոզի պատերազմի ժամանակ Գորդանանը ցույց էր պրոիդաբյան դիրքորոշում, որը վաշինգտոնում այնքան էլ լավ չընդունվեց: Այժմ, երբ կնքվել էին Օսլոյի և Կահիրեի համաձայնագրերը, Գորդանանը չէր ուզում ճորից լարվածություն առաջ բերել ԱՄՆ-ի հետ հարաբերություններում: Բաջի դրանից Գորդանանը ցանկանում էր վերջնականապես ճշտել ջրային ակունքներից օգտվելու հարցը: Ռեսիտ ամերիկյան առաջարկությունը Իսրայելի հետ կնքել հաշտություն, Գորդանանը ընդունեց զոհուճակությամբ: Հոկտեմբերին պայմանագիրը վավերացվեց:

Կնքված համաձայնագրերը հնարավորություն տվեցին Արաֆաթին 33 տարուց հետո լեզակ կերպով վերադառնալ Պաղեստին: Դա տեղի ունեցավ 1994թ. հուլիսի 1-ին: Մինչ այդ Իսրայելի իշխանությունները կամխում էին նրա մուտքը Պաղեստին, որպես թշնամու և ահաբեկիչ: Արաֆաթը առաջին այցելեց Ղազա, ուր նրան ողջունեց 200.000 ամերիկյ: Այժմ նա կարող էր հարկ եղած դեպքում տեղում և մոտակից ղեկավարել պաղեստինցիների պայքարը:²¹²

1994թ. օգոստոսի 24-ին Իսրայելի կառավարության կողմից Դեննի Ռոտշիլդը, իսկ ՊԱԿ-ի կողմից դոկտոր Լաբի Հասաիը Էրեցում ստորագրեցին նոր համաձայնագիր: Այն կոչվում էր « Համաձայնագիր իշխանության և պատասխանատվության փոխանցման նախապատաստության մասին»:²¹³ Համաձայնագրով ավելի ճշտվեցին այն իրավասությունները, որոնք Իսրայելը պատրաստվում էր փոխանցել պաղեստինցիներին: Առաջին անգամ Ղազա-Երիթովի պաղեստինյան իշխանության համար սահմանվեց 6-ամսյա բյուջե 54.58 միլիոն դոլարի չափով: Վերջնականապես ճշտվեց Իսրայելի կողմից իշխանության փոխանցման շրջանակները: Նախատեսվում էր նույնիսկ կրթության և մշակույթի բնագավառում իշխանության փոխանցումների իրականացումը սկսել օգոստոսի 29-ից: Իշխանության փոխանցման օրվանից Իսրայելը փոխանցելու է նաև քաղաքացիական վարչության ամբողջ շարժական և անշարժ գույքը:

Փոխանցված գրասենյակների պատասխանատվությունը, նրա գործունեության և աշխատակազմին աշխատավարձով ապահովելու պատասխանատվությունը դրվելու է պաղեստինյան իշխանությունների վրա: Այն հարցերը, որոնք չեն մտնում պաղեստինյան իշխանության ոլորտի մեջ, վերջինս կարող է համաձայնեցնել Իսրայելի քաղաքացիական վարչության հետ: Իսրայելի ռազմական և քաղաքացիական վարչությունները իրականացնելով իրենց իշխանությունը ավտոբ և հաշվի առնեն պաղեստինյան իշխանության շահերը և անեն հնարավոր ամեն ինչ վերադնելու վերջինիս առաջ ծնալցած ոչվարությունները: Պաղեստինյան իշխանությունը քայլեր է ձեռնարկելու, որպեսզի կանխի պաղեստինցիների ռազմական ակտիվությունը Իսրայելում և իր հերթին հնարավոր ամեն ինչ անելու է իրեն ենթակա տարածքներում կարգ ու կանոնի պահպանման համար: Ճշտում մտցվեց նաև պաղեստինյան իշխանության օրենսդրական լիազորությունների մեջ: Ըստ Կահիրեի համաձայնագրի պաղեստինյան իշխանությունը իրավունք ուներ իրապարակել օրենսդրություն:²¹⁴

30 օրվա ընթացքում Իսրայելի կողմից բողոք չտեսնելու դեպքում օրենսդրությունը մտնելու էր ուժի մեջ: Պաղեստինյան իշխանությունը կարող է լիազորել քաղաքացիական հսկիչներին, որպեսզի վերջիններս հետևեն օրենքների կատարմանը: Այս հսկիչները գործելու են առանձին-առանձին յուրաքանչյուր

ուղորտում, չեն կրելու գեներ և համազգեստ, սակայն իրավունք ունեն ստուգելու փաստաթղթեր: Իսրայելի ռազմական և քաղաքացիական վարչությունը պաղեստինյան իշխանությանը լրիվ տեղեկատվություն են տալու յուրաքանչյուր ուղորտի համար նախատեսված բյուջեի շուրջ: Պաղեստինյան իշխանությունը հրապարակելու է իր եկամուտները, որոնք առաջացել են ուղղակի հարկման միջոցով: Եթե ուղորտների իսկական եկամուտի աղբյուրը, ներառյալ գործընթացի հատկացումները գերազանցում են բյուջեն, ապա այդ ավելցուկը պետք է օգտագործվի բացառապես այդ ուղորտի գաղափարի համար:

Թվում է թե համաձայնագրի միանշանակ ամրապնդում է Ղազանի և Երիզրում պաղեստինցիների ինքնավարությունը, սակայն համաձայնագրի 13-րդ հոդվածը նախատեսում է. « Երկու կողմերը գտնում են, որ արևմտյան ափը և Ղազան միասնական և անբաժան տարածքային միություն են և այդ հանգամանքը պետք պահպանվի ժամանակավոր փուլում: Ղազան և Երիզրը արևմտյան ափի անբաժան մասն են և նրանց կարգավիճակը չի փոխվելու ժամանակավոր փուլի ընթացքում»:²¹⁵

Փաստորեն սա նշանակում է, որ 5 տարվա ընթացքում պաղեստինյան իշխանությունը իրավունք չունի այս տարածքներում հռչակել նախախույր: Այնուամենայնիվ իրավացի լինելու համար պետք է ասենք, որ իսրայել-պաղեստինյան հակամարտությունում կատարվել էր զգալի տեղաշարժ: Դա չէր կարող չգծհաստվել միջազգային համընթաց կողմից: 1994թ. հոկտեմբերի 14-ին Օսլոյի նրբեյան մրցանակի կանոններ խաղաղության մրցանակ շնորհից Իսրայելի վարչապետ Ռաբինին, արտգործնախարար Հիմն Պերեսին և ՊԱԿ-ի նախագահ Յասեր Արաֆաթին:

Սակայն, այդուհանդերձ խաղաղության գործընթացը չէր ընթանում: Նա ուներ հատկապես, որոնք հանդիսանում էին երկու կողմերի ծայրահեղ բևեռի ներկայացուցիչները: Դեռ Կաիրից համաձայնագրի ստորագրումից հետո Իրես և պաղեստինցի ծայրահեղականները սպառնացել էին դրա իրականացման լրիվ կանխումը: Նորից սկսվեցին ահաբեկչությունները այս անգամ իսլամիստ անձնասպանների կողմից: 1995թ. հունվարի 23-ին երկու իսլամ անձնասպաններ ռուսներ պայթեցրեցին ավտոբուսի կանգառում, Թե Ալիվից հյուսիս, Նեբանյաի մոտ:

Ահաբեկչական այդ գործողության զոհ դարձան 19 և վիրավորվեցին 60 հրեա: Գործողության պատասխանատվությունը վերցրեց «Իսլամական Չիհադ» կազմակերպությունը:

Մինչև 1994թ. ապրիլը եղել էին մնա՞ 6 ղեկավար, որի ժամանակ իսլամական ահաբեկիչները սպանել էին 54 և վիրավորել 200 մարդ: Դա արվել էր խանգարելու հաջող բանակցությունները Իսրայելի և պաղեստինցիների միջև: Չնայած Իսրայելի նախագահ Պեզզանը դատապարտելով այդ գործողությունները, կոչ արեց դադարեցնել բանակցությունները ՊԱԿ-ի հետ, բայց վարչապետ Ռաբինը որոշեց շարունակել այն: Իրադրությունը նորից դարձավ խիստ լարված: ԱՄՆ-ի համաձայնությանը փետրվարի 2-ին, Եգիպտոսի նախաձեռնությամբ, հրավիրվեց տարածաշրջանային ժողով Կաիրիում: ՊԱԿ-ի, Իսրայելի և Գորդանի մասնակցությամբ: 6-ժամյա բանակցություններից հետո նրա մասնակիցները որոշում ընդունեցին ակտիվացնել ջանքերը խաղաղության համար, մերժեցին քաղաքական բռնությունները և որի արժեքն ավելացնել միջազգային ներկայության դերը Պաղեստինում:

Սակայն ահաբեկչությունը ոչ միայն չդադարեց, այլև գնալով ավելի էր սաստկանում: 1995թ. ապրիլի 9-ին երկու իսլամական ռազմական խմբեր ռուսներ պայթեցրին Ղազայում սպանելով 8 և վիրավորելով 45 մարդու: Այս ահաբեկչական գործողությունը ընթացավ երկու փուլով: Առաջին հարձակումն ժամանակ, որը եղավ 4 քիմիկատի մոտ, Ղազայից հարավ-արևմուտք, սպանվեցին 7 զինվորներ և մեկ մեծերիկյան զբոսաշրջիկ: Վիրավորվեցին 40 մարդ: Երկրորդ հարձակումը եղավ դրանից 2 ժամ անց Նեբեթրիմում, որը առաջին պայթյունի վայրից հեռու էր ընդամենը 6 մղոն: Այս անգամ անձնասպանը ռուսը նետեց իսրայելական պահակախմբի վրա: Ահաբեկչական գործողությունների համար պատասխանատվությունը իրենց վրա վերցրին Դամաս և Չիհադ կազմակերպությունները:

Իսրայելի կառավարությունը յուրօրինակ ձևով պատասխանեց ահաբեկչությանը: Նա հայտարարեց արևելյան Երուսաղեմում հիմնականում պաղեստինցիներին պատկանող 130 ակն հողի կոնֆիսկացիայի մասին: Կառավարությունը իր որոշումը պատճառաբանում էր նրանով, որ այդ հողերի պատկանելության հարցը անորոշ է: Կառավարությունը հայտարարեց, որ հողերի թմբադրվումը արվում է հոգուտ հասարակական կարիքների և նպատակ ունի այն ավելի արդյունավետ օգտագործել: Առաջարկվեց նոր քաղաքական կարգավիճակ տալ Իրես վերաբնակիչներին: «Գողերի թմբադրված ստեղծումը կարելի է անել միայն Իսրայելի գերազույն դատաբանում, բայց ստեղծված իրավիճակում պաղեստինցիները երբեք չեն համաձայնվի դա անել»:

Խնդիրը նորոգյա չէ, հարցը կայանում է նրանում, որ Ռաբինը եթե, նույնիսկ նա դեմ էր հրեական բնակավայրերի ընդարձակմանը, ապա Երուսաղեմի հարցում նա անդրդվելի էր գտնելով, որ այն Իսրայելի անբաժան մայրաքաղաքն է: 1967թ. պատարազմից հետո Երուսաղեմը բավականին ընդարձակվել է: Ռաբինի նպատակներին մասը պետք է պարզապես գոյատևի, իսկ Իրեսական մասը պետք է քաղաքը կամ մուսուլմանական մասը պետք է պարզապես գոյատևի, իսկ Իրեսական մասը պետք է ընդարձակվի և լինի արաբներից զերծ: Նրա նպատակն էր արևելյան Երուսաղեմի Իրես բնակչությունը դարձնել մեծամասնություն: Միաժամանակ Amnesty International կազմակերպությունը հայտարարում էր, որ «Պաղեստինում նկատվում էին մարդու իրավունքների խախտում ինչպես Իսրայելի, այնպես էլ ՊԱԿ-ի կողմից: «Մեկ տարվա ընթացքում ՊԱԿ-ի անվտանգության ուժերը սպանել են 16 պաղեստինցի: 100-ավոր մարդիկ ձերբակալվել և դատվել են առանց դատական արդյունքի և պաշտոնական հարցաքննության: Իր ինքնից Իսրայելը 1994թ. մայիսից սկսած ձերբակալել է 6.000 պաղեստինցի, որոնց 30-140 օր արգելվել է շվիկել իրենց ընտանիքի անդամների և իրենց փաստաբանների հետ»:²¹⁶

Իսրայելի գործողությունները դժգոհություն առաջացրին նաև Գորդանանում: Վերջինիս պառլամենտը սպառնաց ճնշում գործադրել իր երկրի կառավարության վրա վերջ դնելու ոչ միայն իրենց մասնակցությանը խաղաղության գործընթացին, այլև դադարեցնելու իսրայելա-հորդանանյան խաղաղության համաձայնագրի իրականացումը: Իսրայելի կառավարությունը ստիպված հայտարարեց, որ սառեցնում է արևելյան Երուսաղեմում հողերի բռնագրավման որոշումը, որը սակայն, մեծ դժգոհություն առաջացրեց Իսրայելի աբսոլյուտ մեծերի մեջ, որոնք ամբողջապես էին համարում այդ որոշումը կապված աճող «արաբական վտանգի հետ»: Դասակարգված, որ նման գործողությունները հարցականի տակ կարող են զնալ հաջորդ ընտրություններում իրենց հաղթանակի հնարավորությունները Ռաբիին հայտարարեց, որ միակ էլքը Սիրիայի հետ բանակցությունները վերսկսելն է և դրանք ստապալել: Ռաբիին հայտարարեց. «Մենք պատրաստ ենք դիմակայելու ամբողջ աշխարհին, Արաբական խաղաղին, ՄԱԿ-ին, բայց չենք կարող դիմագրավել Լիբանոսին և ընդդիմությանը: Մենք վաճառված չենք ՊԱԿ-ին, ինչպես պնդում են նրանք»:²¹⁷

Այս գործողություններից երեք ամիս անց 1995թ. հուլիսի 24-ին տեղի ունեցավ վերջին երեք ամիսների ընթացքում ամենախոշոր ահաբեկչական գործողությունը: Պաղեստինցի մի զինյալ ռուս պայթեցրեց ավտոբուսի մեջ, որը երթևեկում էր Թել-Ավիվի արվարձաններից մեկով: Սպանվեցին 6 և վիրավորվեցին 32 ուղևոր: Այս գործողությունները լցրեցին նույնիսկ Ռաբիին համբերության բաժակը: Նա հայտարարեց. «Մենք դատապարտում ենք հարձակումները և զուշացնում, որ մինչև ՊԱԿ-ը աշխատի վերջ տալ ռազմական խմբերի գործունեությանը Իսրայելը դեմ կլինի պաղեստինցիների ինքնավարության ընդարձակմանը»:²¹⁸

Այս վերջին ահաբեկչական ակտը կատարվեց այն ժամանակ, երբ ընթանում էին նոր իսրայելա-պաղեստինյան բանակցություններ ընդարձակելու պաղեստինցիների ինքնավարությունը արևմտյան ափում: 1995թ. հուլիսի 25-ին, այնուամենայնիվ, ձեռք բերվեց խախտու համաձայնագիր Իսրայելի և պաղեստինցիների միջև վերջիններիս ինքնավարությունը արևմտյան ափում ընդարձակելու շուրջ: Սակայն այս սահմանված համաձայնագիրը ոչ մի կոնկրետ տարածային հարց չէր շղջափում: Բայց համաձայնագիրը հիմք հանդիսացավ Վաշինգտոնում նոր բանակցություններ սկսելու համար:

1995թ. օգոստոսի 21-ին տեղի ունեցավ երկրորդ խոշոր ահաբեկչական գործողությունը: Պաղեստինցի զինյալը արևմտյան Երուսաղեմում հարձակվեց ավտոբուսի կանգառում կանգնած մարդկանց վրա սպանելով 5 և վիրավորելով 107 մարդու: Այս ակտը և դատապարտվեց Իսրայելի և այս անգամ նաև ՊԱԿ-ի առաջնորդների կողմից: Համաձայն բացահայտորեն հայտարարեց, որ դեմ է խաղաղության գործընթացին: Այս հայտարարությունից հետո իսրայելական իշխանությունները օգոստոսի 22-ը ձեռնարկվեցին Դամասկոսի 60 անդամների մեղադրելով նրանց հուլիսի 24-ի և օգոստոսի 21-ի պայթյունների համար: Միաժամանակ կառավարությունը նորակոչիկների և կամավորների վրա դրեց հրեական սինագոգների, դպրոցների և հասարակական այլ կառույցների պաշտպանությունը: Սակայն, որ այսպիսի կամավորական խմբերի ստեղծումը սկսվել էր դեռևս անցյալ տարվանից, երբ Լոնդոնի Կենսինգթոն վայրում գտնվող Իսրայելի դեսպանատան մոտ պայթյուն տեղի ունեցավ: Մայք Վայնը ապահովության կոմիտեի խոսնակը, հայտարարեց. «Խաբուրավոր կամավորներ վարժվում են և արդյունքում ցանկացած հրեական շենքի մոտ կլինեն ապահովության խմբեր»:²¹⁹

1995թ. սեպտեմբերի 24-ին եգիպտոսի Թաբա քաղաքում ընթացավ հուլիսի 25-ի համաձայնագրի քննարկման 2-րդ փուլը: Իսրայելական կառավարության և ՊԱԿ-ի ներկայացուցիչները համաձայնության եկան իսրայելական զորքերի հետագա դուրսբերման շուրջ: Պատասխանվեց համաձայնագրի տեքստը, որն էլ ընկավ Վաշինգտոնում կնքված նոր իսրայելա-պաղեստինյան պայմանագրի հիմքում: Մինչ այդ օգոստոսի 27-ին Կահիրեում ստորագրվել էր երկկողմ հայտարարագիր պաղեստինյան կողմին իշխանության հետագա փոխանցման մասին:

1995թ. սեպտեմբերի 28-ին Վաշինգտոնում ստորագրվեց «Ժամանակավոր իսրայելա-պաղեստինյան համաձայնագիր արևմտյան ափի և Դազալի վերաբերյալ»²²⁰, որը դիվանագիտական փաստաթղթերում նաև կոչվում է «Օսլոյի II համաձայնագիր»: Համաձայնագրի կնքմանը որպես վկաներ ներկա էին ՄԱԿ-ի, եգիպտոսի Արաբական Հանրապետության, Գորդանանի և Լորվեգիայի քաղաքական, եվրոմիության և Ռուսաստանի Դաշնության ներկայացուցիչները: Համաձայնագիրը նախատեսում էր իսրայելական զորքերի դուրսբերում արաբական 6 քաղաքներից և 400 գյուղերից և 1996թ. անցկացնել պաղեստինյան Լոռիորդի ընտրություններ, որը ունենալու էր օրենսդիր և գործադիր իշխանություն: Նախաբանում ասվում էր. «Համաձայն մերձավորարևելյան խաղաղության գործընթացի շրջանակների հաստատված Մադրիդում, կողմերը հաստատում են իրենց հավատարմությունը հավանարտությանը վերջ տալու գաղափարին: Կողմերը հավատարիմ են խաղաղ գոյակցության և փոխադարձ վստահության սկզբունքին: ճանաչում են միմյանց քաղաքական և օրինական իրավունքները, ճանաչում են պաղեստինյան խորհուրդը: Կողմերը համաձայն են, որ ժամանակավոր փուլը սկսվում է 1994թ. մայիսի 4-ին և այդ փուլը չպետք է գերազանցի 5 տարին: Կողմերը համաձայն են, որ վերջնական կարգավիճակի համար բանակցությունները պետք է սկսվեն հենց որ դա հնարավոր լինի, բայց ոչ ուշ քան 1996թ. մայիսի 4-ը: Կողմերը հաստատում են միմյանց փոխադարձ ճանաչումը»:²²¹

Օսլո 2-րդը մինչ այդ կնքված իսրայելա-պաղեստինյան համաձայնագրերից առավել կարևորն էր: Ճիշտ է, շրջադարձային է համարվում 1993թ. Օսլոյի 1-ին համաձայնագիրը, սակայն պաղեստինցիներին է կոնկրետ ինքնավարություն, փաստաթղթում նշված կոնկրետ տարածքների շրջանակներում, տալիս է 1995թ. Օսլոյի 2-րդ համաձայնագիրը: Այլ հարց է, թե որքանով է այն պաշտպանում պաղեստինցիների

շահերը և որքանով է հնարավոր դրա իրականացումը: Օսլո 2-րդ համաձայնագրի կարևորությունը մյուս կնքված համաձայնագրերի համեմատությամբ, մեր կարծիքով կայանում է նաև նրանում, որ այս համաձայնագիրը վերջնականապես որոշում է պաղեստինյան ևսրիորդի թվականը, ևսրիորդի գործունեության շրջանակները և բնույթը, պաղեստինյան ոստիկանության բվակները, ստեղծման կարգը և վերջնապես ավելացվում է պաղեստինցիներին հանձնվելիք տարածքները:²²² Համաձայնագիրը ուներ նաև լուրջ բերուկություններ: Հաշվի առնելով այս հանգամանքները նպատակահարմար ենք համարում ավելի հանգամանորեն անդադարեալ նրան և կատարել որոշ վերլուծություն:

Մինչև պաղեստինյան ևսրիորդի ընտրությունները, որոնք տեղի էին ունենալու 1996թ., պաղեստինցիները հանձն էին առնելու ամբողջ պատասխանատվությունը ներքին անվտանգության, մասարակական կարգավանոնի և բաղաբացիական վարչության համար 6 բաղաբներում և Գերրոնի մի մասում,(որը կոչվում էր շրջան A), ինչպես նաև ադմինիստրատիվ և հասարակական կարգուկանոնի համար B գոտում (Արևմտյան ափիգյուղերը): Դա նշանակում էր, որ պաղեստինցիները պատասխանատու էին վերոհիշյալի համար արևմտյան ափի 27 տոկոսում, որտեղ ապրում են պաղեստինյան բնակչության 98 տոկոսը: B գոտու վարչական պատասխանատվությունը մնում էր Իսրայելի վրա: Բացառապես իսրայելից է մնում պատասխանատվությունը C գոտու համար: Այդ գոտին սահմանված է որպես բնակավայրեր, ապահովության գոտիներ և հաղորդակցության ուղիներ: Իսրայելական զորքերի դուրսբերումը նախատեսված է փուլերով: Դուրսբերման առաջին փուլը կապված է A և B գոտու հետ և պետք է ավարտվեր պաղեստինյան ևսրիորդի ընտրություններից 22 օր առաջ: Հետագա դուրսբերումը ծրագրավորված էր C գոտու համար և պետք է տեղի ունենար ևսրիորդի բացումից հետո, 18 ամսվա ընթացքում: Այն լինելու էր 3 փուլերով: Եթե ամեն ինչ ընթանար ծրագրին համապատասխանապա վերջնական կարգավիճակի համար համաձայնագիրը պետք է կնքվեր դարավերջին և այդ դեպքում պաղեստինցիները որոշակի իրավասություններ կունենային ամբողջ արևմտյան ափի վրա,բացառությամբ ռազմական գոտիների, բնակավայրերի և Արևելյան Երուսաղեմի / արևմտյան ափի մոտ 90 տոկոս:²²³

Քարտեզները մանրամասնելով A B C գոտիների դիրքերը՝ բարձրացնում են այնքան շատ հարցեր,որքան Վաշինգտոնում կնքված տեքստն է: A շրջանի քաղաքները լայնորեն բաժանված են մեկը մյուսից: Քալբուխյան և Գերրոնը լիովին շրջապատված են C շրջանով: Այս քաղաքները մասամբ են սահմանակից B գոտու գյուղերին,այսինքն պաղեստինցիների կողմից վերահսկվող տարածքին: C գոտին շրջապատում է նաև ևարուխի,Բեթլեհեմի և Ումալախի մեր մասը,որոնք նույնպես հանձնված են պաղեստինցիներին:

B գոտին, որտեղ պաղեստինցիներին առաջարկվում է ինքնակառավարում, բացառությամբ ապահովության հարցերի և արտաքին հարաբերությունների, բաժանված է մոտ 20 միլյանց հետ սահմաններ չունեցող շրջանների: Գտնոք էլ իրենց հերթին բաժանված են 80 մանր հողակտորների, որոնք բոլորը շրջապատված են C գոտու հողերով: Այդ մասնատված գոտիները միմյանցից անջատված են նաև արևելք-արևմուտք ճանապարհով, որը միմյանց կապում է արևմտյան ափը, Իսրայելը և Դորդանանը: Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ ճանապարհների հսկողությունը դրված էր Իսրայելի վրա, ապա պարզ կլինի պաղեստինյան տարածքների միմյանցից կտրված լինելու աստիճանը: Համաձայնագիրը չի պարունակում հրեական բնակավայրերի կառուցման, ոչ մի արգելք պաղեստինյան աշխատավորների առաջ սահմանների փակման, որը սպանիչ է պաղեստինյան տնտեսության համար, ոչ մի երաշխիք իսրայելական զորքերի դուրսբերման ժամկետացանկի պահպանման հարցում: Ճիշտ է, համաձայնագիրը նախատեսում է ստեղծել իսրայելա-պաղեստինյան միացյալ կոմիտեներ քաղաքացիական հարաբերությունների, կոորդինացման և համագործակցության, տարածաշրջանային հարաբերությունների, փոխադարձ անվտանգության, կապի, ջրային, տնտեսական, այնուամենայնիվ, միացյալ կոմիտեները հնարավորություն են տալիս Իսրայելին տեղյակ լինել իրադարձությունների ընթացքին և վետո դնել որևէ բանի վրա, որը իրեն ձեռնուող չէ: Փաստորեն ոչ մի հարցում բաժանում չի նախատեսված: Օրինակ, ընտրությունների վերաբերյալ փաստաթղթի 2-րդ հավելվածի 28-րդ հոդվածի համաձայն, «Պաղեստինյան կողմը պետք է Իսրայելին տեղեկացնի ցանկացած փոփոխության մասին կապված բնակչության գրանցման և բնակչի բնակության վայրի փոփոխության հետ»:²²⁴ Պաղեստինյան իշխանությունները կարող են մշտական բնակություն շնորհել ներդրողներին, անուանական զույգերին և երեխաներին, բայց միայն Իսրայելի իշխանությունների նախնական հավանությունից հետո: Փաստորեն պաղեստինցիները կատարելու են վարչական աշխատանքը, իսկ Իսրայելը հսկելու է այն: Այս համաձայնագիրը օրինակամացում է մեկուսացման համակարգը, որը ուղվազովել էր դեռևս Կաիրին համաձայնագրով: Պաղեստինցիները և վերոհիշյալ տարածքներում ապրող 130.000 հրեա բնակիչները, չհաշված արևելյան Երուսաղեմի շրջակայքի բնակիչները, համագոյակցելու են սոցիալական մեկուսացման և անհավասարության պայմաններում: Օսլո 2-րդ պապիտում է վերահսկողության մեկուսացված և դուալիստական սիտուս: Իսրայելը ունենալու է օրինական իրավասություններ արևմտյան ափում ապրող հրեաների նկատմամբ նույնիսկ եթե նրանք հանցանք են կատարում ինքնավարության ափում ապրող հրեաների նկատմամբ: Իսրայելը ունենալու է օրինական իրավասություններ արևմտյան ափում ապրող հրեաների նկատմամբ: Պաղեստինյան ոստիկանության նախնական կասեցման կետերը կարող են դիմել իսրայելական իշխանություններին միայն տվյալ անձի ինքնությունը հաստատելու համար, իսկ փնտրել կամ ձերբակալել նրանց պաղեստինյան ոստիկանությունը իրավունք չունի:

«Եթե հրեան հանցանք է գործում ինքնավարության տարածքում պաղեստինյան ոստիկանությունը մինչև իսրայելական ռազմական ուժերի ժամանումը կարող է կասկածայալին պահել տեղում ապահովելով նրա պաշտպանությունը»:²²⁵

Պաղեստինյան անվտանգության ուժերը իրավունք չունեն կանգնեցնելու իսրայելական զինվորներին կամ հարցնել նրանց փաստաթղթերը: Հրեա բնակիչները և նրանց այցելուները կարող են ճանապարհորդել իրենց 140 բնակավայրերի միջև ցամաքային ճանապարհով առանց սահմանափակումների, ի տարբերություն պաղեստինցիների: Այդ մասին պարզորոշ ասվում է 11-րդ հոդվածի առաջին հավելվածում:

Վաշինգտոնյան համաձայնագիրը նախատեսում է նաև պաղեստինյան ոստիկանության քվակազմը: Ոստիկանությունը կազմակերպվելու է 6 խմբերով և ունենալու է 30 000 աշխատողներ: Համաձայնագիրը մանրամասնում է որտեղ պետք է դրանք տեղակայվեն, ինչ գեներ պետք է օգտագործեն, ինչ ճանապարհներ և երթուղիներ պետք է վերահսկեն իսրայելական զինվորականների հետ և ինչպես պետք է երկու կողմերը համագործակցեն ահաբեկչությանը վերջ տալու համար:

Բայց երևու կողմերի դուրսերը ղեկավար է զեհատել հավասար: Պաղեստինյան անվտանգության ուժերը նույնիսկ իրավունք չունեն ազատորեն երթևեկել A գոտու այն քաղաքները և B գոտու գյուղերի միջև, որտեղ պաղեստինցիները ունենալու են 25 ոստիկանական կետեր: Ավելին, պաղեստինյան ոստիկանությունը իրավունք չունի ազատորեն երթևեկել B գոտու մի վայրից մյուսը: Արտակարգ տեղաշարժի զեպարտե նրանք պետք է առաջնորդվեն 13-րդ հոդվածի 2.4.5.6-րդ կետերով: «Պաղեստինյան ոստիկանության տեղաշարժը B գոտու վայրերից դուրս, որտեղ կան պահակակետեր, պետք է իրագործվի գործին առնչվող միացյալ մարզային կոմիտեի հետ կողորդիցնելուց և վախերացնելուց հետո: B գոտուց ամբողջական դուրսբերումից միայն 3 ամիս հետո կոմիտեն կարող է որոշել պաղեստինյան ոստիկանության շարժը B գոտու ոստիկանական կետերից դեպի B գոտու պաղեստինյան քաղաքներ և գյուղեր, այն էլ միայն այն ճանապարհով, որոնք օգտագործվում են բացառապես պաղեստինցիների կողմից: Շարժը լինելու է միայն կոմիտեի որոշումից հետո»:²²⁶

Փաստորեն այսպիսի շարժի ծրագրի կողմնակիցները և նախագծված ծրագիր, այդ թվում ոստիկանների թիվը, զենքերի տեսակը և քանակը, փոխադրամիջոցները: Այն ներառելու է նաև նախապատրաստությունների մանրամասներ երաշխավորելով շարունակվող կողորդիցնից համապատասխան հարդորակցման գծերի միջոցով, ներառյալ շարժի նպատակակետեր, երթուղի, տևողությունը:

Օսլո 2-րդ համաձայնագրի առաջին հոդվածի առաջին հավելվածում ասվում է. «Համաձայն արևմտյան ափի և Ղազայի տարածքային ինտեգրացիայի պահպանման սկզբունքի, որպես միասնական տարածքային ամբողջականություն, կողմերը իրագործելով համաձայնագրի կետերը պահպանվելու են բնական տեղաշարժ արևմտյան ափում, ինչպես նաև արևմտյան ափի և Ղազայի միջև»:²²⁷

